

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ
ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

Վանաձոր, Ս. Աստվածածին եկեղեցի

ՎԱՆԱՁՈՐ - 2001

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱԲ
ԳԵՐՇ. Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊՍ. ՉՈՒԼՋԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ՆՇԱՆ ԵՒ ՄԱՐԳՐԻՏ ԱԹԸՆԸՋԵԱՆՆԵՐԻ

ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՔՐԻՍՏՈՆԵՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐՕՆ ՀՈՉԱԿՄԱՆ 1700-ԱՄԵԱԿԻՆ

*Հանուն մատաղ սերնդի
հայեցի դաստիարակության
ու հոգևոր ամբողջականության
Հայ Եկեղեցին ոչինչ պետք չէ խնայի:*

ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋՅԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ռավանանքը Եկեղեցու հիմքն է, որից ծնվում է Եկեղեցու ճանաչողությունը: Առանց դավանանքի իմացության և ծիսարարողական կյանքին մասնակցության, գոյություն չունի ո՛չ ճշմարիտ անդամություն և ո՛չ իրական, Եկեղեցական կյանք: Ավելորդ է նշել, որ Եկեղեցական ներքին կյանքի խաթարումները, հիմնականում ծագել են թե մասնավորապես դավանանքի չիմացությունից և թե ընդհանրապես Եկեղեցին չճանաչելուց: Հարկ է նշել, որ դավանանքը կմնա սոսկ մեռած տառ կամ լավագույն դեպքում արվեստի, մտքի և փիլիսոփայական ձևակերպումների հիանալի դրսևորում, եթե այն կյանքի չկոչվի և կյանքի ընթացքը չշաղախվի նրա հետ, որպես կենցաղավարության և մտածողության չափանիշ:

Այս նպատակով է, որ Հայաստանյայց Եկեղեցին իր զավակներին ծանոթացնելու մտահոգությունից և նախանձախնդրությունից մղված, Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի ժրաջան առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը ձեռնամուխ է եղել սույն գրքի վերանայված հրատարակությանը: Այս փոքրիկ գրքույկի հիմքը՝ առաջին բաժինները, Բաբգեն կաթողիկոս Կյուլեսերյանի «Քրիստոնեական» է, որ վերահրատարակվել է 1994 թ. «Գանձասար» հրատարակչության կողմից, մեր կողմից կատարված հավելումներով և ուղղումներով: Գրքույկը բաղկացած է չորս բաժնից՝ ա) Եկեղեցի, բ) Խորհուրդներ,

գ) Բարեպաշտական արարողություններ, դ) Հավելված: Այս վերջին բաժինը Գուգարաց թեմի Քարոզչական Կենտրոնի կողմից տոների, աղոթքների և բարեպաշտական սովորույթների և դրանք կյանքի կոչելու նպատակով պատրաստված թերթոններ են, որոնք տպագրվել են զանազան առիթներով: Գրքույկը նպատակամիտված է Գուգարաց թեմի կիրակնօրյա և հանրակրթական դպրոցներում դասավանդվելու և մատաղ սերնդին Հայ Եկեղեցու դավանանքի և կյանքի մասին տարրական գիտելիքներ ջանքելուն: «Աստծու շնչով գրված ամեն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանության, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի կատարյալ լինի Աստծու մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ ՏԻՄ. Դ):

ԲԱԳՐԱՏ ԱԲՂ. ԳԱԼՍՅԱՆ
ՏԵՍՈՒՉ ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ.....	2
ՀՐԱՄԱՆԱԻ	2
ՆՇԱՆ ԵՒ ՄԱՐԳՐԻՏ ԱԹԸՆԸՁԵԱՆՆԵՐԻ	2
Ե Կ Ե Ղ Ե Ց Ի	6
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ	10
ԱՂՈԹՔ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ	12
ՅՈԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	15
Խ Ո Ր Հ ՈՒ Ր Դ Ն Ե Ր	17
ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ	18
ԴՐՈՇՄ	25
ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ	27
ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ (Ս. ՊԱՏԱՐԱԳ).....	30
ՊՍԱԿ	36
ԿԱՐԳ ԵՎ ՕԾՈՒՄՆ ՀԻՎԱՆԴԱՑ	41
ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ.....	43
ՀՈԳԵՎՈՐ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ	49
ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	49
ԽԱՉԱԿՆՔՎԵԼ.....	49
ՏՆՕՐՀՆԵՔ	51
ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ.....	52
ՄԱՏԱՂ	53
ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ	58
ՏՈՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	58
ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՏՈՆԵՐ	67
Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ.....	71
ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ.....	71
ԽԱՉԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ	74
ՏՈՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ.....	93
ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ	95
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ	97
ՎԱՐԴԱՆԱՆՔ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ.....	100
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԱՎԱՅՐ	103
ԽՐԱՏԱԿԱՆ ՊԱՅՔԻ ՄԱՍԻՆ	105
ԱՂԱՆԴ, ՀԵՐՁՎԱԾ ԵՒ ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ	

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

Ի՞նչ ես հասկանում եկեղեցի ասելով:

- Հասկանում եմ այն տեղը, որտեղ հավաքվում են հավատացյալները և աղոթում: Սրա համար է, որ եկեղեցին կոչվում է նաև աղոթքի տուն, աղոթավայր:

Ինչպե՞ս է սահմանում եկեղեցին Պողոս առաքյալը:

- Իր Տիմոթեոս աշակերտին նա գրում է. «Քեզ գրում եմ սա, քանզի հույս ունեն շուտով գալ: Իսկ եթե ուշանամ, որպեսզի գիտենաս, թե ինչպես պետք է շրջել Աստուծո տան մեջ, որ կենդանի Աստուծո եկեղեցին է՝ ճշմարտության սյունը և հաստատությունը [Ա Տիմոթ. Գ 14 -15]:

Ուրեմն, եկեղեցին միայն շենք չէ՞:

- Անշուշտ. եկեղեցի է նաև հավատացյալ ժողովուրդը, որովհետև մեր Տերն ասաց. «Ուր որ երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Իմ անունով, ես այնտեղ՝ նրանց մեջ եմ» [Մատթ. ԺԸ 20]: Սրա համար էլ սուրբ Սահակ հայրապետն այսպես է սահմանում եկեղեցին. «Աստուծո պատվիրանները մեզ չեն ասում, թե քարերից և փայտերից շինվածքն է եկեղեցին, այլ հաստատուն վեմի վրա հավատքով շինված մարդկային ցեղը: Ուրեմն, եկեղեցին ճշմարիտ հավատքն է, որ հավաքում է մեզ մեկտեղ՝ ճանաչելու համար Աստուծո Որդուն»: Նույն հայրապետը, շեշտելով անբիծ հավատքի կարևորությունը, ասում է. «Իսկապես այս է Քրիստոսի հավատացյալների մայր եկեղեցին: Միայն թե աներկմիտ պահենք այդ հավատքը, որով բանավոր և մտավոր եկեղեցի շինվեցինք առաքյալների և մարգարեների հիման վրա»:

Հավատամքի* մեջ ի՞նչ ստորոգելիներով կամ նշաններով է նկարագրված եկեղեցին:

- «Հաւատամք և ի մի միայն Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցի»: Այսինքն՝ քրիստոնեական եկեղեցին մի

* Հավատամք նշանակում է հավատում ենք: Այն արտասանվում է Սբ. պատարագի ժամանակ և եկեղեցու դավանանքի բանաձևում է:

է՝ այսինքն միութիւնն է, և այդ մի եկեղեցին Ընդհանրական է, Առաքելական և Սուրբ:

Կարո՞ղ ես բացատրել այդ ստորագելիների իմաստը:

- Այո՞. մի է Քրիստոս, հետևաբար մի է Քրիստոսի հավատացյալների հավատքը: Սրա համար մի է եկեղեցին, որ կազմված է աշխարհի բոլոր քրիստոնյա հավատացյալներից: Ուրիշ խոսքով, այլևայլ եկեղեցիներ չկան, և պետք չէ, որ լինեն, քանի որ մի է Քրիստոս, մի է հավատքը, և մի է այդ հավատքի վրա շինված եկեղեցին: Գրիգոր Տաթևացին ասում է. «Մի՛ կոչի եկեղեցի ոչ տեղեալ, այլ միով հաւատով և յուսով կոչմանն» («Գիրք հարցմանց», էջ 533): Եկեղեցին մի է կոչվում ոչ թէ տեղով, այլ միով հավատով և կոչման հույսով:

Այդ մի եկեղեցին Ընդհանրական է կամ Կաթողիկէ, այսինքն՝ այս աշխարհում սփռված քրիստոնեական եկեղեցին կազմվում է քրիստոնյա հավատացյալներից՝ առանց ցեղի և լեզվի խտրության:

Այդ մի և Ընդհանրական եկեղեցին Առաքելական է, որովհետև բոլոր առաքյալները Տեր Հիսուս Քրիստոսի հրամանով զնացին ամեն կողմ՝ քարոզելու բոլոր ազգերին, նրանց Ավետարանի աշակերտ դարձնելու և մկրտելու հանուն Հոր և Որդւի և Հոգւովն Սրբո:

Այդ մի, Ընդհանրական և Առաքելական եկեղեցին Սուրբ է, որովհետև Ինքը՝ Տեր Հիսուս Քրիստոս, սուրբ է. սուրբ է նաև հավատքը, որի վրա հիմնված է եկեղեցին:

Սուրբ Սահակ հայրապետն ասում է. «Մենք սովորեցինք սրան ասել Կաթողիկէ Առաքելական եկեղեցի, որովհետև ամբողջ աշխարհում Քրիստոսին հավատացողները եկեղեցի են՝ հորջորջվում՝ համաձայն առաքյալներին տրված տերունական հրամանի, թէ՛ «Գնացե՛ք բոլոր երկրները, աշակերտ դարձրե՛ք բոլոր հեթանոսներին, մկրտեցե՛ք նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով, սովորեցրե՛ք նրանց պահել, ինչ որ պատվիրեցի ձեզ» (Մովսէրք, Բ, էջ 100-105):

Ուրեմն, ինչո՞ւ այլևայլ եկեղեցիներ կան:

- Այլևայլ ասելով՝ պետք է հասկանալ ոչ թէ իրար հակառակ, այլ հարանուն եկեղեցիներ, որոնք ներկայացնում են քրիստոնեական մի եկեղեցին: Ուրիշ խոսքով, քրիստոնեա-

կան մի Եկեղեցին զանազան ճյուղավորումներ ունի՝ իբրև տրամաբանական հետևանք երկրների, միջավայրերի և լեզուների տարբերության:

Ուրեմն, իսկապես մի՞ են հարանուն Եկեղեցիները:

- Այո՛, Քրիստոսի Եկեղեցին մի է. սա անվիճելի է: Հարանուն Եկեղեցիներն էլ, լինելով հանդերձ մի Եկեղեցու մասերը կամ անդամները, յուրաքանչյուրն իր սեփական գծերն ունի, որոնք նվիրագործվել են դարերի ընթացքում (խոսքը աղանդավորների մասին չէ): Այս սեփական գծերը երկրորդական են Եկեղեցու և հավատքի միության սկզբունքի նկատմամբ:

Բայց չէ՞ որ այս երկրորդական կետերը վեճի և բաժանման տեղիք են տվել:

- Այո՛, սա պատմական իրականություն է, և շատ ցավալի է, որ Քրիստոսի մի Եկեղեցու մեջ տեղի են ունեցել վեճեր ու բաժանումներ. բայց իրականություն է նաև, որ նույն այդ վեճերն ու բաժանումներն են քրիստոնեության ծավալման պատճառ դարձել, որովհետև հարանվանությունները բազմացել և տարածվել են աշխարհի բոլոր կողմերում: Սրանից զատ, հարանուն Եկեղեցիներն ազգային նկարագիր են ստացել, և այդ կերպով էլ Քրիստոսի մի Եկեղեցին պահպանվել և բարգավաճել է աշխարհի տարբեր անկյուններում:

Հնարավոր չէ՞ր, որ այս բոլոր Եկեղեցիները համաձայնեին երկրորդական և երրորդական կետերում:

- Պատմական փորձառությունը ցույց է տվել, որ եթե ոչ անկարելի, ապա շատ դժվարին մի խնդիր է այդ: Իր զուտ կրոնական և հոգևոր բարձր սկզբունքներով Եկեղեցու միությունը հազիվ տևեց մինչև Ե դարի կեսը: Այնուհետև յուրաքանչյուր ազգի քաղաքական, հասարակական և այլ հանգամանքները, ինչպես նաև եպիսկոպոսների և իշխանների ազգային և անձնական փառասիրությունը պատճառ դարձան Եկեղեցու միության պառակտման և վեճերի ու անհամաձայնությունների շարունակության:

Սրանց վրա չպնդելու և հարանուն Եկեղեցիներում սեր ու միաբանություն հաստատելու համար սուրբ Օգոստինոսն

(354-430) ասել է. միություն՝ կարևոր բաներում, ազատություն՝ երկրորդականներում, սեր՝ ամեն ինչում:

Ուրեմն, որո՞նք են այն կարևոր կետերը, որոնցով միություն է հաստատվում հարանուն Եկեղեցիների միջև:

- Այն բոլոր կետերը, որ բանաձևված են Հավատամքում: Այս կետերից ոմանց մասին տրված դավանաբանական ուրույն բացատրությունները, ինչպես նաև ծեսերի և վարչական կամ նվիրապետական դրության տարբերություններն են, որ Եկեղեցիների միջև բաժանություն են առաջացրել:

Սերը, որ լրումն է բոլոր օրենքների, ցանկալի է, որ տիրի բոլոր հարանուն Եկեղեցիների միջև և ամեն օր զորանա Քրիստոսի Եկեղեցուն, որպեսզի իրագործվի մի Հովվի և մի հոտի տեսիլքը [տես Հովի. Ժ 16]:

Ինչպիսի՞ն պետք է լինի մեր դիրքը հարանուն Եկեղեցիների հանդեպ:

- Կատարելապես հարգալից: Քրիստոնեական ոգուն բոլորովին հակառակ է այս կամ այն Եկեղեցին արհամարհելը՝ այնպես կարծելով, թե միայն իրենց Եկեղեցին է ճշմարիտը: Հարանուն Եկեղեցիների անդամները հավատացյալի իրենց կյանքով պիտի ցույց տան, թե իրենց Եկեղեցիներն ինչ հաջողութեամբ են դաստիարակել իրենց ժողովրդին Հիսուս Քրիստոսի Ավետարանի ոգով և առաքելական շնչով: Այսուհանդերձ, յուրաքանչյուր մարդ, հարգելով հանդերձ ուրիշ Եկեղեցիները, պարտավոր է ամեն զնով հավատարիմ մնալ իր ազգային Եկեղեցուն: Եվ որպես հավատացյալ իր հավատարմությունը պիտի ցույց տա իր կյանքով և աշխատի իր Եկեղեցու բարեկարգության ու պայծառության համար բոլոր միջոցներով և զոհողություններով, որչափ ներում են իր բարոյական և նյութական կարողությունները:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ

Ի՞նչ է նշանակում Հայաստանյայց Եկեղեցի:

- Հայաստանյայց Եկեղեցի նշանակում է հայաստանցիների Եկեղեցի, այսինքն՝ հայ ազգի կամ հայ ժողովրդի Եկեղեցի: Ահա թե ինչու կոչվում է նաև Հայոց Եկեղեցի, Հայ Եկեղեցի կամ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի, քանի որ հիմնադրվել է առաքյալների կողմից :

Ի՞նչ է նշանակում մայր Եկեղեցի:

- Հայաստանյայց Եկեղեցին իր ժողովրդի հոգևոր մայրն է, և ժողովուրդն էլ նրա հոգևոր զավակն է: Որովհետև Մկրտությունը ժողովուրդը հոգևորապես ծնվում է նրա ժոցից, նրանից ստանում իր հոգևոր սնունդը և պաշտպանվում նրա հովանու տակ ընդդեմ իր հավատքի և բարոյականի թշնամիների: Այս պատճառով ասվում է մայր Եկեղեցի:

Հայ ժողովուրդը որչա՞փ է սիրում իր մայր Եկեղեցին:

- Սկզբից ի վեր հայ ժողովուրդը ջերմորեն սիրել է իր մայր Եկեղեցին՝ նրա համար զոհելով իր ամենաթանկ բաները և, եթե հարկ է եղել, անգամ իր կյանքը:

Վարդանանց պատմիչը՝ Եղիշեն, պատմում է, որ ամբողջ ժողովուրդը՝ այր, թե կին, աղաղակում և ասում էր պարսիկներին. «Պատրա՛ստ ենք հալածվելու, մեռնելու, ամեն տեսակ նեղությունների և չարչարանքների սուրբ Եկեղեցիների համար, որ ավանդեցին մեզ մեր նախահայրերը... Որովհետև մեզ հայր ճանաչում ենք սուրբ Ավետարանը և մայր՝ Առաքելական Կաթողիկե Եկեղեցին. թող որևէ չար անջրպետ մեջ ընկնելով չբաժանի՝ մեզ սրանից»: Եվ արդեն իսկ Վարդանանց պատերազմը մղվեց՝ պահպանելու համար սուրբ Ավետարանը և մայրենի Եկեղեցին:

Ո՞վ հիմնեց Հայաստանի Եկեղեցին:

- Ամենից առաջ՝ Թադեոս առաքյալը, Սանատրուկ թագավորի ժամանակ: Սանատրուկը հակառակվեց Ավետարանի բարոզությանը, սակայն նրա դուստր Սանդուխտը լուսավոր-

վեց Թադեոս առաքյալի շնչով: Սանատրուկը շատ ճիգեր գործադրեց, որ իր դուստրն ուրանա քրիստոնեությունը, բայց՝ ապարդյուն, և իր զայրույթը հագեցնելու համար սպանել տվեց թե՛ Թադեոս առաքյալին և թե՛ Սանդուխտ կույսին: Թադեոսից հետո Չայաստանում քարոզեց Բարդուղիմեոս առաքյալը, բայց նա էլ պետության կողմից հալածանքների հանդիպեց և նահատակվեց: Այս պատճառով էլ քրիստոնեությունն ազատ, համարձակ և անարգել չկարողացավ տարածվել Չայաստանում:

Բայց երբ 301 թվականին սուրբ Գրիգոր Լուսավորչի առաքելությամբ ու ջանքերով և Տրդատ թագավորի պաշտպանությամբ քրիստոնեությունը Չայաստանի համար պաշտոնական կրոն հռչակվեց, Եկեղեցին արագ մեծացավ, զարգացավ և տարածվեց:

Ո՞րն է Եկեղեցու պաշտոնը:

Եկեղեցու պաշտոնն է քրիստոնեական հավատքով դաստիարակել ժողովրդին և այդ հավատքն արտահայտել նրա կյանքում և կենցաղում: Այս նվիրական գործը կատարելու համար Եկեղեցին պահում է Սուրբ Գիրքը իբրև գանձարան աստվածային պատգամների և պատվիրանների, պահում է Եկեղեցու ուղղափառ հայրերի գրվածքները և նրանց հեղինակությամբ առաջնորդում ժողովրդին: Եկեղեցին է, որ պահում է քրիստոնեական վաղեմի ավանդությունները, Եկեղեցին է, որ աստվածային պաշտամունքի պես-պես հորինվածքով, ինչ-պես նաև հոգևոր խոսքի կենդանի քարոզությամբ հավատացյալների ուշադրությունը շարունակ ուղղում է դեպի կրոնի խորհուրդները և քրիստոնեական կյանքի իրողությունները: Եկեղեցին է, որ հավատացյալների կյանքի բոլոր հանգրվաններում իր պաշտոնյաների միջոցով նրանց հետ է՝ նրանց ուրախությանն ուրախակից, նրանց վշտերին վշտակից, ուսուցչի և առաջնորդողի իր նվիրական դերում. միշտ ժողովրդի հետ է, նրա համար է և նրանով է գործում:

ԱՂՈՅՔ ԵՎ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ

Ի՞նչ է աղոթքը:

- Աղոթքը հավատացյալների՝ Աստծուն ուղղած խոսքերն են:

Ինչպե՞ս են Աստծուն ուղղվում այդ խոսքերը:

- Հայտնի կամ ծածուկ, այսինքն՝ հավատացյալներն աղոթում են հրապարակավ կամ առանձին:

Ո՞րն է հրապարակային աղոթքը:

- Աղոթքը հրապարակային է, երբ հավատացյալները հավաքվում են եկեղեցում կամ եկեղեցու չգոյության դեպքում որևէ տեղ և աղոթում միասին: Աղոթքը ծածուկ է, երբ հավատացյալներն աղոթում են առանձին՝ տանը, դաշտում, լեռան վրա, աշխատանքի վայրում, ծովում և այլուր:

Ինչպիսի՞ն պետք է լինի աղոթքի բովանդակությունը:

- Մեր Տեր Հիսուս Քրիստոս «Հայր մեր»-ով սովորեցրեց, թե ինչպես պետք է աղոթել: «Հայր մեր»-ը կոչվում է Տերունական աղոթք, այն է.

«Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի: Չիաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողունք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ, զի Քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն»:

Կարո՞ղ ես բացատրել այս աղոթքը:

- Քրիստոնյաները պետք է հավատան և գիտենան, որ Աստված իրենց երկնավոր Հայրն է, Ուն անունը սուրբ է, Ուն թագավորությունը պետք է տիրի մարդկանց մեջ, Ուն կամքը պետք է գործադրվի ամեն տեղ: Մեր ամենօրյա հացը կամ սնունդը Նա է տալիս մեզ: Նա է ներում մեզ մեր հանցանքները, և մենք էլ իրար պիտի ներենք և պիտի խնդրենք Նրանից՝ հեռու պահել մեզ փորձություններից և փրկել չարից, որովհե-

տև Նրանք է իշխանությունը, կարողությունը և հավիտենական փառքը:

Ո՞րն է հրապարակային աղոթքի ձևը Հայաստանյայց Եկեղեցում:

- Ամեն օր, նշանակված ժամին, հավատացյալները հավաքվում են եկեղեցում և հոգևոր պաշտոնյաների առաջնորդությամբ ժամերգություն կատարում, որի ժամանակ մատուցվում են աղոթքներ, երգվում շարականներ, ընթերցվում է Սուրբ Գիրքը և այլն:

Ուրիշ ի՞նչ արարողություններ են լինում եկեղեցում:

- Կատարվում են սրբազան խորհուրդներ, այսինքն՝ մատուցվում է Պատարագ, կատարվում է Մկրտություն, Պսակ և այլն՝ իրենց հատուկ ծիսակարգով:

Ի՞նչ է նշանակում արարողություն և ծես:

- Արարողություն և ծես գրեթե միևնույն նշանակություն ունեն, այսինքն՝ խորհրդավոր պաշտամունք անել՝ համաձայն որոշված կանոնների և ձևերի:

Ինչպիսի՞ գրքեր են գործածվում մեր եկեղեցում՝ աստվածային պաշտամունք կատարելու համար:

- Մեկից ավելի գրքեր.

1. Ժամագիրք, որ բովանդակում է օրվա ժամերգությունների կարգը:

2. Շարակնոց, որ բովանդակում է Հայ Եկեղեցու հոգևոր երգերն ըստ կանոնների:

3. Ճաշոց գիրք, քանի որ մեր եկեղեցում Սուրբ Գրքի ընթերցումը կատարվում է ճաշի ժամին, այսինքն՝ կեսօրին մոտ, այդ պատճառով այդ գիրքը ճաշոց է կոչվում, որ բովանդակում է Հին և Նոր Կտակարաններից ընտրված ընթերցումները ամբողջ տարվա յուրաքանչյուր օրվա համար:

4. Տոնացույց, որ ցույց է տալիս տոն օրերի շարքը մեր եկեղեցում և աստվածային պաշտամունքի ամենօրյա կարգը, այսինքն՝ օրվա ընթերցվածները, շարականները, աղոթքները և այլն: Հայաստանյայց Եկեղեցում Տոնացույցն աստվածային պաշտամունքի ընդհանուր ուղեցույցը կամ հայտագիրն է:

5. Մաշտոց, որ բովանդակում է խորհուրդների և այլ սրբազան արարողությունների կատարման կարգավորությունը և արարողական ու ծիսական խրատները: Այս է պատճառը, որ Մաշտոցը կոչվել է նաև Ծիսարան:

6. Պատարագամատույց կամ Խորհրդատետր՝ սուրբ Պատարագի խորհուրդի գիրքը, որ Պատարագի ժամին դրվում է սուրբ Սեղանի վրա:

7. Տաղարան, որ բովանդակում է բազմաթիվ տաղեր կամ երգեր, ինչպես նաև սուրբ Պատարագի երգեցողության մասը:

Ինչի՞ համար են պատրաստվել այս գրքերը:

- Որպեսզի Հայաստանյայց եկեղեցու աստվածային պաշտամունքն ամենուր միանման ծիսակարգով կատարվի:

Ո՞րն է հավատացյալների պարտքը հրապարակային աղոթքի մեջ:

- Հավատացյալները պետք է որոշված ժամին ներկա գտնվեն եկեղեցում, ջերմեռանդությամբ մասնակցեն ժամերգությանը և ամփոփ մտքով աղոթեն, պաշտամունքը խանգարող որևէ բան չանեն (իրար հետ չխոսեն, հազի և այլ արտառոց ձայներ չհանեն, չերթևեկեն այս ու այն կողմ, պաշտմունքը կիսատ չթողնեն՝ դուրս գալու համար և այլն):

ՅՈՒԹ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչ խորհրդածություն կարելի է անել յոթ խորհուրդների մասին:

- Գրիգոր Տաթևացին երեք շարք խորհրդածություններ է անում, որոնցից երկրորդը հետևյալն է. յոթ խորհուրդները մեզ պատրաստում են՝ յուրացնելու յոթ առաքինությունները.

ա) Մկրտությունը հավատքի խորհուրդն է. մկրտվում ենք, որովհետև հավատում ենք:

բ) Դրոշմը հույսի խորհուրդն է. հույս դնելով Սուրբ Հոգու զորության վրա՝ կարող ենք լինում մարտնչել թշնամու (սատանայի) դեմ:

գ) Հաղորդությունը սիրո խորհուրդն է. որովհետև սիրով ենք միանում և միավորվում մեր գլուխը հանդիսացող Քրիստոսին՝ որպես մարմին Նրա մարմնից և որպես անդամ Նրա անդամներից:

դ) Ապաշխարությունը արդարության խորհուրդն է. որովհետև զղջման, խոստովանության և ապաշխարության գործերի միջոցով արդարանում ենք մեղքերից:

ե) Օծումը խորհուրդն է արդարության լրումի. որովհետև, կյանքի պատերազմից դուրս գալով (մեռնելով), մաքրում ենք քրտինքն ու փոշին՝ մարմնավոր պատերազմից ելնողների պես:

զ) Ձեռնադրության կարգը խոհեմության և գիտության խորհուրդն է. որպեսզի ընծայվողը իմաստությամբ և գիտությամբ սպասավորի խորհուրդներին և խրատի ու սովորեցնի ժողովրդին:

է) Պսակը ողջախոհության խորհուրդն է. որպեսզի ողջախոհ անուսնությամբ զսպի բղջախոհ ցանկությունը և հեռու մնա շնությունից ու պոռնկությունից («Գիրք հարցմանց», էջ 587):

Ո՞րն է խորհուրդների պատմությունը:

- Մեր Տիրոջից՝ Հիսուս Քրիստոսից ուղղակիորեն հաստատված խորհուրդները երկուսն են՝ Հաղորդություն և Մկրտու-

թյուն: Մնացած հիմնով հետո հաստատվել են այս երկուսի վրա: Պետք է հմանալ, որ խորհուրդների թիվն ու աստվածաբանական իմաստները բանաձևվել են դարերի ընթացքում: Այլ խոսքով, Սուրբ Գրքում, ինչպես նաև քրիստոնեական եկեղեցու հայրերի գրվածքներում իրենց նախնական պարզ վիճակով կան յոթ խորհուրդներ, որոնք իրենց այժմյան ձևն ու իմաստը ստացել են 1545-1563 թվականներին՝ Տրիտենոյան ժողովի ժամանակ (այն Լատին եկեղեցու ամենաշանավոր ժողովներից մեկն է, որովհետև Լատին եկեղեցին այդ ժողովով ճշտեց իր դիրքը տարբեր ուղղություններով ծավալված բողոքականության դեմ և սկսեց ներքնապես բարեկարգել ինքն իրեն և զորանալ):

Յոթ խորհուրդներն ինչպիսի՞ անհրաժեշտություն են քրիստոնեական կյանքի համար:

- Յոթ խորհուրդներից Սկրտությունը, Դրոշմը, Ապաշխարությունը և Հաղորդությունը անպայմանորեն անհրաժեշտ են՝ քրիստոնյա լինելու և քրիստոնեական կյանքով ապրելու համար, իսկ Ամուսնությունը և Ձեռնադրությունը կամավոր են, Կարգ հիվանդացը ըստ դիպվածի է:

Յոթ խորհուրդներից որո՞նք են կրկնելի, որոնք՝ ոչ:

- Սկրտությունը մեկն է, այսինքն՝ մեկ անգամ մկրտվածը երկրորդ անգամ չի կարող մկրտվել: Այդպիսին է նաև Դրոշմը:

Ապաշխարությունն ու Հաղորդությունը միշտ կրկնվում են:

Ամուսնությունը կրկնվում է, երբ մեռնում է ամուսիններից մեկը կամ մյուսը, կամ երբ ամուսնալուծվում են, և բաժանվածներն օրենքով, այսինքն՝ ամուսնալուծման վճռով չեն զրկվում նորից ամուսնանալու իրավունքից:

Ձեռնադրությունը կամավոր է և չի կրկնվում:

Հիվանդաց կարգը միայն հիվանդների համար է, կամավոր և կարող է կրկնվել:

Խորհուրդներից որո՞նք են ինքնին ջնջվում:

- Խորհուրդները սկզբունքորեն անջնջելի են: Բայց նրանք, ովքեր ուրանում են իրենց հավատքը՝ հավատք բառի քրիստոնեական և աստվածաբանական իմաստով, և հարում են ոչ քրիստոնեական կրոնի, նրանք, ովքեր անաստված և հե-

թանոս են դառնում՝ ուրանալով իրենց քրիստոնեությունը, այնպիսիների վրայից ինքնին ջնջվում են կատարված խորհուրդները:

Դարձյալ՝ նրանք, ովքեր Ձեռնադրությամբ և օծումով կարգ են ստացել և այլևայլ պատճառներով կարգազրկվել կամ ինքնակամ կարգաթող եղել, այնպիսիների վրայից խորհուրդը ջնջվում է:

Խ Ո Ր Յ ՈՒ Ր Դ Ն Ե Ր

Ի՞նչ է նշանակում խորհուրդ:

- Խորհուրդ, բառի կրոնական և աստվածաբանական իմաստով, նշանակում է անտեսանելի բաների հայտնություն. ինչպես օրինակ՝ Մկրտության մեջ մկրտվողի քրիստոնյա դառնալը խորհուրդ է, ծածուկ մի բան, և այն ծեսն ու արարողությունը, որով կատարվում է Մկրտությունը, խորհուրդի իրական արտահայտությունն է: Հետևաբար, խորհուրդ նշանակում է ոչ միայն ծածուկ մի բան, այլ նաև դրա արտահայտության արտաքին ձևերն ու կերպերը կամ արարողություններն ու ծեսերը:

Ի՞նչ կերպով ենք ըմբռնում խորհուրդը:

- Խորհուրդն ըմբռնում ենք հավատքով և երկյուղածությամբ, քանզի քրիստոնեական սուրբ կրոնը, ինչպես տեսանք, ինքնին հիմնված է հավատքի վրա: Հետևաբար, առանց հավատքի և առանց երկյուղած նկարագրի անհնար է ընդունել խորհուրդը:

Ո՞րն է խորհուրդների նպատակը:

- Քրիստոնեական կյանքի համար խորհուրդները հոգևոր ազդակներ ու միջոցներ են՝ միշտ մնալու աստվածային շնորհի մեջ, ապրելու հոգևոր կյանքի բարձրության վրա և գործերով ցույց տալու, թե Հիսուս Քրիստոսով ավետարանված փրկությունը հոգևոր իրականություն է դարձել հավատացյալների համար իրենց հավատքի և կյանքի մեջ: Այս ըմբռնումով պետք է դիտել խորհուրդները: Այս պատճառով ոչ միայն կարևոր է գիտենալ խորհուրդների աստվածաբանական նշանա-

կությունը, այլ մանավանդ հրամայական պարտք է կյանքում և կենցաղում արտահայտել նրանց կրոնական ու հոգևոր իմաստը, նրանց բարոյագիտական գեղեցկությունը: Եթե այս գիտակցությունը չընենք Քրիստոնեականի ուսման մեջ, եթե երկյուղածությամբ չսերտենք խորհուրդները, չենք կարող զգալ աստվածային օրհնությունն ու շնորհը մեզ վրա:

Որո՞նք են Եկեղեցու խորհուրդները:

- Ուղղակի մեր Տեր Յիսուս Քրիստոսի կողմից հաստատված խորհուրդներն են Սկրտությունը և Հաղորդությունը: Բայց, ինչպես կտեսնենք՝ հետո, Եկեղեցին տերունական խորհուրդների թիվը բարձրացրել է յոթի, որոնք են.

ա) Սկրտություն, բ) Դրոշմ, գ) Ապաշխարություն, դ) Հաղորդություն, ե) Պսակ, զ) Կարգ և օծումն հիվանդաց, է) Կարգ ձեռնադրության:

Իսկ ընդհանրապես Եկեղեցուն կատարվող յուրաքանչյուր արարողություն խորհուրդ է, որովհետև այն առնչվում է Աստծու հետ և աներևութապես Աստծու օրհնության և Սուրբ Հոգու շնորհների հայցումն ու բաշխումն է:

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է Սկրտությունը:

- Սկրտությունը, որպես բառ, նշանակում է լվացում, մաքրություն: Բայց կրոնական իմաստով նշանակում է այն արարողությունը, որ կատարվում է ջրով՝ սրբելու, մաքրելու համար մկրտվողի մեղքը, որը, ըստ աստվածաբանների, կոչվում է առաջին կամ սկզբնական մեղք: Սկրտությունը կոչվում է նաև վերստին ծնունդ, որովհետև մկրտվողը սրբվում է, մաքրվում իր մեղքից և նորից ծնվում Ավագանից /Հովհ. Գ/: Այս նոր և հոգևոր ծնունդը մկրտվածին դարձնում է Քրիստոսի Եկեղեցու անդամ:

Ի՞նչ ենք հասկանում՝ առաջին մեղք ասելով:

- Սուրբ Գրքից սովորում ենք, որ Ադամը չպահեց աստվածային պատվերն իր դրախտային կյանքում. այս պատվիրանազանցությունը կամ անհնազանդությունը, ըստ աստվածա-

բանների, կոչվում է առաջին (սկզբնական) մեղք, որ Ադամից ժառանգաբար սերնդե սերունդ անցել է բոլոր մարդկանց, ոչ թե ժառանգաբար հորից որդուն և այդպես շարունակ, այլ պարզապես ամբողջ մարդկությունն ապրում է այդ մեղքի միջավայրի մեջ:

Գրիգոր Տաթևացին այսպես է սահմանում այդ մեղքը. «Ադամի մեղքն այն է, որ կորցրեց արդարությունը և մեղքով ու ցանկությամբ ծնեց իր որդուն. այս է սկզբնական մեղք ասվածը, որը չի քավվում, եթե չի մկրտվում Քրիստոսի մահով»:

Մկրտությունն անհրաժեշտ պայման է՝ քրիստոնյա լինելու համար:

- Այո՛: Մկրտության կարևորությունը հասկանալու համար պետք է գիտենալ, որ նույն ինքը՝ մեր Տերը, նույնպես մկրտվեց Հորդանան գետում Հովհաննես Մկրտչի կողմից [տե՛ս Մատթ. Գ 13-17, Մարկ. Ա 9-11, Ղուկ. Գ 2-22, Դ 1]: Հետո, երբ իր առաքյալներին ուղարկեց քարոզության, պատվիրեց նրանց. «Սրանից հետո գնացե՛ք, Ավետարանի աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, մկրտեցե՛ք նրանց Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով» [Մատթ. ԻԸ 19]:

Մեր Տերն ինչո՞ւ մկրտվեց. մեղավո՞ր էր հասարակ մարդկանց պես:

- Քա՛վ լիցի: Հիսուս Քրիստոս կատարյալ մարդ էր, այսինքն՝ մեղք չուներ. այլ խոսքով՝ մեր Տերը մարդկային բոլոր հանգամանքներն ուներ, բացի մեղքից: Բայց մկրտվեց՝ մեղավոր մարդկությանը ցույց տալու համար, թե Մկրտությունն անհրաժեշտ պայման է վերստին կամ հոգևոր ծննդյան համար:

Պողոս առաքյալն ինչպե՞ս է բացատրում հոգևոր ծնունդը:

- Տիտոսին ուղղված թղթի Գ գլխում ասում է. «Մի ժամանակ մենք էլ էինք անմիտ, անհնազանդ, մոլորված, ժառայում էինք ցանկությունների և պես-պես անառակությունների, չարությամբ և նախանձով էինք ապրում, ատելի էինք և ատում էինք միմյանց: Իսկ երբ մեր Փրկիչ Աստուծո քաղցրությունը և մարդասիրությունը հայտնվեց... փրկեց մեզ վերստին ծննդյան

Ավագանի միջոցով և Սուրբ Հոգու նորոգությամբ» [Տիտոս Գ 3-5]:

Կարող ես Ավետարանից էլ հիշել մի նշանավոր հատված Մկրտության մասին:

- Այո՛: Հովհաննու Ավետարանի Գ գլխում նկարագրված է փարիսեցի Նիկողեմոսի գիշերային տեսակցությունը Հիսուս Քրիստոսի հետ, որի ժամանակ Հիսուս ասում է, թե Աստուծո թագավորությունն մտնելու համար մարդ պետք է վերստին ծնվի, այսինքն՝ մկրտվի, որովհետև ով չի ծնվում ջրից և Հոգուց, չի կարող մտնել Աստուծո թագավորություն, քանզի մարմնից ծնվածը մարմին է, իսկ Հոգուց ծնվածը՝ հոգի: Եվ քանու օրինակով բացատրում է հոգևոր ծնունդի խորհուրդը. «Քամին ուր ուզում է, փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես՝ որտեղից է գալիս կամ ուր է գնում. այդպես է և ամեն ոք, որ ծնված է Հոգուց» [Հովհ. Գ 8]:

Ո՞րն է Մկրտության պայմանը:

- Հավատքը: Մկրտվողը պետք է հավատա Ամենասուրբ Երրորդությանը, որովհետև, ինչպես տեսանք, Հիսուս Քրիստոս ասաց. «Մկրտեցե՛ք նրանց հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու»: Եվ դարձյալ՝ «Նա, ով հավատում է և մկրտվում, պիտի փրկվի, իսկ նա, ով չի հավատում, պիտի դատապարտվի» [Մարկ. ԺԳ 16]:

Ուրեմն, մկրտվողը պետք է խելահաս լինի, որպեսզի գիտենա, թե ինչ է հավատք և այլն:

- Այո՛: Մկրտության եկողը պետք է գիտենա, թե ինչ է հավատք, ինչ է Ամենասուրբ Երրորդություն և այլն, որպեսզի գիտակցությամբ մկրտվի և փրկվի իր հավատքով:

Եթե այդպես է, ուրեմն ինչո՞ւ ենք մկրտում նորածին փոքրիկներին, որոնք դեռևս ոչինչ չգիտեն:

- Այն շատ պարզ և շատ բնական պատճառով, որ ծնողները պարտավոր են հոգալ իրենց զավակների և՛ մարմնավոր, և՛ հոգևոր պետքերը: Հայրերն ու մայրերը հոգում են իրենց զավակների ապրուստը, նրանց դպրոց ուղարկում, մայրենի լեզուն սովորեցնում, իրենց ազգային զգացումները փոխան-

ցում և այլն, և շատ բնական է, որ իրենց զավակներին դաստիարակեն նաև իրենց կրոնով. այս է պատճառը, որ մկրտել են տալիս իրենց փոքրիկներին, որոնք մեծանում են իրենց ծնողների ազգային և կրոնական կյանքով և նրանց հավատքով:

Բայց ավելի ճիշտ չէ՞, որ փոքրիկները մեծանան, քիչ թե շատ խելահաս դառնան և իրենց գիտակցությամբ մկրտվեն:

- Սա շատ նուրբ խնդիր է: Կրոնական ճշմարտությունները և խորհուրդները հասկանալու համար ո՞րն է խելահասության տարիքը: Հայրն ու մայրը սպասո՞ւմ են, որ իրենց փոքրիկները խելահաս դառնան, այսինչ տարիքն ունենան և նրանից հետո միայն գնան դպրոց կամ որոշեն իրենց ազգությունը: Սա անբնական է և հակառակ ողջամտության: Ծնողները շատ բնական կերպով, իրենց կյանքի պայմանների համեմատ և իրենց ազգության ու կրոնի համաձայն են դաստիարակում իրենց փոքրիկներին: Եվ բացի դրանից, մկրտվելով երեխան անդամ է դառնում Եկեղեցու, որի համար տարիքային սահմանափակում գոյություն չունի, և հետևաբար մոլորված են այն մարդիկ, ովքեր պնդում են, որ մկրտությունը գիտակցության հետ է առնչվում: Այն գիտակցություն չէ միայն, այլ հավատք և այդպիսով անդամագրություն Եկեղեցուն և որդեգրություն աստվածային ընտանիքին:

Ուրեմն, մկրտչականները սխալվո՞ւմ են:

- Անտարակոչյս: Հիսուս Քրիստոս, երբ Իր աշակերտներին պատվիրեց գնալ, մկրտել բոլոր հեթանոսներին, տարիքի խտիր չդրեց: «Գործք առաքելոցից» գիտենք, որ կային տնով մկրտվողներ, այսինքն՝ ամբողջ ընտանիքներ՝ իրենց մեծ ու փոքր անդամներով:

Մկրտվելը բավական է՝ քրիստոնյա լինելու համար:

- Այո՞, պայմանով, որ մկրտվածներն աճեն իրենց ուղղափառ հավատքի և շնորհի մաքուր կյանքի մեջ: Որովհետև մկրտվածների զորավոր հավատքով և մաքուր կյանքով է, որ պայծառանում է Եկեղեցին, և փառավորվում քրիստոնեությունը, քանի որ Մկրտության նպատակն է սրբացնել մարդկանց և Աստուծո որդեգիրը դարձնել քրիստոնեական Եկեղեցու անդամակցությամբ:

Մկրտությունն ինչպե՞ս է կատարվում Հայաստանյայց Եկեղեցում:

- Մկրտությունը մեր Եկեղեցուն կատարվում է ջրով և քահանայության աստիճան ունեցող պաշտոնյայի ձեռքով:

Մկրտվողը գալիս է կնքահոր՝ հետ, մկրտիչ քահանան հարցաքննում է կնքահորը, հետո վերցնում փոքրիկին և երեք անգամ ընկղմում Ավազանի ջրի մեջ Ամենասուրբ Երրորդության անունով՝ ասելով. «... Ծառայա Յիսուսի Քրիստոսի, Եկեալ յերախայութենէ ի Մկրտութիւն, մկրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. զնեալ Արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի՝ լինել ժառանգակից Քրիստոսի և տաճար Հոգւոյն Սրբոյ»:

Ի՞նչ ենք հասկանում՝ երախայություն ասելով:

- Երախա բառն այստեղ նշանակում է չմկրտված անձ: Քրիստոնեական Եկեղեցու հին դարերում Մկրտության եկողները որոշված ժամանակից 40 օր առաջ սկսում էին պատրաստվել սուրբ խորհուրդն ընդունելու, այսինքն՝ հրահանգվում էին քրիստոնեական գիտելիքների մեջ և հետո մկրտվում: Քառասնօրյա պատրաստության այս վիճակը կոչվում է երախայություն:

Հիմա երախայություն կա՞:

- Եթե մեկը ծնված է քրիստոնյա ծնողներից, սակայն իր մանկության ժամանակ չի մկրտվել և չափահաս է դարձել, կոչվում է երախա: Այլ կրոններից եկող չափահասները և փոքրիկները նույնպես, որոնք ուզում են քրիստոնյա լինել, պատրաստվում կամ երախայանում են, ապա՝ մկրտվում:

Հավատամքի մեջ ասվում է՝ մի Մկրտություն. ո՞րն է դրա բացատրությունը:

- Այս մասին արդեն խոսեցինք: Ինչպես որ մի (մեկ) է Հիսուս Քրիստոսի Եկեղեցին, այնպես էլ մի (մեկ) է քրիստոնեական Մկրտությունը, այսինքն՝ որևէ անձ միայն մեկ անգամ է

* Կնքահայր նշանակում է հայր կնիքի կամ կնունքի: Կնիք նշանակում է դրոշմ, լայն առունով՝ ընդգրկում է նաև մկրտությունը:

մկրտվում՝ քրիստոնյա դառնալու համար. այլ խոսքով՝ Մկրտությունը չկրկնվող խորհուրդ է:

Ուրեմն, քրիստոնեական եկեղեցում չկա՞ կրկնամկրտություն:

- Սկզբունքորեն չկա: Առաքյալը հայտարարում է. «Մի Տեր, մի հավատք, մի մկրտություն» [Եփես. Դ 5]: «Չգիտե՞ք, որ մի անգամ մկրտվեցիք Յիսուս Քրիստոսով, Նրա մահով մկրտվեցիք» [Րոմ. Զ 3]: Բայց նախանձը, տգիտությունը երբեմն այն աստիճան կուրացրին հարանվանական եկեղեցիների պաշտոնյաներին, որ նախատիճի համար մկրտվածներին նորից էին մկրտում, որի դեմ սաստիկ հանդիմանություն ունի Պողոս առաքյալը [տե՛ս Եբր. Զ 4-6]:

Հայաստանյայց եկեղեցու մեջ Մկրտության Ավագանի անշարժությունը, ըստ սուրբ Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի, նշանակն է Մկրտության խորհուրդի անհողդողության:

Ո՞րն է Մկրտության խորհուրդի արդյունքը:

- Մկրտվելով՝ մարդիկ ոչ միայն սրբվում են մեղքից և որդեգրվում Աստծուն՝ շնորհի կյանքի մեջ, այլև եղբայրանում են իրար՝ որպես սուրբ Ավագանից ծնվածներ: Քրիստոնեական եկեղեցում մարդկային հավասարության, եղբայրության և արդարության խորհուրդներն իրագործվում են Մկրտության արդյունքով. այս նասին է ասում Պողոս առաքյալը. «Բոլորդ Յիսուս Քրիստոսի հավատքով Աստուծո որդիներ եք: Բոլորդ, որ մի անգամ մկրտվեցիք Քրիստոսով, Քրիստոս եք հազել, խտիր չկա ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արվի և ո՛չ եգի, զի դուք բոլորդ մեկ եք Յիսուս Քրիստոսով» [Գաղատ. Գ 27-28]:

Ո՞րն է մկրտվածների պարտքը:

- Որպեսզի մկրտվածները կարող լինեն պահելու և զգալու Մկրտության շնորհը, պետք է արթուն լինեն: Խելահաս մկրտվածները պետք է կենդանի պահեն իրենց քրիստոնեական հավատքը, գիտակցությամբ ապրեն և անհոգության կամ անտարբերության մեջ չթմրեցնեն իրենց միտքն ու հոգին: Մկրտությամբ սրբացած և փրկված հոգիները պետք է միշտ կապված մնան իրենց Փրկչին:

Այդ դեպքում ի՞նչ պիտի լինի փոքրիկ մկրտվածների վիճակը:
- Փոքրիկը դեռևս չունի չափահասի կարողությունները, նա ամբողջովին կախված է իր ծնողներից, հետևաբար ծնողների կամքը, գիտակցությունը, հավատքը, նրանց պարկեշտ կյանքն ու կենցաղը օրինակ և առաջնորդ են լինում նրանց: Այդ պատճառով էլ ծնողները հիմնովին պատասխանատու են իրենց փոքրիկների դաստիարակության և զարգացման համար նրանց կրոնական կյանքում:

Ո՞րն է կնքահոր պարտքն ու պաշտոնը:

- Ցավոք, կնքահայրությունը հիմա անվանական մի պաշտոն է դարձել: Հին ըմբռնումով՝ կնքահայրն է մկրտվածի դաստիարակը: Ծնողների չափ և նրանցից առավել մեծ էր կնքահոր իրավունքը իր հոգևոր սանի նկատմամբ, և այս էր պատճառը, որ նրանք դառնում էին հոգևոր ազգականներ և չէին կարող խնամիություն անել միմյանց հետ:

Ուրեմն, ավելորդ մի պաշտոն է կնքահայրությունը:

- Ո՛չ: Ամեն մի պաշտոնական ընդունելության ժամանակ որևէ մեկի ներկայացումը կամ ընծայումը կատարվում է մի ուրիշի կողմից, այսինքն՝ ընտանիքի անդամներից, բարեկամներից կամ ազգականներից մեկը ներկայացնում է ընծայալին, այսպես էլ Մկրտության եկողը ներկայացվում կամ ընծայվում է Եկեղեցուն արդեն կնքված մեկի կողմից: Այդ անձը կնքահայրն է: Ցանկալի է, որ կնքահայրերն այս արարողական պարտականությունից զատ փորձեն վերադառնալ անցյալի գեղեցիկ սովորություններին և հոգ տանեն իրենց սանիկների հոգևոր կրթության համար:

Որո՞նք են փոքրիկների և առհասարակ բոլոր մկրտվածների կրոնական դաստիարակությանը զարկ տալու միջոցները:

- Եկեղեցուն կատարված աստվածային պաշտամունքը և նրանից անբաժան կենդանի խոսքը, քարոզությունը:

Բարեկարգ և պայծառ Եկեղեցու աստվածային պաշտամունքը միշտ հոգևոր արթուն կյանքի ազդեցիկ խթան է: Մկրտվածները չպետք է թմրեն, չպետք է քնեն կյանքի հոգևոր պահանջների նկատմամբ: Որովհետև Մկրտության նպատակն

է ոչ թե մաքրել մարմնի աղտը, այլ արթուն պահել մարդու խղճմտանքի վկայությունը [տե՛ս Ա Պետր. Գ 21]:

Հիսուս Քրիստոս սիրու՞մ էր փոքրիկներին:

- Այո՛: Մեր Փրկիչն ասաց. «Թո՛ւյլ տվե՛ք այդ փոքրիկներին և մի՛ արգելե՛ք նրանց Ինձ մոտ գալ, որովհետև այդպիսիներիցն է երկնքի արքայությունը» [տե՛ս Մատթ. ԺԹ 14, Մարկ. Ժ 14, Ղուկ. ԺԸ 16]: Մեր մայրենի եկեղեցու պարտքն է փոքրիկներին բերել, մոտեցնել Քրիստոսին՝ նրանց դաստիարակելով հոգևորապես, համաձայն մեր հայեցի ավանդությունների: Այս նպատակով հայ եկեղեցիների կողքին հաստատված են հայ կիրակնօրյա դպրոցները՝ փոքրիկների հոգևոր դաստարակությունն ավելի արդյունավոր դարձնելու համար:

ԴՐՈՇՄ

Ի՞նչ է Դրոշմը:

- Դրոշմը Մկրտության անբաժան մասն է: Ջրով մկրտվելուց անմիջապես հետո երախսան դրոշմվում կամ օծվում է մեռոնով կամ սուրբ յուղով: Դրոշմ նաև նշանակում է կնիք, և այս պատճառով Մկրտությունը կոչվում է նաև Կնունք:

Ինչո՞ւ է Դրոշմը խորհուրդ:

- Որովհետև խորհրդավորում է Սուրբ Հոգու շնորհը: Սուրբ Հոգին հայտնվեց մեր Փրկչի Մկրտության ժամանակ և աղավանակերպ իջավ Նրա վրա: Սրբալույս մեռոնը խորհրդանշում է Սուրբ Հոգու էջքը մկրտվածների վրա:

Դարձյալ՝ օծումը աստվածային ճշմարտությունները սովորելու և պահելու երաշխիք է: Հոգով արթուն քրիստոնյան բնավ չի մոլորվի ճշմարիտ հավատքի կյանքում, քանզի օծումով ստացած Սուրբ Հոգու շնորհն անբաժան է նրանից [տե՛ս Ա Հովհ. Բ 26, հմմտ. եփես. Ա 13, Դ 30]:

Հին ժամանակներում յուղով օծում էին վիրավոր զինվորներին և անընդհատ շփումով յուղը փակում և ապա բուժում էր վիրավոր մասը: Այդպես է նաև հոգևոր կյանքում. օծումով մարդը նախ բուժվում է հոգևոր իմաստով, ինչպես նաև պատսպարվում չարից և մեղքից:

Սուրբ Յովնան միայն աղավանակե՞րպ է հայտնվել:

- Ո՛չ, կրակի ձևով էլ է հայտնվել, օրինակ՝ Յովնան Յովնանության մեջ կարողում ենք, որ հայտնվում է հրե լեզուների ձևով, որովհետև հուրը մաքրության խորհրդանշանն է. ինչպես որ ամեն նեխած և փտած բան ջնջվում է կրակով, այնպես էլ Սուրբ Յովնան շնորհի մեջ է պահում մկրտվածներին և պաշտպանում նրանց հոգևոր նեխումից ու փտումից:

Ո՞րն է հայ ծնողների պարտքը:

- Քանի որ Մկրտությունն ու Դրոշմը մեղքերից սրբվելու և Աստուծո որդեգիր դառնալու անհրաժեշտ պայմաններ են, ուստի անհրաժեշտ է, որ հայ ծնողները, հարգելով իրենց մայրենի եկեղեցու հնավանդ սովորությունները, մկրտել և կնքել տան իրենց փոքրիկներին նրանց ծնվելուց ութ օր հետո, եթե բժշկական արգելող պատճառ չկա:

Փոքրիկներին ամիսներով և նույնիսկ տարիներով անկնունք թողնելն ամենևին ներելի չէ, և այն ծնողները, ովքեր առանց լուրջ պատճառի անհոգ ու անտարբեր են մնում և ժամանակին մկրտել չեն տալիս իրենց փոքրիկներին, ծանրապես պատասխանատու են Աստուծո, ինչպես նաև հոգևորապես անխնամ թողնված իրենց զավակների առջև:

Ի՞նչ է մեռնող կամ սուրբ յուղը:

- Մեռնող կամ մյուռնոն հունարեն բառ է և նշանակում է անուշահոտ յուղ, իսկ այստեղ մասնավորապես նշանակում է այն յուղը, որ գործածվում է եկեղեցում՝ դրոշմելու համար մկրտվածներին և օծելու համար քահանաներին, եկեղեցիները և եկեղեցական որոշ նվիրական իրեր:

Ի՞նչն է մեռնի նյութը, և ո՞վ է պատրաստում այն:

- Մեռնի բուն նյութը ձիթենու յուղն է՝ ձեթը, բայց նրա հետ նաև խառնում են 40-ից ավելի անուշահոտ նյութեր (ծաղիկներ, արմատներ), որոնցից ամենագլխավորը բալասանն է: Բալասան է թե՛ ծառի, թե՛ նրա ծաղկի և թե՛ նրա յուղի անունը: Մեռնի ծառ էլ է անվանվել բալասանը, որի յուղը, երբ խառնվում է ձեթի հետ, մակարդվում է:

Մեր Եկեղեցուն մեռն պատրաստելու և օրհնելու իրավունքը կաթողիկոսին է վերապահված: Այն կատարվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ հայության հոգևոր կենտրոնում, մեծ հանդեսով, Հայաստանի և աշխարհի զանազան վայրերից ժամանած ուխտավորների ներկայությամբ: Սբ. Մյուռոնը ամբողջ հայության միության խորհրդանիշն է՝ այսինքն Սբ. Հոգին է, որ կապում է մեզ բոլորիս որպես քրիստոնյա ազգ: Այդ պատճառով էլ ըստ ժողովրդական բառ ու բանի մկրտվողին ասում են. «Թող հայի կանաչ մեռոնը հաստատ լինի քո ճակատին»:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է նշանակում Ապաշխարություն:

- Ապաշխարել նշանակում է հեծել, ցավել, այսինքն՝ զղջումով լաց լինել կատարած հանցանքի կամ մեղքի համար:

Ինչո՞ւ է Ապաշխարությունը խորհուրդ:

- Մարդ արարածը մեղանշական է: Թեև Սկրտության և Դրոշմի խորհուրդներով նա սրբվում է իր մեղքերից և որդեգրվում Աստծուն, սակայն բազմիցս մեղանշում է իր աստվածային որդեգրության պայմանների դեմ. և երբ անդրադառնում է իր մեղքերին, զղջում և լաց է լինում, այսինքն՝ ապաշխարում է, ապա Աստված ներում է նրան, և վերահաստատվում է նրա որդեգրությունը: Մարդու հոգեկան կյանքում կատարված այս փոփոխությունը խորհուրդ է:

Սրանից չի՞ հետևում, թե ապաշխարությունը քաջալերում է մեղավորությունը:

- Ուզում եք ասել՝ քանի որ ապաշխարությունը մեղքերից սրբվելու միջոց է, մարդը կարող է գիտակցաբար մեղանշել, հետո ապաշխարել ու սրբվել: Այսպես մտածողներ եղել են և հիմա էլ կան: Սակայն այսպես մտածելն արդեն իսկ մեղք է և ներելի չէ որևէ պարկեշտ մարդու: Քրիստոնեական կրոնի սկզբունքն է՝ աստվածային որդեգրության շնորհը կենդանի պահել մտքում և հոգում: Եվ եթե քրիստոնյան, հակառակ իր անկեղծ ջանքերի, որևէ կերպ մեղանշի և զգա, որ մեղքով

արատավորվել է իր քրիստոնեական նկարագիրը, ապա կարող է ապաշխարել և թողություն ստանալ: Իսկ եթե գիտակցաբար և դիտմամբ մեղանջի, ապա կչարաշահի Աստուծո ներողամտությունը, որը ինքնին ծանր մեղք է և այս դեպքում ապաշխարությունը կեղծ կլինի:

Ուրեմն, սահման կա՞ Ապաշխարության մեջ:

- Աստված չի կամենում մեղավորի մահը: Անսահման և անբավ է Նրա գթությունը: Բայց սա պատճառ չէ, որ քրիստոնյան չարաչար սխալ հասկանա աստվածային գթության նշանակությունը: Ընդհակառակը, նրա պարտքն է արթուն և պատրաստ գտնվել ամեն մի պատահականության և փորձության դեմ՝ մեղքի հրապույրներով չտարվելու համար:

Հետևաբար մեղանջողը պետք է.

ա) սրտանց զղջա իր գործած մեղքերի համար և վճռի այլևս չմեղանջել.

բ) ջերմեռանդությամբ և երկյուղածությամբ աղոթի, խոստովանի Աստուծո առջև և թողություն խնդրի, որովհետև Աստուծո համբերությունն ու քաղցրությունը մեղավորին առիթ են ընձեռում ապաշխարելու և արդարանալու [տե՛ս Հռոմ. Բ 4]:

գ) միշտ հիշի, որ ինքը փրկվել է Հիսուս Քրիստոսի Արյունով և պարտավոր է հետևել Նրա անմեղ կյանքին:

Աղոթքը չմեղանջելու ամենագործնական միջոցն է: Գշնարիտ աղոթողը մեղք չի գործում և չի կարող գործել:

Ի՞նչ է խոստովանությունը:

- Երբ մարդը խորապես գիտակցում է իր կատարարած սխալը, ընդունում այն և հայտարարում իր խղճմտանքի, Աստուծո և Եկեղեցու առջև, սա կոչվում է խոստովանություն, որին անմիջապես և անպայման հետևում է ապաշխարությունը:

Ինչպես տեսնում ենք տրված բացատրություններից, խոստովանությունն ամենից առաջ կատարվում է մարդու խղճմտանքի մեջ՝ դառնալով ապաշխարության հիմքը. այլ խոսքով, հնարավոր չէ ապաշխարել առանց խոստովանելու:

Ապաշխարության համար ի՞նչ կանոններ ունի Հայաստանյայց Եկեղեցին:

- Մեր Եկեղեցին ունի քրիստոնեական վաղեմի Եկեղեցու կանոնները, այսինքն՝ պահք, աղոթք, հրապարակային խոստովանություն, զղջում, առաքինական և մարդասիրական գործեր ու պարտավորություններ և այլն:

Ապաշխարության օրերին աստվածային պաշտամունքի սաղմոսներն ու աղոթքները, շարականներն ու ընթերցվածները, հրապարակային խոստովանության ձևերն ու կերպերը այնպիսի հորինվածք և կարգավորություն ունեն մեր Եկեղեցուն, որ անկարելի է նրանցից չազդվել և չապաշխարել:

Ի՞նչ կարիք կա այդպիսի արտաքին միջոցների. ավելորդ չե՞ն դրանք:

- Ո՛չ: Եկեղեցու ժողովուրդն ինքն իր մեջ մի ամբողջական միություն է կազմում: Նրա անդամները ոչ միայն այլևայլ հարաբերություններով ու կապերով միացած են իրար հետ, այլ նաև եղբայրացած են սուրբ Ավագանի Մկրտությամբ, այնպես որ նրանցից մեկի առավելությունը կամ թերությունը ազդում է ամբողջ Եկեղեցու վրա: Սրա համար հրապարակային աղոթքները, հրապարակային խոստովանությունները, իբրև Եկեղեցու շինության պայման, ուղղակի բխում են ժողովրդից, որ նույն ինքը Եկեղեցին է:

Ճի՞շտ է նրանց կարծիքը, ովքեր ասում են, թե ավելորդ է խոստովանությունը Եկեղեցուն, տգետ և անարժան քահանաների առջև:

- Ո՛չ: Երբ մարդիկ իրենց անմեղությունը կամ իրավունքները պաշտպանելու համար դիմում են դատական ատյաններին, մի՞թե նայում են դատավորների մեղավոր կամ առաքինի լինելուն: Անշուշտ ոչ: Այսպես էլ նրանք, ովքեր կարծում են, թե իրենք արդար են, իսկ ուրիշները՝ մեղավոր, իրենք արժանավոր են, իսկ ուրիշները՝ անարժան, պետք է հիշեն Ավետարանի փարիսեցու և մաքսավորի առակը [տե՛ս Դուկ. ԺԸ 9-14]:

Ուրեմն, պետք չէ՞ մկատի ունենալ հոգևոր պաշտոնյայի արժանիքը:

- Ընդհակառակը: Երանի՜ թե բոլոր հոգևորականները սուրբեր լինեին: Այստեղ խնդիրը հոգևորականի արժանիքը չէ, այլ քրիստոնյա մարդու պարտականությունը: Մարդ ուրիշներին քննադատելուց առաջ պետք է իրեն դատի ու քննի: Իրար

դատելուց զգուշանալու մասին է խոսում Պողոս առաքյալը
Հռոմ. ԺԴ գլխում:

Որևէ մեկը պետք չէ հպարտանա և իր հոգևոր հովվից
ավելի սուրբ և արժանավոր կարծի իրեն, այլ թող խոնարհվի
նրա առջև, ով կոչված է Աստուծո կողմից՝ լսելու հավատա-
ցյալների խոստովանությունը:

Ուրեմն, ո՞րն է մեր պարտքը:

- Աշխարհական թե՛ հոգևորական, մեր բոլորի պարտքն է
աշխատել մաքուր լինել մեր խղճի և Աստուծո առջև, սիրով և
լայնախոհ հոգով հարգել մեր սուրբ Եկեղեցու կարգ ու կանո-
նը, գործնականապես աշխատել նրա բարեկարգության և
պայծառության համար:

Ցավոք, շատերը չգիտեն խոստովանության և ապաշխա-
րության նշանակությունը և չեն զգում դրանց պետքն իրենց
կյանքում, կան նաև այնպիսիք, ովքեր դրանք համարում են
ծնական, հետևաբար և՛ ավելորդ բաներ: Սակայն դրանք չեն
կարող ավելորդ բաներ լինել, քանի որ մարդու ամբողջ
կյանքը լի է վայր ի վերումներով թե՛ հոգևոր, թե՛
կենսապայմանների իմաստով: Ամեն վերելք լի է անկում
ապրելով, վտանգով և ընդհակառակը՝ ամեն անկում հույսն
ունի վերելք ապրելու: Հետևաբար, ապաշխարությունը,
զղջումը, խոստովանությունը մարդու ամբողջ կյանքի համար
են: Չարաչար մոլորված են և ստանուն նրանք, ովքեր
կարծում են, թե իրենք ապաշխարել վերջացրել են և այլևս
փրկված են: Ո՛չ, ապաշխարությունը տևական ուղեկից պիտի
լինի մարդու կյանքում միջև իր մահվան ժամը: Շատ մեծանուն
սրբեր և անապական սրբակենցաղ հայրեր, ովքեր իրենց
կյանքն անցկացրել են հոգևոր կյանքի մեջ
խոստովանությամբ, ապաշխարությամբ, զղջումով և
սրբությամբ իրենց մահվան մահճում, իրենք իրենց համարել
են ոչ ապաշխարած և ոչ էլ երկնքի արքայության արժանի:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ (Ս. ՊԱՏԱՐԱԳ)

Ի՞նչ է նշանակում Հաղորդություն:

- Հաղորդվել նշանակում է մի բանի մասնակից, կցորդ լինել, միանալ, իսկ այստեղ նշանակում է խորհրդաբար միանալ Հիսուս Քրիստոսին՝ մասնակցելով սուրբ Պատարագի խորհուրդին: Ահա թե ինչու Հաղորդություն նշանակում է նաև սուրբ Սեղանի վրա օրհնված և պատարագված հացն ու գինին:

Ուրեմն, ո՞րն է Հաղորդության խորհուրդը:

- Հիսուս Քրիստոսի Մարմնի և Արյան խորհուրդն է, որ հացի և գինու ձևով հաստատվեց Քրիստոսի կողմից Իր հիշատակի համար և որպես հոգևոր սնունդ՝ հավատացյալների համար:

Քրիստոս ե՞րբ հաստատեց այս խորհուրդը:

- Պասեքի կամ Ջատկի ընթրիքի սեղանի շուրջ բազմել էին Քրիստոս և Նրա տասներկու աշակերտները: Քրիստոս վերցրեց հացը, օրհնեց այն, կտրեց և տվեց Իր աշակերտներին՝ ասելով. «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ Մարմինը»: Ապա վերցրեց գինու բաժակը, գոհացավ և տվեց նրանց՝ ասելով. «Խմե՛ցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է Նոր Ուխտի Իմ Արյունը, որ հեղվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» [Մատթ. ԻՉ 26-27, հմմտ. Մարկ. ԺԴ 22-24, Ղուկ. ԻԲ 14-21, Հովհ. Չ 48-59, Ա Կորնթ. ԺԱ 23-26]:

Ինչպե՞ս են հացը և գինին Քրիստոսի Մարմին և Արյուն դառնում:

- Հացը մնում է հաց, և գինին՝ գինի՝ իրենց տեսքով ու որակով, սակայն, Հիսուս Քրիստոսի խոսքի համաձայն, նրանք իրենց գոյացության մեջ խորհրդաբար դառնում են Նրա Մարմինը և Արյունը: Այլ խոսքով, մեր զգայարանների համար հացը հաց է, իսկ գինին՝ գինի, բայց իբրև քրիստոնյա հավատում ենք մեր Փրկչի խոսքերին, թե դրանք Իր Մարմինն ու Արյունն են. իսկ սա արդեն խորհուրդ է:

Ուրեմն, եկեղեցու սուրբ Սեղանի վրա օրհնված և նվիրված Հացն ու գինին սովորական հացը և գինին չե՞ն:

- Ո՛չ: Այդ մասին Պողոս առաքյալը շատ որոշակի և կտրուկ բառերով ասում է. «Երբ հավաքվում եք միասին, Տի-

րոջ Տունը ձեզ համար հաց ուտելու տեղ չէ: Մի՞թե տուն չունեք՝ ուտելու և խմելու համար, կամ Աստուծո եկեղեցի՞ն եք արհամարհում:

Որովհետև ես ընդունեցի Տիրոջից, ինչը և ձեզ ավանդեցի, որ Տեր Հիսուս այն գիշերը, երբ մատնվեց, հաց վերցրեց, գոհություն մատուցեց, կտրեց և ասաց. «Այս է Իմ Մարմինը, որ ձեզ համար է: Արե՞ք այս Իմ հիշատակի համար»: Նույնպես և ընթրիքից հետո վերցրեց բաժակը և ասաց. «Այս բաժակը Նոր Ուխտ է Իմ Արյամբ. ամեն անգամ, որ խմեք, այս արե՞ք Իմ հիշատակի համար: Ամեն անգամ, որ ուտեք այս հացը և խմեք այս բաժակը, Տիրոջ մահը պատմեցե՞ք, մինչև որ Նա գա »:

Այսուհետև ով անարժանությամբ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ բաժակը, պարտական կլինի Տիրոջ Մարմնին և Արյանը: Թող մարդ նախ փորձի իր անձը և ապա ուտի այդ հացից և խմի այդ բաժակից, քանզի ով անարժանությամբ է ուտում և խմում, իր անձի դատապարտության համար է ուտում և խմում, քանի որ չի տարբերում Տիրոջ Մարմնին: Սրա համար է, որ ձեր մեջ շատ հիվանդներ ու ցավազարներ կան, և շատերն էլ մեռած են, որովհետև եթե մենք մեզ քննեինք, չէինք դատապարտվի» [Ա Կորնթ. ԺԱ 20-31]:

Ո՞րն է Հաղորդության արդյունքը հավատացյալի կյանքում:

- Ինչպես աղոթքը մեզ սրբում և Աստծուն է մոտեցնում, այնպես էլ, հաղորդվելով Փրկչի Մարմնին ու Արյանը, սրբվում ենք և նմանվում Նրան, Ով խաչի վրա թափեց Իր մաքուր Արյունը՝ մարդկանց մեղքի ապականություններից փրկելու համար: Եվ զգուշանում ենք մեղքերից՝ մտածելով, որ մեղքը խափանում է մեր հաղորդությունը Սուրբի և Սրբության հետ: Գրիգոր Տաթևացին ասում է. «Այս խորհուրդի գործն է՝ ավելացնել շնորհները և դեղ լինել ամենօրյա մեղքերին» («Գիրք հարցմանց», էջ 594): Այս է պատճառը, որ հաղորդվելով՝ պիտի հիշենք Հիսուս Քրիստոսի չարչարանքները:

Իսկ Հովհաննես Մանդակունի հայրապետն ասում է. «Նրանք, ովքեր հավատքով և երկյուղածությամբ են մոտենում Քրիստոսին, լուսավորվում են Սուրբ Հոգով և առաքինի գործերով օրեցօր վեր բարձրանում»:

Ե՞րբ պետք է հաղորդվել:

- Առաքելական ժամանակներում հավատացյալներն ամեն կիրակի հավաքվում էին Տերունի ընթրիքի համար: Իսկ Եկեղեցու կազմավորման առաջին շրջանում ամեն օր Պատարագ էր մատուցվում: Այս սովորությունը պահպանվել է Լատին Եկեղեցում: Մեր Եկեղեցում էլ առաջ Պատարագն ամենօրյա էր, հիմա սուրբ Պատարագ մատուցվում է շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև՝ տոնական մասնավոր օրերի և այլ առիթներով: Յուրաքանչյուր հայ քրիստոնյա պետք է հաղորդվի գոնե հինգ Տաղավարներին և մանավանդ Ծնունդի և Ջատկի տոներին:

Ինչպե՞ս պետք է պատրաստվել՝ Հաղորդություն ստանալու համար:

- Նախ՝ ինչպես առաքյալն է ասում, յուրաքանչյուր մարդ պետք է ինքն իրեն քննի՝ ինչպիսի՞ կյանքով է ապրում, ի՞նչ մեղքեր է գործել, որոնք արատավորել են իրեն և հեռացրել աստվածային սրբությունից: Այս ինքնաքննությունն անելուց հետո պետք է զղջա, խոստովանի ու պահքով և աղոթքով պատրաստվի հաղորդվելու Տեր Հիսուս Քրիստոսի մեղսաքավիչ Մարմինն և Արյանը՝ նորից չմեղանչելու որոշումով:

Ինչո՞ւ է Հաղորդության խորհուրդը Պատարագ կոչվում:

- Պատարագ բառն այլևայլ իմաստներ ունի. նշանակում է զոհ, նվեր, ընծա և այլն: Իսկ այստեղ նշանակում է Քրիստոսի ինքնազոհաբերությունը մեր փրկության համար: Քրիստոս Իրեն հաշտության պատարագ (զոհ) է մատուցում Աստծուն՝ ազատելու մարդկանց չարի կապանքներից: Սուրբ Սեղանի վրա խորհրդաբար պատարագվում է Քրիստոս՝ Անմահ Գառը՝ Իր սուրբ Մարմինն ու Արյունը բաշխելով մեզ ի քավություն և ի թողություն մեղաց:

Այս խորհուրդը կատարող քահանան կոչվում է պատարագիչ, ինչպես որ Մկրտության խորհուրդը կատարողը կոչվում է մկրտիչ:

Բոլոր մարդիկ անխտիր կարո՞ղ են հաղորդվել, երբ կամենան:

- Նրանք, ովքեր մկրտված չեն, չեն կարող հաղորդվել: Հաղորդվողը պետք է լինի հավատացյալ, իր Եկեղեցու դավանանքին և կարգուկանոնին հավատարիմ քրիստոնյա:

Հնուն, Պատարագի երկրորդ մասի ընթացքում, երբ սարկավազը ազդարարում էր՝ «Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից, մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս», չմկրտվածներին (երախա), թերահավատներին, ապաշխարողներին, անմաքուրներին հանում էին եկեղեցու գավիթ:

Սրանից հետևում է, որ չի կարելի աստվածային խորհուրդին մոտենալ առանց պատրաստվելու և առանց լրացնելու կանոնական պայմանները:

Ինչպե՞ս պետք է պատրաստվել Հաղորդությանը:

Արդեն ասվեց, որ ինքնաքննությունը, զղջումը, ապաշխարությունը, խոստովանությունը անհրաժեշտ պայմաններն են. դրանց հետևում է նաև բարեգործությունը, որովհետև մեղք գործող մարդն անպատճառ որևէ չարիք կամ վնաս հասցրած կլինի իր նմաններին. այն պետք է հատուցել և դարմանել բարեգործությամբ: Եվ վերջապես, հաղորդվելուց առաջ պետք է պաս և ծոմ պահել՝ ըստ մեր նախնիների բարեպաշտ ավանդության, որ շատ նպաստավոր է հոգևոր կյանքի համար:

Պատարագից առաջ պատարագիչը նույնպե՞ս պարտավոր է պատրաստվել:

- Այո՛, և ավելի ուշադրությամբ ու խստությամբ: Պատարագիչների պատրաստության համար մեր եկեղեցին շատ հին և ընդհանրացած սովորություններ ունի. այսպես՝ նրանք Պատարագի նախորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, պետք է մնան եկեղեցու խցերում, ծոմապահությամբ, աղոթքներով և հոգևոր ընթերցանությամբ հսկեն գիշերը, անպայման մասնակցեն առավոտյան ժամերգությանը, ապա մեծ խորհուրդը կատարելու համար սուրբ Սեղան ելնեն մաքուր մարմնով և սրբասուն խղճմտանքով:

Ո՞րն է Շնորհալի հայրապետի պատվերը պատարագիչ քահանաներին:

- Աստվածային խորհուրդին սպասավորեցեք մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հավատքով, մեծ հույսով, պարզ մտքով, կատարյալ սիրով, ահ ու դողով: Խողովակի հոսող ջրի պես անմտաբար մի՛ անցեք աղոթքի սրբազան խոսքերի մի-

ջով, որոնք մատուցում են՝ սաղմոսերգություն լինի, թե Սուրբ Գրքի ընթերցում կամ ժամերգություն, ինչպես նաև սուրբ Պատարագի և այլ սահմանված կանոնների քահանայական աղոթքներ, այլ՝ հույժ ուշադիր և, եթե կարելի է, արցունքով և մեծ երկյուղով, որպես թե նոր եք բխեցնում դրանք ձեր սրտից ու մտքից:

Ինչպե՞ս է մատուցվում Պատարագը մեր Եկեղեցում:

- Լավ մտածված կարգավորությամբ և շատ վայելուչ ու խորհրդավոր հանդիսավորությամբ. հոգեմորոզ սաղմոսներ և աղոթքներ, հոգեզմայլ երգեր, պարտ ու պատշաճ զգեստավորում, ջահավառություն, խնկարկություն և հավատացյալների սրտագին ու երկյուղած մասնակցություն արարողությանը՝ տեղին համեմատ լուռ կամ ձայնավոր հետևողությամբ:

Մեր Եկեղեցու Պատարագի արարողությունն իր մեծ վայելչությամբ խորը տպավորություն է թողնում նույնիսկ օտարազգի քրիստոնյաների վրա:

Որո՞նք են Պատարագի արարողության էական պայմանները:

- Քրիստոնեական Եկեղեցում հաստատված վաղեմի կանոնների և սովորության համաձայն Պատարագ կատարելու համար անհրաժեշտ են երեք էական պայմաններ. ա) ձեռնադրված և օծված պաշտոնյա, բ) հաց ու գինի, գ) աղոթք:

Պատարագիչը պետք է լինի Ձեռնադրությամբ և օծումով քահանայական աստիճան ունեցող եկեղեցական:

Պատարագը պետք է կատարվի զուտ և մաքուր ցորենի այլուրից թխված թարմ բաղարջ (անխմոր) հացով և անապակ (մաքուր, ջուր չխառնած) գինով:

Պատարագչի կողմից հավատքով և երկյուղածությամբ պետք է ասվեն օրհնության և սրբագործության քահանայական աղոթքներ:

Պատարագի արարողության մյուս մասերը հիմնված են այս երեք պայմանների վրա և նպաստում են խորհուրդի կատարումը վայելուչ և արտահայտությունը զգալի դարձնելուն:

Ե՞րբ են հաստատվել Պատարագի արարողության այս վայելուչ կերպերը մեր Եկեղեցում:

- Սկզբում Պատարագի արարողության կերպը շատ պարզ էր, բայց հետզհետե ճոխացավ, մանավանդ՝ սուրբ Ներսես Շնորհալի հայրապետի օրերին (+1173, օգոստոսի 16) և նրա ձեռքով: Մեր եկեղեցու Պատարագում մեծ տեղ ունեն սուրբ Յովհաննես Ոսկեբերանի (347-407) և սուրբ Գրիգոր Նարեկացու (950-1010) աղոթքները: Իսկ ավելի ուշ, ԺԴ դարից սկսած, երգվում է երաժիշտ Խաչատուր Տարոնացի վարդապետի կողմից մի հանդիսավոր առիթով ստեղծված «խորհուրդ խորին»-ը:

Ո՞րն է հավատացյալ ժողովրդի պարտքը եկեղեցում սուրբ Պատարագի ժամանակ:

- Սուրբ Պատարագը պետք է մատուցվի հավատացյալների պատկառանքով և երկյուղածությամբ լի մթնոլորտում: Ոչ մի շշուկ և փսփսուք, ոչ մի երթևեկ, վերջապես՝ ոչ մի ավելորդ շարժում ու ձայն, բացի արարողությունը կատարողների ձայնից ու շարժումից: Աշխարհական թե՛ հոգևորական՝ բոլոր հավատացյալներն իրենց ուշադրությունը պետք է սևեռեն աստվածային խորհուրդի վրա և առանց շեղվելու հետևեն աղոթքներին և երգերին:

Ցավոք, մեր եկեղեցում, հակառակ մեր ժողովրդի բարեպաշտության, այս պայմանները չեն հարգվում: Ելունուտը, աղմուկը, մանավանդ կանանց մեջ, խանգարում են արարողության մեծավայելչությանը: Մենք պետք է ուշադիր լինենք, որ այս տգեղ իրողությունները եկեղեցում տեղի չունենան:

ՊՍԱԿ

Ի՞նչ է պսակը:

- Պսակը այր ու կնոջ ամուսնության խորհուրդն է:

Ինչո՞ւ է ամուսնությունը խորհուրդ:

- Որովհետև այր և կնոջ միավորությունը օրհնվում և կնքվում է Աստուծո անունով. «Աստուծո միացրածը մարդը թող չբաժանի» [Մատթ. ԺԹ 5-6]:

Պողոս առաքյալը այր և կնոջ ամուսնական միավորությունը նմանեցնում է Քրիստոսի՝ Իր եկեղեցու հետ միությանը:

Եվ իսկապես, մարդկային ցեղի մաքուր և առողջ աճը, Քրիստոսի Եկեղեցու բարգավաճումն ու պայծառությունը կախված են օրինավոր ամուսնության արդյունքից: Եվ որովհետև Քրիստոս և Իր Եկեղեցին իբրև մեկ մարմին նույնացած են, հարկ է, որ ամուսնացողները, իբրև աստվածային պատվերը («աճեցե՛ք և բազմացե՛ք») կատարողներ, կատարելապես զիտակ և հավատարիմ լինեն իրենց միավորման ուխտին և նպատակին: Երկու էակների միությունն ինքնին խորհրդավոր է, և Եկեղեցին այն դարձրել է յոթ խորհուրդներից մեկը՝ հիմնվելով աստվածային պատգամի և օրհնության վրա:

Ուրիշ ի՞նչ կարելի է ասել այս խորհուրդի մասին:

- Ամուսնությունը հիմնված է ողջախոհության վրա, որովհետև նրա նպատակը որդեծնությունն է: Այր և կին, իբրև իրենց Եկեղեցու ճշմարիտ անդամներ, պետք է մաքրակենցաղ լինեն, որպեսզի իրենց միությունն արդյունավոր լինի, տուն, ընտանիք կազմվի, և Եկեղեցին զորանա նոր ուժերով:

Եվ որովհետև ամուսնությունը հիմնված է ողջախոհության վրա, այր ու կին պետք է զգուշանան բղջախոհությունից և չապականեն իրենց ամուսնական միության սրբությունը պոռնկությամբ և շնությամբ:

Կարո՞ղ ես հիշել Պողոս առաքյալի խոսքերն ու խրատներն այս մասին:

- Այո՛: Եփեսացիների թղթում այր և կնոջ ամուսնական կյանքի պարտավորությունները և նրանց՝ իրար նկատմամբ պարտականությունները բացատրելիս նա ասում է. «Յնազանդվեցե՛ք միմյանց Քրիստոսի երկյուղով: Կանայք թող հնազանդ լինեն իրենց ամուսիններին, ինչպես Տիրոջը: Որովհետև ամուսինն է կնոջ գլուխը, ինչպես Քրիստոս գլուխն է Եկեղեցու, և Ինքն է Փրկիչը այդ մարմնի: Եվ ինչպես Եկեղեցին հնազանդվում է Քրիստոսին, այնպես էլ կանայք թող հնազանդվեն իրենց ամուսիններին ամեն ինչում: Այրեր, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց Եկեղեցին և Իր անձը մատնեց նրա համար Ով սիրում է իր կնոջը, իրեն է սիրում Սրա համար այրը պիտի թողնի իր հորն ու մորը և զնա իր կնոջ ետևից, և երկուսով պիտի լինեն մեկ մարմին: Մեծ է այս խորհուրդը,

բայց ես ասում եմ Քրիստոսի և Եկեղեցու վերաբերյալ» [Եփես. Ե 21-23]:

Ինչպե՞ս է կատարվում Պսակի արարողությունը:

- Մեր Եկեղեցում Պսակ կատարելու իրավունքը քահանայինն է: Պսակվողները գալիս են Եկեղեցի: Աստուծո՞ւ և հանդիսությամբ ներկա մարդկանց առջև քահանան նրանց հարցնում է՝ իրենց ազատ կամքով են եկել պսակվելու և, հաստատական պատասխան ստանալով, միացնում է նրանց այժմեային ու ճակատները և խրատում, աղոթում, օրհնում նրանց միությունը:

Ամուսնական միությունը կարո՞ղ է քակվել կամ լուծարվել:

- Ինչպես որ Քրիստոս չի զատվում Իր Եկեղեցուց, այնպես էլ պսակված ամուսինները չեն կարող բաժանվել միմյանցից: Ուրիշ խոսքով, ամուսնական միությունը սկզբունքորեն անլուծելի է:

Ըստ Ավետարանի՝ ամուսնալուծման օրինական պատճառ կարող է լինել միայն շնությունը: Բայց Եկեղեցին վաղ ժամանակներից, նկատի առնելով ամուսնական կյանքում երևան եկող մի շարք լուրջ պատճառներ, որոնք արգելք են դառնում ամուսնական միությունն իրագործելուն կամ խանգարում են այդ միությանը, ընդունել է ամուսնալուծությունը՝ միությունն արգելակող օրինական պատճառները քննելուց և ստուգելուց հետո միայն:

ԾԱՆՈԹ. Այսօր աշխարհում նկատի ունենալով ամուսնության կարևորությունը և նրա վերաբերյալ խնդիրները հասարակական և քաղաքական կյանքի տեսակետից՝ ամուսնության արտոնությունը վերապահված է քաղաքային իշխանությանը: Սա պետական օրենք է դարձել: Այնպես որ, երբ օրինապես չափա-հաս դարձածներն ուզում են ամուսնանալ, դիմում են քաղաքային իշխանությանը և հայտարարում, որ պիտի ամուսնանան: Վկաների ներկայությամբ արձանագրվում են նրանց ինքնության և բնակության վերաբերյալ կարևոր տեղեկությունները: Դրանից հետո նրանք ազատ են՝ կենցաղավարելու իբրև օրինավոր այր և կին:

Բայց քրիստոնեական աշխարհում ամուսնացողները, հարգելով հանդերձ երկրի օրենքը, քաղաքային ամուսնության արտոնության ձևակերպությունները լրացնելուց հետո Եկեղեցի են գնում՝ պսակադրությամբ օրհնելու իրենց ամուսնությունը:

Որո՞նք են ամուսնության համար անհրաժեշտ պայմանները:

- Չափահասություն, կանոնական հասություն, դավանական և ազգային նույնություն, փոխադարձ հոժարություն և սեր:

Չափահասության տարիքը կախված է կլիմայից և երկրի օրենքներից: Արբունքի չհասածները և անչափահասները չեն կարող ամուսնանալ:

Կանոնական հասություն նշանակում է ազգականական որոշակի աստիճան: Իբրև առողջ սերունդ ունենալու պայման՝ ամուսնացողներն ազգականությամբ ու արյունով որքան հեռու լինեն իրարից, այնքան հարգած կլինեն Եկեղեցու կանոնները, որոնք հիմնված են առողջապահական սկզբունքների վրա: Հին կանոններով՝ տղան յոթ պորտ, յոթ ճյուղ կամ յոթ աստիճան հեռու պիտի լինի այն աղջկանից, ում հետ ամուսնանում է:

Նախկինում նույնքան խիստ էին խնամիական և հոգևոր ազգականության (սանահայրություն կամ կնքահայրություն) աստիճանները, բայց այժմ դրանք գրեթե անուշադրության են մատնված, և ուշադրություն է դարձվում միայն ազգականական կամ արյունակցական կապի աստիճանին:

Տղայի և աղջկա՝ միևնույն դավանության և ազգության պատկանելը շատ կարևոր է ընտանեկան կյանքի խաղաղության և երջանկության համար:

Իսկ ամուսնացողների փոխադարձ հոժարությունն ու սերը անհրաժեշտ պայմաններ են՝ ամուսնության բնական և բարոյական պարտականությունները կատարելու համար: Միայն այս պայմանը հարգելով են խափանվում բռնի ամուսնություններն ու այլ անպատեհությունները:

Կարո՞ղ է ամեն օր Պսակ կատարվել:

- Ողջախոհության և բարեպաշտության հիմքերի վրա մեր Եկեղեցին կանոնադրել է, որ Պահոց և Տերունի օրերին Պսակ չօրհնվի, և հարսանիք չարվի: Սա շատ գեղեցիկ է, և երանի՜ թե մեր Եկեղեցու զավակները կարողանային լիովին հարգել իրենց ազգային և եկեղեցական սովորությունները:

Ամուսնությունը կրկնելի՞ է:

- Այո՛, երբ կողմերից մեկը մեռնի, և երբ օրինական ամուսնալուծության հետևանքով մեկ կամ մյուս կողմն արտոնված լինի նորից ամուսնանալու:

Եթե մարդը երկու անգամ կորցնում է կնոջը, եկեղեցական կանոնը թույլատրում է, որ նա երրորդ անգամ պսակվի: Ավելին հակառակ է ոչ միայն կանոնին, այլ նաև բարոյագիտությանը:

Երբ ամուսիններից մեկը որևէ պատճառով կորչի, ամուսնությունը լուծարվո՞ւմ է:

- Այո՛, եթե ամուսիններից մեկը կորչի, և յոթ տարի որևէ լուր և տեղեկություն չլինի նրա մասին, մյուսը կարող է ամուսնանալ, եթե կամենա: Եվ եթե յոթ տարի անցնելուց հետո կորած կողմը հայտնվի, նա ազատ է և կարող է ամուսնանալ ուրիշի հետ:

Դարձյալ՝ եթե ամուսիններից մեկը փոխի իր քրիստոնեական հավատքը կամ խախտի ամուսնական կյանքի միության և խորհուրդի պայմանները, հոգևոր իշխանությունը կարող է մարդասիրական հատուկ կարգադրություններ անել:

Ըստ Ավետարանի՝ պոռնկությունն ու շնությունը խախտում են ամուսնական միությունը և եղծում խորհուրդը, հետևաբար ամուսնությունը լուծվում է, իսկ հանցավոր կողմը դատապարտվում և զրկվում է վերստին ամուսնանալու իրավունքից:

Եթե իրենց պսակի ապականության համար երկու կողմերն էլ մեղավոր են կամ եթե երկու կողմերն էլ ֆիզիկապես և բարոյապես ընդունակ չեն եղել ընտանիք կազմելու և գալթակողությունների տեղիք են տվել, ամուսնությունը լուծվում է, և երկուսն էլ զրկվում են վերստին ամուսնանալու իրավունքից:

Ո՞վ է իրավասու լուծել ամուսնությունը:

- Հոգևոր վերին իշխանությունը: Եկեղեցին է պսակում և եկեղեցին էլ լուծում է պսակը: Քահանան պսակում է եկեղեցու անունով, բայց լուծել չի կարող: Ամուսնությունը լուծելը հոգևոր վերին իշխանության իրավասությունն է՝ օրինական քննություններ կատարելուց հետո, թե՛ ժողովների միջոցով, թե՛ ուղղակի:

Իսկ հոգևոր իշխանությունը ներկայանում է եպիսկոպոսությանը: Նրանք, եթե առաջնորդական պաշտոն ունեն, կարող են զբաղվել ամուսնական խնդիրներով: Բայց ամենից վերև կաթողիկոսն է, որ իշխանություն և իրավասություն ունի վերջին խոսքն ասելու և վճիռներ արձակելու՝ ամուսնական խնդիրներ լուծելու համար:

ԿԱՐԳ ԵՎ ՕԾՈՒՄՆ ՉԻՎԱՆԴԱՑ

Ի՞նչ է Կարգ հիվանդաց անվանվող խորհուրդը:

- Չիվանդությունը, որ կողմից էլ դիտելու լինենք, իր ծագումով հետևանքն է մարդու տգիտության և սխալների, ինչպես ասվում է՝ նրա կամա -ակամա գործած մեղքերի: Կան հիվանդություններ, որոնք ժառանգական են, կան հիվանդություններ էլ, որոնց պատճառը մենք ենք:

Եթե մարդիկ ապրեին շնորհի կյանքը իրենց աստվածային նկարագրի համեմատ, չէին հիվանդանա: Ուրեմն, մարդկանց հակասաստվածային կյանքն ու կենցաղն են պատճառը նրանց հիվանդությունների: Ուրիշ խոսքով, հիվանդը մեղավոր մարդն է, որ հեռացել է Աստծուց: Չետևաբար, մեղավորը պետք է խոստովանի իր մեղքերը և զղջա, իսկ Եկեղեցին՝ աղոթի, որպեսզի հիվանդը խոստովանությամբ թեթևանա և աղոթքով զորանայ: Այս է Չիվանդաց կարգը, որ սկզբունքով նույնանում է Ապաշխարության խորհուրդի հետ:

Ի՞նչ է հիվանդաց օծումը:

- Չիվանդներին յուզով օծելը հրեական հին սովորություն էր, որ շարունակվեց նաև առաքելական ժամանակների Եկեղեցուն: Երբ Չիսուս Քրիստոս Իր աշակերտներին իշխանություն տվեց և առաքեց նրանց, որպեսզի դաստիարակեն ժողովուրդներին, Մարկոս ավետարանիչն ասում է, որ նրանք քարոզում էին, յուզով օծում հիվանդներին և բժշկում նրանց [տե՛ս Մարկ. Զ 12-13, Մատթ. Ժ 1]: Իսկ Չակոբոս առաքյալն ասում է. «Չիվանդ է ձեզանից մեկը, թող կանչի Եկեղեցու երեցներին, և նրա վրա թող աղոթք անեն, թող յուզով օծեն նրան Տիրոջ անունով: Եվ հավատքով արված աղոթքը կփրկի հիվանդին,

Տերը ոտքի կկանգնեցնի նրան, և եթե մեղք գործած լինի, այդ կնեղվի նրան» [Յակ. Ե 14-15]:

Հարկ է նշել, որ այս խորհուրդը սխալաբար, կամ ավելի ճիշտ հետևելով լատինների անվանվել է վերջին օծում: Սակայն ուղղափառ մոտեցումը այս խորհուրդին այլ է: Այն ոչ թե սոսկ վերջին օծում է, այլ օծում է բժշկության համար, որպեսզի մարդը հնարավորություն ունենա վերստին առողջանալու հոգով և մարմնով: Այդ պատճառով էլ այն պետք է կոչել օծումն կամ կարգ հիվանդաց:

Ուրեմն, ինչո՞ւ հիմա հիվանդներին չեն օծում:

- Մեր Եկեղեցում հիվանդների օծում կատարվել է: Հետո այն խափանվել է շատ տրամաբանական պատճառով, որովհետև մարդիկ չգիտեն՝ երբ, որտեղ, ինչպես պիտի հիվանդանան և մեռնեն. տա՞նը, ճամփորդելի՞ս, հանկա՞րծ, թե՞ երկարատև կամ կարճատև հիվանդությունից, որևէ արկածի՞ց, թե՞ թշնամու ձեռքով: Եվ որպեսզի հավատացյալներն առանց բացառության չզրկվեն Վերջին օծումից, մեր Եկեղեցում այն միացված է Առաջին օծումին, այսինքն՝ Դրոշմին:

Մկրտվածների ո՞ր տեղերն են դրոշմվում:

- Ճակատը, սիրտը, թիկնամեջը, ինչպես նաև աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը և ոտքերը: Առաջին երեքը Դրոշմի խորհուրդի նշաններն են, իսկ մնացածը՝ Վերջին օծումի:

Ե՞րբ է դադարել Վերջին օծումի առանձին կատարումը մեր Եկեղեցում:

- Գրիգոր Տաթևացուց (+1410) շատ առաջ, որովհետև այս նշանավոր վարդապետն իր «Գիրք հարցմանց»-ում (էջ 604-605) բացատրություններ է տալիս այս մասին և ասում. «Մկրտվողի վրա Առաջին օծումը (Դրոշմը) և Վերջին օծումը միասին ենք կատարում»: Եվ նշում է, որ խոստովանությունը Հիվանդաց կարգի համար անհրաժեշտ նախապայման է: Ուրիշ Եկեղեցիներ այն վերացրել են և պահպանել միայն յուրով օծումը, և հավատացյալները, փոխանակ խոստովանությամբ սրբվելու, իրենց հույսը դրա վրա են դնում՝ ասելով՝ վերջին օրը բալասանի ձեթով կօծվենք և կարդարանանք: Ահա թե ին-

չու եկեղեցու հայրապետները նպատակահարմար համարեցին վերացնել այն:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է Ձեռնադրությունը:

- Ավետարանը քարոզելու և խորհուրդները կատարելու համար հատուկ պատրաստություն ստացած անձանց՝ այդ աստվածային պաշտոնին նվիրվելու խորհուրդն է, որ կատարվում է շատ ազդեցիկ արարողությամբ: Ձեռնադրության փոխարեն ասվում է նաև Կարգ քահանայության կամ խորհուրդ կարգի, որովհետև եկեղեցուն քահանայության աստիճանն է, որ իրավունք է տալիս ընծայվածին՝ կատարելու խորհուրդները:

Ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ Ձեռնադրության համար:

- Այն անձինք, ովքեր կամենում են ձեռնադրվել և աստվածային ծառայության նվիրվել, պետք է.

ա) չափահաս լինեն, ինչպես նաև մարմնական, մտավոր և հոգեկան անթերի վիճակ ունենան.

բ) կոչմանը համապատասխանող մտավոր և հոգևոր պատրաստվածություն ունենան.

դ) հարմար և արժանավոր լինեն աստվածային պաշտոնին.

ե) անձնական կամ ներքին վկայություն ունենան իրենց արժանավորության մասին, ինչպես նաև վկայություն եկեղեցու (ժողովրդի) կողմից:

Ո՞վ է կատարում Ձեռնադրությունը:

- Ձեռնադրությունը կատարում է Եպիսկոպոսը: Իսկ նվիրագործվում է այն օծումով:

Կարո՞ղ ես ամփոփ կերպով ասել՝ ինչպե՞ս է կատարվում Ձեռնադրության արարողությունը մեր եկեղեցուն:

ա) Եպիսկոպոսը հրապարակային քննությամբ ստուգում է ընծայալի արժանավորությունը՝ վերոհիշյալ հինգ կետերի համաձայն:

բ) Մասնավոր քննության է ենթարկում ընծայյալի հավատքի և դավանանքի ուղղափառությունը:

գ) Աղոթքներ, ընթերցվածներ Սուրբ Գրքից և շարականներ:

դ) Ձեռնադրություն և քահանայական զգեստավորում:

ե) Օծում, որով և նվիրագործվում է Ձեռնադրությունը, և ձեռնադրվածը կոչվում է տեր (այսինչ) քահանա:

Մեր Եկեղեցում քահանայական աստիճանից բարձր և ցածր ի՞նչ աստիճաններ կան:

- Քահանայությունից վար վեց աստիճան կա, իսկ նրանից վեր՝ երեք:

Վարի վեցը կոչվում են փոքր աստիճաններ: Դրանք են. ա) դռնապանություն, բ) ընթերցողություն, գ) երդմնեցուցչություն, դ) ջահընկալություն, ե) կիսասարկավագություն, զ) սարկավագություն:

Վերի երեք աստիճաններն են. է) քահանայություն, ը) եպիսկոպոսություն, թ) կաթողիկոսություն:

Բոլորը միասին՝ ինն աստիճան:

Այժմ մեր Եկեղեցում գործնականապես կա՞ն փոքր աստիճանները:

- Այո՛, Ձեռնադրության մաշտոցի մեջ դրանք կան, և քահանայության կոչվողը Ձեռնադրությամբ ստանում է վեց աստիճանները, հետո՝ քահանայականը:

Բայց մեր Եկեղեցու գործնական կյանքում փոքր աստիճաններից առաջին չորսը կոչվում են դպրություն: Դպիրները՝ ձեռնադրված լինեն, թե ոչ, շապիկ են հագնում, կիսասարկավագի պաշտոն կատարում, երգում շարականներ և մասնավորապես՝ սուրբ Պատարագի երգերը: Ընդհանրապես, դպիրները ձեռնադրված են լինում և մեծ եկեղեցիներում ունենում են իրենց հատուկ կազմակերպությունը՝ դպրաց դաս անունով:

Եկեղեցում կան նաև ժամկոչներ և լուսարարներ, որոնք չունեն փոքր աստիճաններից և ոչ մեկը և ամսական աշխատավարձով աշխատողներ են:

Կան նաև (անշուշտ, ոչ հաճախ) ուրարակիրներ՝ կիսասարկավագների և ավագ սարկավագների փոխարեն, որոնք

սպասավորության են կոչվում միայն եպիսկոպոսի հրամանով և կատարում են սարկավագության պաշտոն, բացի վերաբերումից:

Կիսասարկավագությունը գործնականում չկա, իսկ սարկավագությունն ընդհանրապես մեծ եկեղեցիներում կամ վանքերում պահված է մնում իբրև կուսակրոն քահանայության հանգրվան:

Ի՞նչ է կղերիկոսությունը:

- Կղերիկոս կամ կղեր նշանակում է ժառանգավոր, այսինքն՝ այն անձը, ով աստիճանաբար ժառանգում է Եկեղեցու փոքր աստիճանները և պատրաստվում: Կղերիկոս կոչման տակ այժմ հասկացվում են փոքր աստիճան ունեցողները: Ձեռնադրության մաշտոցի սկզբում կա կղերիկոսության մի հատուկ արարողություն: Այդ արարողությամբ ընծայյալին տրվում է ավելածվի կամ սաղմոսերգվի պաշտոն:

Ի՞նչ է վարդապետությունը:

- Վարդապետությունը մեր Եկեղեցում Ձեռնադրությամբ տրվող աստիճան է այն կուսակրոն քահանաներին, որոնք իսկապես ուսյալ և հմուտ են աստվածաբանական կրթության մեջ, որովհետև նրանց պաշտոնն է քարոզել, մեկնել Սուրբ Գիրքը, բացատրել Եկեղեցու ուղղափառ դավանանքը և ուսուցանել: Վարդապետ բառը նշանակում է ուսուցիչ և հնուց ի վեր գործածվել է հոգևոր իմաստով, այսինքն՝ վարդապետը հոգևոր կյանքի ուսուցիչն է:

Ո՞վ կարող է տալ վարդապետության աստիճան:

- Այն եպիսկոպոսները, ովքեր արդեն ստացել են այդ աստիճանը: Հնում ոչ բոլոր եպիսկոպոսներն ունեին վարդապետական աստիճան, ուստի միայն վարդապետ-եպիսկոպոսը կարող էր վարդապետության աստիճան տալ: Սրան հակառակ, ծայրագույն վարդապետը, որ եպիսկոպոսության աստիճան չունի, կարող է վարդապետության աստիճան տալ: Իսկ այն եպիսկոպոսները, ովքեր վարդապետական աստիճան չունեն, եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո ստանում են:

Քանի՞ աստիճան է վարդապետությունը:

- Տասնչորս աստիճան, որի առաջին չորսը մասնավոր վարդապետի աստիճաններ են, իսկ մնացած մասը՝ մեծ կամ ծայրագույն վարդապետի: Վարդապետական աստիճանի խորհրդանշանն է օձագլուխ կամ խաչածև գավազանը:

Բուն վարդապետները ծայրագույններն են, որոնք մեծ հեղինակություն կամ իշխանություն էին վայելում Եկեղեցուն:

Ի՞նչ է եպիսկոպոսությունը:

- Եպիսկոպոսությունն նշանակում է տեսչություն: Եպիսկոպոսն իր թեմի կամ վիճակի հոգևոր տեսուչն է. նա իսկում և կազմակերպում է իր վիճակի հոգևոր կյանքը, պայծառացնում Եկեղեցիները, բարեկարգում ծիսական և պաշտամունքային կյանքը: Եպիսկոպոսի պարտքն ու պաշտոնն է նաև իր տեսչության ներքո գտնվող Եկեղեցիների համար պաշտոնյաներ պատրաստելը և նրանց ձեռնադրելը:

Ո՞վ է կաթողիկոսը:

- Կաթողիկոսը Հայաստանյայց Եկեղեցու ընդհանուր և գերագույն պետն է: Կոչվում է նաև քահանայապետ, եպիսկոպոսապետ: Կաթողիկոսն է ձեռնադրում եպիսկոպոսներին և օրհնում սրբալույս մեռոնը: Կաթողիկոսն է լուծում և վճռում Եկեղեցուն և ամուսնությանը վերաբերող ամեն տեսակի դժվարին խնդիրները, բացառիկ կարգադրություններ և տնօրինություններ անում Եկեղեցու պետքերի և հանգամանքների համեմատ:

Ի՞նչ է կուսակրոնությունը:

- Կուսակրոն են այն եկեղեցականները, ովքեր չեն ամուսնանում և բնակվում են վանքում: Կուսակրոն քահանաները կոչվում են աբեղա:

Կարող են ամուսնանալ փոքր աստիճան ունեցողները և քահանաները, իսկ նրանք, ովքեր նվիրվում են վանական կյանքին, չեն ամուսնանում: Կուսակրոն են վանական սարկավազները, վարդապետները, եպիսկոպոսները և կաթողիկոսները:

Ինչո՞ւ նրանք չեն ամուսնանում:

- Որպեսզի աշխարհիկ հոգսերից ազատ լինեն և իրենց ամբողջ ժամանակը, ուժը և ուշադրությունը նվիրեն իրենց հոգևոր գործին:

Չէ՞ որ կային ամուսնացած առաքյալներ, և մեր Եկեղեցում նույնիսկ կաթողիկոսներ՝ սուրբ Գրիգոր Լուսավորչից մինչև մեծն Սահակ, ամուսնացած էին:

- Այո՛, բայց միաժամանակ կային նաև չամուսնացած առաքյալներ և եկեղեցականներ: Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և նրա որդին՝ Վրթանեսը, ամուսնացած էին, բայց կուսակրոն էր նրա Արիստակես որդին, որ հաջորդեց նրան: Սակայն ամուսնանալու սովորությունը քահանայությունից վեր աստիճանների մեջ հետո հետզհետե վերացավ:

Պողոս առաքյալը թե՛ եկեղեցականներին և թե՛ աշխարհականներին ազատ է թողնում իրենց կենցաղի ընտրության մեջ:

Ավելի ճիշտ չի՞ լինի, եթե գայթակղություններից զերծ մնալու համար բոլոր եկեղեցականներն ամուսնանան:

- Պետք է իմանալ, որ հայ եկեղեցականների մեծագույն մասը՝ քահանաները, ամուսնացած են, և քչերն են կուսակրոն: Դարձյալ, ամուսնությունը դեռ բացարձակ երաշխիք չէ՝ գայթակղություններից և փորձություններից զերծ մնալու համար, որովհետև ամուսնությունը չէ գայթակղության պատճառը, այլ միջավայրը և նկարագիրը: Յետևաբար, ավելի տրամաբանական և ավելի բարոյագիտական է եկեղեցական դառնալ փափագողներին ազատ թողնել՝ իրենց անձնական գիտակցությամբ ընտրելու իրենց կենցաղը:

Եվ որովհետև Եկեղեցու մեջ բարձր աստիճանները վերապահված են կուսակրոններին, այս խտրականությունը վերացնելու համար պետք է հիմք ընդունել ոչ թե թեկնածուների ամուսնացած կամ ամուսնի լինելը, այլ արժանիքները՝ մտավոր և հոգեկան պատրաստվածությունը, եկեղեցական պաշտոնին հարմար լինելը, նկարագիրը:

Ինչպիսի՞ն պետք է լինի հոգևորականների նկարագիրը:

- Հոգևորականը պետք է լինի իսկապես բարի, հավատքի և ծառայության մարդ, որովհետև միայն մտավոր պատրաստությունը բավական չէ՝ նվիրական պաշտոնը ստանձնելու

համար: Քահանայից մինչև կաթողիկոս՝ բոլորը, ըստ իրենց աստիճանի ու դիրքի, ծառայելու կոչում ունեն և իրենց ծառայությունը պետք է անեն բարի սրտով, անկեղծ հավատքով և բոլորանվեր հոգով, որպեսզի հավատացյալներին առաջնորդեն քրիստոնեական կյանքի մեջ, Եկեղեցին լինի ներշնչման մշտալույս կենտրոն, որտեղ տիրի եղբայրասիրությունը, ազատությունը, և որտեղ մխիթարվեն դժբախտների և տրտմածների հոգիները: Որքան նվիրական է եկեղեցականի պաշտոնը, այնքան ծանր է նրա պատասխանատվությունը, այնպես որ, եթե նա չունի բարություն, հավատք և նվիրված հոգի, չի կարող կատարել իր պարտքն ու պաշտոնը:



ՀՈԳԵՎՈՐ ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկեղեցու աստվածաշտության կամ ծեսի բաղկացուցիչ մաս են կազմում հոգևոր բարեպաշտական արարողությունները: Դրանցից ներկայացվում են խաչակնքվելը, տնօրհները, մոմավառությունը, մատաղը, հոգեհանգիստը և տրվում են որոշ տեղեկություններ սրբապատկերի մասին:

ԽԱՉԱԿՆՔՎԵԼ

Խաչակնքման սովորությունն այնքան հին է, որքան քրիստոնեությունը և հատուկ է բոլոր ուղղափառ եկեղեցիներին: Հին աշխարհում և հռոմեական կայսրությունում խաչը համարվում էր անարգ մահվան, նախատինքի, չարչարանքների միջոց: Քրիստոս, գամվելով մահվան խաչին, մեր փոխարեն հանձն առավ մահը, Ինքը կրեց աղամական մեղքի անեծքը, և մահվան գործիքն Իր գործությամբ վերափոխեց հավիտենական կյանքի խորհրդանիշի: Առաքելական շրջանում, մանավանդ 1-2-րդ դարերում, հալածանքների ժամանակ հավատացյալներն իրար հետ ծանոթանում էին «կուրծքը խաչակնքելով»: Ահա թե ինչու թե՛ հնում և թե՛ այսօր բոլոր ճշմարիտ քրիստոնյաները խաչակնքվում են աղոթքի սկզբում և վերջում, եկեղեցի մտնելիս և ելնելիս, սրբություններին մոտենալիս, փողոց դուրս գալիս, որևէ աշխատանք սկսելիս և այլ պատեհ առիթներով:

Խաչակնքվելը ամուր վահան է ընդդեմ դիվական ներգործությունների: «Եթե դու ջերմեռանդությամբ խաչակնքվես, ապա ոչ մի չար ոգի չի կարող քեզ մոտենալ, որովհետև նա կտեսնի այն զենքը /խաչը/, որով Հիսուս Քրիստոս մահացու խոցեց նրան և կործանեց սատանայի ու նրա արբանյակների ողջ չար գորությունը», - գրում է Ս. Հովհան Ոսկեբերանը:

Խաչակնքելով մենք հիշում ենք Տեր Հիսուս Քրիստոսի փրկարար մահը խաչի վրա, հայցում ենք Նրա օգնությունը, ողորմությունն ու օրհնությունը, քանզի խաչի գորությունը Քրիստոսն է: Պողոս առաքյալն ասում է. «Մեզ՝ փրկվածներիս համար խաչի գորությունը Աստծու գորությունն է» (Ա Կորնթ. Ա18):

Խաչակնքվելը նշանակում է մեր հին, մեղավոր էության դատապարտում և նոր, անմեղ էության ծնունդ կամ Ադամի մահ և Քրիստոսի ծնունդ, հին մարդու վերջ և նոր մարդու սկիզբ:

Առաքելական շրջանի նախնի եկեղեցուն տարածված էր մի շատ ծանոթ երգ, որն ամբողջությամբ պահպանվել է Պողոս առաքյալի՝ եփեսացիներին ուղղված նամակում. «Վեր կաց դու, որ ննջում ես, կանգնիր մեռելների միջից, և Քրիստոս պիտի լուսավորի քեզ» (Եփես. 5 : 14):

Քնածն այստեղ Ադամն էր, որ մեռավ: Ավանդությունը Քրիստոսի խաչելության վայրը Գողգոթայի վրա նույնացնում է Ադամի գերեզմանի հետ: Դրա համար էլ հնում խաչի տակ զանգ էին նկարում /Ադամի զանգը/: Այսպիսով, խաչակնքվելիս մենք հաստատում ենք, որ մեռանք որպես Ադամ և կենդանացաք՝ որպես Քրիստոս:

Խաչակնքվում ենք հետևյալ կերպ. միացնում ենք աջ ձեռքի առաջին երեք մատները /բթամատ, ցուցամատ և միջնամատ/, հպում ճակատին՝ ասելով «յանուն Զօր», իջեցնում կրծքին՝ ասելով՝ «և Որդւոյ», տանում կրծքի ձախ կողմը՝ ասելով՝ «և Զոգւոյն», ապա կրծքի աջ կողմը՝ ասելով՝ «Սրբոյ», և դնում կրծքի վրա ու ասում «Ամեն»: Մյուս երկու մատները /ճկույթը և մատնենատը/ միասին սեղմում ենք ափին, որը խորհրդանշում է, որ Քրիստոս կատարյալ Աստված է և կատարյալ մարդ:

Խաչակնքվելիս հարկավոր է գլուխը փոքր-ինչ խոնարհել, որով մեր հնազանդությունն ենք արտահայտում Աստծուն:

Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու, երբ ձեռքը տանում ենք դեպի վեր, ուզում ենք ասել, որ մեր միտքը, էությունը գամվեց խաչի վրա և թող այսուհետ Քրիստոսի միտքը գրավի մեզ:

Երբ ձեռքը տանում ենք դեպի ներքև, ուզում ենք ասել, որ մեր մարմինը չէ, որ պիտի թելադրի մեզ /այն մեռավ խաչի վրա/, այլ թող Քրիստոս թելադրի մեզ իր կամքը:

Ձախ և աջ տանելով՝ ուզում ենք ասել, որ մեր ձեռքերը նույնպես խաչվեցին, որոնք չար գործելու համար արդեն անպիտան են և պիտի միայն բարին գործեն:

Ձեռքերը բացած տանելով դեպի սիրտը և ասելով «Ամեն», հաստատում ենք և համաձայնվում այդ ամենին /«ամեն»

Եբրայերեն բառ է, որ նշանակում է «թող այդպես լինի», «ճշմարիտ է»/:

Ի դեպ, հայերենում «խաչակնքվել» բառն ինքնին ճիշտ է արտահայտում իմաստը՝ խաչ և կնքվել, խաչի կնիքը դնել մեզ վրա. այսինքն՝ կնքվել Ավետարանի ողջ ճշմարտությամբ, իսկ կնքվողը պատկանում է կնքողին՝ Աստծուն:

ՏՆՕՐՅՆԵՔ

Ինչպես վկայում է Ս. Գրիգոր Տաթևացին տնօրհներքն իբրև արարողություն հիմնադրվել է Հարուցյալ Փրկչի կողմից.

«... Հարությունից հետո Քրիստոս վերնատուն մտավ և օրհնեց աշակերտներին, որի համար նույն խաչն ու Ավետարանը /խորհրդանշում են Հիսուս Քրիստոսին/ տանելով տուն օրհնում ենք մեր բնակարանները»:

Մեր Տիրոջ Հիսուսի Համբարձումից հետո Հիսուսի տասներկու առաքյալները, հետևելով Տիրոջ օրհնակին, Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Հարության բարի լուրն ավետելու և օրհնելու համար այցելում էին հավատացյալների տները: Ուստի և այս ավանդությունը հետագայում շարունակեցին առաքյալների հետևորդները՝ ձեռնադրված և օծված քահանաները: Համաձայն վերոհիշյալ ավանդության՝ հայ եկեղեցականը Հիսուսի Ծննդյան ու Ջատիկի տոների առիթներով այցելում է հավատացյալների տները՝ պատշաճ արարողությամբ օրհնում նրանց և բնակարանները և տալիս օրվա ավետիսը:

Տնօրհների ժամանակ քահանայի կողմից օրհնվում է հիմնականում տունը, տան հացը, ջուրը և աղը: Արարողության վերջում, որպես օրհնության և առատության մնայուն նշան, քահանան տան անդամներին նշխար է տալիս, որը պետք է սրբությամբ պահվի ալյուրի մեջ կամ մի այլ վայելուչ տեղ՝ ի նշան տան ունեցվածքի առատության, բերրիության ու հաջողության:

Տնօրհներ է կատարվում նաև, երբ նոր բնակարանամուտ է լինում կամ անհաջողությունների պատճառով խախտվում է տան խաղաղությունը ու երբ տանն զգացվում է չար ուժերի ներգործություն:

Քանի որ այս արարողությունը կարևոր է մեր ընտանեկան համերաշխության, ամրության ու խաղաղության համար, ուստի անհրաժեշտ է և պատշաճ, որ բանիմաց քրիստոնյան ինքը գնա եկեղեցի և քահանային հրավիրի տնօրհներքի:

ՄՈՍՎԱՎՈՒԹՅՈՒՆ

Եկեղեցուն մոմ վառելու ծիսական սովորությունը մեզ է հասել դեռևս եկեղեցու կազմավորման շրջանից, երբ Քրիստոսի հետևորդները հալածական վիճակում թաքնվում էին քարայրերում և մոմի լույսի ներքո քրիստոնեական պաշտամունք կատարում: Հետագայում այս ավանդությունը պահպանվել է բոլոր քրիստոնեական եկեղեցիներում և հանդիսացել ծիսակարգի բաղկացուցիչ մաս:

Աստծու տաճարում վառվող մոմի լույսը խորհրդանշում է քրիստոնյայի հավատը նյութականացված ձևով: Ինչպես մոմն այրվելով լուսավորում է շրջապատը, այնպես էլ քրիստոնյան, առաջնորդվելով Հիսուսի պատգամով «Դուք եք աշխարհի լույսը» ձգտում է ճշմարիտ, քրիստոնեավայել կյանք ապրելով լուսավորել իր շրջապատը:

«Թող այնպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթեոս 5 : 16):

Եկեղեցուն քրիստոնյայի մոմ գնելը և վառելը նկատվում է զոհաբերության փոքրիկ միջոց, նվիրատվության յուրատեսակ արտահայտություն ուղղված եկեղեցու պայծառացմանը, քանզի դրանով իսկ հավատացյալը նյութապես սատար է կանգնում եկեղեցուն /ահա թե ինչու չի խրախուսվում դրսից մոմ բերելը/ և իրագործվում է Հակոբոս առաքյալի պատգամը. ինչպես որ մեռած է մարմինն առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատն առանց գործերի» (Հակոբոս 2 : 26):

Մոմավառությունը թեև հավատքից բխող քայլ է, սակայն եթե քրիստոնյան եկեղեցուն մոմ վառի, բայց աղոթք չանի, ապա այն նույնն է, ինչ խունկն առանց հոտի և աղն առանց համի:

Հավատացյալն ինքն է որոշում, թե քանի մոմ պետք է վառի և ոչ մի տարբերություն չկա կենտ կամ զույգ թվով մոմ վառելու մեջ:

Վերջում նշենք, որ յուրաքանչյուր քրիստոնյա միայն իր գումարով պետք է մոմ գնի, որպեսզի եկեղեցու պայծառացման համար կատարվող զոհաբերությունն իր սեփական միջոցներից լինի:

ՄԱՏԱՂ

Մատաղի կարգը սահմանել է Ս. Գրիգոր Լուսավորիչը՝ դեռևս 301 թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց անմիջապես հետո: Ըստ Տաթևացու «մատաղ» նշանակում է մատուցել աղ: Կրոնական արարողությամբ մատաղի կենդանին մորթվում է և եփվելուց հետո բաժանվում աղքատներին:

Մատաղը նախ՝ ընծա է Աստծուն: Երկրորդ՝ փրկության հույս է: Երրորդ՝ աղքատասիրություն է և ողորմություն: Չորրորդ՝ ննջեցյալների հիշատակ, ապա մեր երախտագիտությունն է Աստծուն՝ հիվանդությունից ու փորձություններից ազատելու համար:

Մատաղի նյութերն են կենդանին ու աղը: Մատաղի կենդանին կարող է լինել արջառ, խոյ, աքաղաղ, աղավնի: Ընդունված կարգ է մատաղ անել միայն արու կենդանիների:

Քանի որ մատաղն Աստծուն մատուցվող ընծա է, ապա մատաղացու կենդանին պետք է արդար վաստակի արդյունք լինի, ընտիր և լավագույնը: Խեղանդամված և արատավոր կենդանուն չի կարելի մատաղ անել, քանզի Աստծուն ընծայվելիքը՝ նյութական թե հոգևոր, պետք է լինի անարատ ու մաքուր:

Հարկ ենք համարում մեկ անգամ ևս ընդգծել, որ մատաղը չի կատարվում մատաղացուի արյունով մեղքերից թողություն ստանալու ակնկալիքով, ինչպես փորձում են ներկայացնել նորահայտ աղանդավորները, շփոթության մեջ զգելով անտեղյակ մարդկանց: Մատաղ է, և ընդունելի մատաղ, ցանկացած ընծայաբերում՝ հացեղեն, ուտեստեղեն, հագուստեղեն, շինություն, դրամական նվիրատվություն և որևէ այլ բարեգործություն:

Եկեղեցուն նախ պետք է օրհնել մատաղի աղը, որից հետո այն պետք է տալ կենդանուն «ի կերակուր», այնուհետև միայն կարելի է մորթել: Աղի օրհնության կարգը սահմանել է մեր

հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչ հայրապետը: Աղը մաքրության օրինակ է, ինչպես որ Քրիստոս ասաց Իր աշակերտներին. «Դուք եք երկրի աղը»: Եվ որովհետև երկիրը և բոլոր կերակուրներն Ադամի մեղսագործության պատճառով անեծքի տակ ընկան և անմաքուր եղան, այս է պատճառը, որ օրհնելով մաքրում ենք աղը, իսկ ուտեցնելով կենդանուն՝ մաքրվում է նաև կենդանին: Աղի օրհնությունը կատարվում է նաև, որպեսզի մատաղացու կենդանին տարբերվի «կուռքերին մատուցվող զոհերից և հասարակ զենումներից»: Ձոհաբերության գաղափարը շատ հին է ու վաղնջական:

Սակայն քրիստոնեական իմաստով մատաղի արարողության ակունքները գալիս են դեռ առաջին դարից, երբ բոլոր քրիստոնյաները Սուրբ Պատարագից հետո հավաքվում էին միասին՝ «սիրո ճաշի»՝ մատաղի, որն ամբողջությամբ մատուցվում էր հիվանդներին ու աղքատներին ըստ ավետարանական խոսքի. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի կանչիր ոչ քո բարեկամներին, ոչ քո եղբայրներին, ոչ քո ազգականներին և ոչ էլ քո հարուստ հարևաններին, որպեսզի նրանք էլ փոխարենը քեզ չհրավիրեն, և քեզ հատուցում լինի: Այլ, երբ ընդունելություն անես, կանչիր աղքատներին, խեղանդաններին, կաղերին ու կույրերին և երանելի լինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եվ դրա փոխարեն քեզ կհատուցվի արդարների հարության օրը» (Դուկաս 14:12-14):

Մատաղ չի կարելի անել չորեքշաբթի, ուրբաթ օրերին, շաբաթապահքերին և Մեծ Պահքի շրջանում:

Արգելվում է մատաղացու կենդանուն եկեղեցի մտցնել, որովհետև «եկեղեցին դրախտի խորհուրդն ունի, որտեղ անասուն չի մտնում» (Տաթևացի): Երբեմն մարդիկ չհասկանալով մատաղի իմաստը և նշանակությունը, մատաղացու կենդանու արյունը քսում են տան դռներին կամ իրենց ճակատին ու ձեռքերին, որը հեթանոսական է և քրիստոնեական իմաստից զուրկ:

Մատաղի միսը չի կարելի պահել տանն իբրև ուտելիք, այլ նույն օրը պետք է բաշխել աղքատներին:

Մատաղի կենդանուն պետք է մորթի տղամարդ՝ աշխարհական կամ հավատացյալ: Կին, մանուկ կամ հոգևորական որևէ մեկը չպետք է մորթեն: Մատաղացու կենդանու փորոտիքը, գլուխը և մյուս մնացորդները պետք է թաղել,

որպեսզի շների ու կատուների կեր չդառնան, քանզի այն օրհնված է:

Այսպիսով, մատաղը խորապես մարդասիրական մի արարողություն է, որը հնարավորություն է տալիս հավատացյալին ցուցաբերելու ողորմածություն և օգնելու աղքատների ու կարոտյալներին:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ

Հայ եկեղեցին հաճախ հիշատակում մնջեցյալներին և հոգեհանգիստ կատարում մնջեցյալների համար: Մի՞թե մնջեցյալների համար դա կարևոր է:

Աստված մեռելների Աստվածը չէ, այլ ողջերի, որովհետև բոլորը նրա համար կենդանի են /Ղուկաս 20, 38/ և «սեր ոչ երբեք անկանի» /Ա Կորնթ. 13, 8/: Հետևաբար մնջեցյալները երբեք բաժանված չեն ապրողներից և մեզ՝ ապրողներիս համար պարտականություն է հիշել նրանց: Սա խորհրդանշում է զինվորյալ և հաղթական եկեղեցու հաղորդակցությունը:

Հին Կտակարանում կան դրվագներ, ուր հստակ պատվիրվում է մնջեցյալների համար աղոթել /Հուրթ 2, 20, Բ Մնաց. 6, 42, Երեմիա 16, 7, 2 Մակ. 12, 39և46/, և այդ սկզբունքն էլ անցավ Առաքելական ժամանակներին ու ավանդվեց եկեղեցուն: Մեր Պատարագում հիշատակությունների շարքում պատարագիչ քահանան միշտ հիշում է մնջեցյալներին և դիմում Աստուն՝ խնդրելով «եղիցի հիշատակի սուրբ պատարագ աղաչեմք»:

Եկեղեցու ժամակարգությունը, նախնական եկեղեցու սովորույթը, եկեղեցու հայրերի գրությունները, բոլորն էլ վկայում են այն հավատքի մասին, որ աղոթքով, բարեգործություններով, Ս. Պատարագով, հոգեհանգստով, մատաղներով, որոնք կատարվում են մնջեցյալների համար, օժանդակություն և հանգիստ են շնորհում նրանց, որոնք մնջել են հավատով ու ներելի մեղքերով: Այսինքն մնջեցյալները իրենց մեղքի կապանքներից ազատվում են ոչ թե իրենց ճիգերով, և ոչ էլ իրենց արժանիքի շնորհիվ, այլ եկեղեցու օժանդակությամբ: Քանի դեռ երկրի վրա ենք և հնարավորություն ունենք ապաշխարելու, մեղքից արձակվում գտնելու, բայց հեռանալով այս կյանքից, հանդերձյալում մեզնից հնարավորություններ այլևս չկան,

ուրեմն մնում է միայն Եկեղեցու բարեխոսությունն ու հոգե-
հանգիստը:

ՍՐԲԱՊԱՏԿԵՐ

Սրբապատկերը որպես քրիստոնեական հոգևոր մշակույ-
թի և գեղարվեստական մտածողության արգասիք՝ զարգացել է
պաշտամունքի կանոնին զուգընթաց՝ համապատասխանելով
վարդապետական և դավանաբանական ձևակերպումներին:
Հայ Եկեղեցում սրբապատկերը առաջին հերթին այն գեղան-
կարներն են, որոնք պատկերում են մեր Տիրոջը՝ Հիսուս
Քրիստոսին, Աստվածամորը և սրբերին: Այս սրբապատկերները
զարդարում են ս. Սեղանը, Եկեղեցու դասի, տաճարի և զավթի
որմերն ու սյուները: Այդ սրբապատկերների առաջ մենք սովո-
րաբար մոմ ենք վառում և աղոթում:

Համաձայն Եկեղեցու սրբազան ավանդության առաջին
սրբապատկերներն են Հիսուսի Դաստառակը և Աստվածամոր
պատկերը և խորհրդանշական է, որ այս երկ նվիրական պատ-
կերները ժամանակին պատկանել են Հայ Եկեղեցուն: Խիստ
կարևոր է սրբապատկերի խրատական դերը. այն զգաստու-
թյան և ապաշխարության կոչ է՝ ուղղված մեզ: Սրբապատկերը
Եկեղեցու և եկեղեցական ծիսակարգի անբաժանելի մասն է:
Նա կարևորագույնն է պաշտամունքի ընթացքում օգտագործ-
վող բոլոր ծիսական առարկաների մեջ, քանի որ սրբապատ-
կերի գոյաբանական հիմքում ընկած է Հիսուս Քրիստոսի գեր-
բնական մարմնավորման անճառելի իրողությունը:

Աստված Հոգի է, այսինքն՝ Նրան անհնար է նկարագրել,
բայց երբ Նա մարմին է առնում, վերցնում և Իրեն է միացնում
մարդկային բնությունը, որով ձեռք է բերում նաև նյութական
կերպար, հնարավոր է դառնում Նրան պատկերել: Այսինքն՝ հո-
գևոր էությունն արտահայտվում է զգայական կերպարի մեջ և
միջոցով: Տեսնելով պատկերը՝ մենք մտովի դիմում ենք պատ-
կերվածին: Երբ աղոթում ենք սրբապատկերի առջև, պետք է
հստակ գիտակցենք, որ մեր աղոթքը ուղղված է ոչ թե պատկե-
րին, այլ այն անձին, ով առկա է պատկերի վրա:

Ի սկզբանե Հայ եկեղեցին եղել է պատկերահարզ: Ամեն մի սրբապատկեր գործածելի է դառնում եկեղեցում միայն հատուկ կարգով օրհնվելուց ու օծվելուց հետո:

12-րդ դարում Հովհաննես Սարկավագ Վարդապետը բանաձևել է Հայ եկեղեցու ուսմունքը սրբապատկերի վերաբերյալ հետևյալ կերպ. «Սրբապատկերները օգնում են հավատացյալներին մերձենալու Աստծուն»: Քրիստոսի պատկերի առջև պետք է խոնարհվել. խոնարհումը, սակայն, ուղղված է ոչ թե սրբապատկերի նյութին, այլ Նույն Ինքն Քրիստոսին: Աստվածածնի և սուրբերի պատկերների առջև նույնպես պետք է խոնարհվել, սակայն այս խոնարհումը ոչ թե Աստվածածնին ու սուրբերին է ուղղված, այլ Քրիստոսին, քանի որ Աստվածամայրը և սուրբերը միայն միջնորդ կարող են լինել մեզ համար Քրիստոսի առջև:



ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ եկեղեցու տոները բաժանվում են երեք խմբի. տերունական, սրբոց հիշատակի և պահոց օրեր: Տերունական են համարվում Քրիստոսի տնօրինությունները, Սբ. Կույսին վերաբերող հիշատակումները: Սրբոց են համարվում այն օրերը, երբ հիշում ենք սուրբ կյանքով ապրած կամ Քրիստոսի անվան համար նահատակված անձանց:

Պահոց օրերը զոջունի, աղոթքի և հոգևոր կյանքի առաջադիմությանը նվիրված օրերն են: Այդ օրերին հեռու պահելով զգայական ու մարմնական հաճույքներից ու վայելքներից ջանում ենք հոգևորապես զորանալ:

ա) Ծնունդ և Աստվածահայտնություն. Աստվածահայտնությունն նշանակում է Աստուծո հայտնվելը: Հիսուս Քրիստոսի աստվածահայտնությունը բովանդակում է ոչ միայն Նրա Ծնունդը, այլ նաև Մկրտությունը և այլն: Այս պատճառով Փրկչի Ծնունդն ու Մկրտությունը (շաբաթվա որ օրն էլ պատահի) մեր եկեղեցուն տոնախմբվում են միասին, հունվարի 6-ին՝ համաձայն քրիստոնեական եկեղեցու վաղեմի ավանդության: Ծննդյան տոնի առավոտյան, սուրբ Պատարագից հետո, կատարվում է Ջրօրհնեք, որ հիշատակն է Հիսուս Քրիստոսի՝ Հորդանանում Հովհաննես Մկրտչի ձեռքով Մկրտության:

բ) Տոն Անվանակոչության. ըստ Տոնացույցի՝ «Տոն Հայտնության և թլփատության», որ կատարվում է հունվարի 13-ին, այսինքն՝ Ծնունդից ութ օր հետո: Հրեաները թլփատությունը կատարում էին մանկան ծնվելուց ութ օր հետո: Ըստ Ավետարանի՝ Հիսուս Մանկանն թլփատեցին: Հայաստանյայց եկեղեցուն էլ փոքրիկները մկրտվում են իրենց ծննդյան ութերորդ օրը: Մեր եկեղեցուն Ծնունդն ութօրյա մի տոն է, որ ավարտվում է Անվանակոչության տոնով: Եվ այդ ութօրյա ժամանակահատվածում, ըստ հնավանդ սովորության, քահանան կամ համայնքի հովիվը այցելում է տները և կատարում տնօրհնեք:

Այդ օրվա ճաշու Ավետարանը միայն մեկ տուն է [տե՛ս Դուկ. Բ 21 և հմմտ. Մատթ. Ա 25]:

գ) Տյառնընդառաջ. Հիսուս Քրիստոսի ծնունդից 40 օր հետո Նրան տաճարի մեջ Աստծուն նվիրելու կամ ընծայելու տոնն է, որ լինում է փետրվարի 14-ին [տե՛ս Ղուկ. Բ 23-40]:

Ծնվելուց 40 օր հետո մանուկներին տաճար տանելու և Աստծուն նվիրելու սովորությունը քրիստոնեական եկեղեցուն էլ մնաց: Այս է պատճառը, որ հայ մայրերը որդեծնությունից հետո 40 օր հանգստանում են տանը, իսկ քառասունքի վերջին օրը, իրենց մանկանը գրկած, գնում են եկեղեցի և հատուկ արարողությամբ նրան նվիրում Աստծուն: Այդ գեղեցիկ արարողությունը կոչվում է Քառասունք:

Ջերմեռանդ մայրերը Տյառնընդառաջի տոնին իրենց փոքրիկներին, եթե Ծննդյան տոնից փոքր-ինչ առաջ կամ հետո են ծնվել նրանք, տանում են եկեղեցի՝ Հիսուս Մանկան ընծայման հիշատակին հաղորդակից դարձնելու համար: Հայ քրիստոնյա ընտանիքներում քրիստոնեական զգացումով որքա՛ն լեցուն երևույթ է սա. մանկուց նվիրվել Աստծուն և ապրել ու աճել կրոնի սրբությամբ:

Տյառնընդառաջը ժողովրդական լեզվում դարձել է Տերընտաս, Տրնդեզ, ասվում է նաև Մելետ:

Կարծվում է, թե հին մի տոնի՝ Միհրականության տեղն է հաստատվել Տյառնընդառաջը, քանի որ խարույկ վառելու սովորությունը մնացել է, թեև եկեղեցին այն փոխարինել է մոմավառությամբ կամ ջահավառությամբ: Այնպես որ, այդ օրը եկեղեցուն վառված մոմերը տուն են տանում և այդ գիշեր տան ճրագը կամ լամպը դրանով են վառում: Ժողովրդի մեջ մնացել է տանիքներին և հրապարակներում կրակ վառելու սովորությունը:

դ) Առաջավորք կամ Առաջավորաց պահք, որ Բարեկենդան էլ ունի. նախորդում է Մեծ պահքին: Ժողովուրդը սրան սուրբ Սարգսի պահք է ասում, որովհետև շաբաթ օրը տոնվում է սուրբ Սարգսի տոնը: Ուրբաթ օրն էլ նվիրված է Հովնան մարգարեի և նինվեացիների ապաշխարության հիշատակին:

Առաջավորաց պահքի ծագումը հայ պատմագիրները վերագրում են սուրբ Գրիգոր Լուսավորչին, որ խոր Վիրապից ելնելուց հետո հնգօրյա պահեցողությամբ (ծոմապահությամբ) հայ ժողովրդին ապաշխարել տվեց և ապա մկրտեց: Այս կերպ Առաջավորք պիտի նշանակի առաջին պահք, որ հաստատվել է սուրբ Գրիգոր Լուսավորչից:

Ամեն պարագայում, սա հայ ժողովրդի ամենաշատ հարգած շաբաթապահքն է: Այդ ժամանակ շատերը ոչ միայն պահք, այլև ծոն են պահում 3 կամ 5 օր:

ե) Վարդանանց տոն: Մեծ պահքին նախորդող շաբաթվա ընթացքում Հայ եկեղեցին ոգեկոչում է Ղևոնդյան քահանաներին /երեքշաբթի օրը/ և Վարդանանց պատերազմում նահատակվածներին /հինգշաբթի օրը/: Քրիստոնեական եկեղեցու պատմության մեջ սա առաջին հոգևոր պատերազմն էր հանուն հավատի: Հայոց մեջ ընդունված է այդ օրը համարել գորավարների անունները կրողների անվանակոչության օրը /Վարդան, Խորեն, Արտակ, Հմայակ, Տաճատ, Վահան, Արսեն, Գարեգին/, իսկ Ղևոնդյանների հիշատակի օրը համարվում է հայ եկեղեցու քահանայից դասի օրը:

զ) Ավետուն: Անշարժ տոն է, և միշտ լինում է ապրիլի 7-ին: Ըստ Ավետարանի հրեշտակը, գալով սրբուհի Մարիամի մոտ, ավետեց. «Մի վախեցիր, Մարիամ, ահա Աստուծոց շնորհ գտար, և մի որդի կունենաս և Նրա անունը Հիսուս կդնես»:

Արդեն մի քանի տարի է, ինչ Հայաստանում այդ օրը հռչակված է որպես Մայրության օր:

է) Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն. սովորականից տարբեր ուտելու և խրախճանքի օր, որին շաբաթապահք է հաջորդում: Իսկ Բուն բարեկենդան նշանակում է ամենամեծ բարեկենդան, որին հաջորդում է Մեծ պահքը:

ը) Մեծ ՊԱՅՔ նշանակում է ամենամեծ պահքը՝ համեմատած օրապահքերի և շաբաթապահքերի հետ, որոնք փոքր պահքեր են: Ավում է նաև Քառասունք, որովհետև նախկինում Մեծ պահքը 40 օր էր՝ Բուն բարեկենդանի վաղորդայնից մինչև վեցերորդ յոթնյակի ուրբաթ օրը, որին հաջորդում են շաբաթ՝ Ղազարի հարության հիշատակի օրը, և կիրակին Օազկազարդ, և Ավագ շաբաթը, որ դարձեալ պահք է:

Այսպիսով թեև Մեծ Պահքը քառասնորդական է կոչվում, սակայն, Ավագ շաբաթն էլ ներառյալ, այն տևում է 48 օր:

Քառասունքը սկզբունքորեն քառասունք էլ մնում է՝ իբրև պահոց օրեր. հիշենք մեր Փրկչի քառասնօրյա ծոնը:

Մեծ Պահքի ընթացքին եկեղեցիների վարագույրները փակվում են ի նշան սգի և ապաշխարության, իսկ Սուրբ Պատարագները մատուցվում են վարագուրված հորանից:

Այս ընթացքում խստիվ արգելվում են պսակադրության և մատաղի արարողությունները մինչև Ձատիկ:

Պահք կամ պաս ասելով առավել հասկացվում է հրաժարում որոշ տեսակի կերակուրներից՝ յուղեղեն, մսեղեն, կաթնեղեն, ձու, ինչպես նաև ալկոհոլ:

Մեծ պահքը կոչվում է նաև Աղուհացք, որովհետև հնում Մեծ պահքի ժամանակ միայն աղ ու հաց էին ուտում և կամ աղ ու հացով լուծում էին ծոնը:

Մեծ պահոց կեսը կամ 24-րդ օրը, որ չորեքշաբթի է լինում, ասվում է Միջինք:

Մեծ պահոց յոթ կիրակիները նվիրված են զանազան հիշատակների, որոնք թե՛ որպես Սուրբ գրային իրադարձություններ և թե՛ որպես խրատական առակներ խոսվել են մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից:

Առաջինը՝ Բուն բարեկենդանը նվիրված է Դրախտի հիշատակին, որի փափկության մեջ նախածնողները մի պահ ապրեցին անմեղ ու երջանիկ կյանքով. (Ծննդոց 1:26 - 2:25):

Երկրորդը՝ Նախածնողների արտաքսմանը այդ դրախտից. (Ծննդոց 3:1 - 24):

Երրորդը՝ Անառակ որդու վերադարձին. (Ղուկ. 15:1-32):

Չորրորդը՝ Տնտեսին. (Ղուկ. 16 : 1 - 8):

Հինգերորդը՝ Դատավորին. (Ղուկ. 18 : 1 - 8):

Վեցերորդը՝ Փրկչի Գալստյանը. (Կող. 2 : 8 - 3 : 17, Մատթ. 22 : 34 - 23 : 39):

Յոթերորդը՝ Փրկչի մուտքին Երուսաղեմ. կոչվում է ԾԱՂԿԱԶԱՐԴ. (Ձաք. 9:9, Մատթ. 21:1 - 9, Ղուկ. 19 : 29 - 38):

թ) ԱՎԱԳ ՇԱԲԱԹ նշանակում է մեծ շաբաթ, որովհետև Փրկչի Հարության շաբաթն է կամ յոթնյակը: Ավագ շաբաթվա վեց օրերը նվիրված են ավետարանական հիշատակներին.

Երկուշաբթին՝ Չորացած թզենուն. (Մատթ. 21: 18 - 22, Մարկ. 11: 12 - 14, 20-24),

երեքշաբթին՝ Տասը կույսերին. (Մատթ. 25: 1 - 13),

չորեքշաբթին՝ Քրիստոսի կնոջ ձեռքով օծվելուն. (Մատթ. 26: 6 - 13, Մարկ. 14: 3 - 9),

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ՝ Սուրբ Հաղորդության խորհուրդի հաստատման հիշատակին, երբ Հիսուս Վերնատանն օրհնեց հացն ու գինին և տվեց իր աշակերտներին, որպես իր մարմինն ու

արյունը. (Մատթ. 26: 26 - 30, Մարկ. 14: 22-26, Ղուկ. 22: 14 - 20, Ա. Կորնթ. 11: 23 - 25),

ուրբաթը՝ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻՆ, ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆԸ ԵՒ ՍԱՅՎԱՆԸ.
(Մատթ. 27:27 - 54, Մարկ. 15:16 - 39, Ղուկ. 23: 26 - 47, Հովհ. 19:1-30),

շաբաթ օրը ճրագալոյց է:

ժ) ՁԱՏԻԿ. Փրկչի Հարությանը նվիրված մեծ տոնն է և նշանակում է թե Քրիստոս զատվեց մեռելներից և հարություն առավ:

Ձատկի հատկանշական ուտելիքն է կարմիր ձուն՝ իբրև խորհրդանշան խաչի վրա Փրկչի թափած արյան և Նրա Հարության:

ժա) Ձատկից մինչև Համբարձում 40 օր է: Այս ժամանակահատվածն էլ կոչվում է Քառասունք Հարության, ինչպես որ Մեծ պահքը կոչվում է Քառասունք ապաշխարության:

Դարձյալ, Ձատկից մինչև Հոգեգալուստ կամ Պենտեկոստե հիսուն օրերի ժամանակահատվածը կոչվում է Հինունք, ինչպես որ Ծնունդը կանխող 50 օրերն ասվում են Հինակք:

ԾԱՆԹԹ. Ժողովուրդը Փրկչի Հարության տոնին ասում է Մեծ զատիկ, իսկ Ծննդեան տոնին՝ Փոքր զատիկ:

ժբ) Հինանց կիրակիներն էլ զատ-զատ անուններ ունեն:

Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ, որովհետև Փրկչի Հարությունից հետո ամեն բան նորոգվում է, և քրիստոնեության համար մի Նոր կիրակի է, ինչպես նաև՝ Կրկին զատիկ, այսինքն՝ Նոր կիրակի և Ձատկի կիրակի: Հաջորդը Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակի և ապա Կարմիր կիրակի:

ժգ) Ձատկի հինգերորդ կիրակի օրը տոնվում է Խաչի երևում պարզապես երևան խաչ բացատրությամբ:

Երուսաղեմի Կյուրեղ պատրիարքի ժամանակ Սիոն լեռան վրա տեղի է ունենում խաչանման լուսահրաշ մի երևույթ, որը Կյուրեղը նամակով նկարագրում է Կոստանդին Բ կայսրին (337 թ.): Այս դեպքն է հիշատակվում Ձատկի Ե կիրակի օրը, և այդ առթիվ կարդացվում է Կյուրեղ եպիսկոպոսի՝ Կոստանդինոսին ուղղած նամակը Անդաստանի ընթերցվածների սկզբում:

ժդ) Համբարձում. Ձատկից քառասուն օր անց, Հինանց վեցերորդ յոթնյակին, հինգշաբթի օրը, տոնվում է Փրկչի վեր

բարձրանալը կամ համբարձումը Ձիթենյաց լեռան վրայից: Այս տոնը տասնօրյա է, նրան հաջորդում է Հոգեգալուստը:

Ծանոթ. Հայ ժողովրդի մեջ Համբարձումն ասվում է Վիճակի օր, որովհետև Հուդայի փոխարեն վիճակով ընտրվեց Մատթիան [տե՛ս Գործ. Ա 26], և այդ օրն է, որ հայ մայրերն ու աղջիկները հատուկ արարողություններով վիճակի խրախճանք էին անում՝ վիճակահանության մեջ քրիստոնեական ոգի դնելով:

Ժե) Ջատկի յոթերորդ կիրակին կոչվում է Երկրորդ Ծաղկազարդ, որովհետև ինչպես որ Բուն բարեկենդանից մինչև Ծաղկազարդ քառասունք է, այդպես էլ Ջատկից մինչև Հինանց յոթերորդ կիրակին քառասունք է:

Ժզ) Հոգեգալուստ կամ Պենտեկոստ. Սուրբ Հոգու իջմանը նվիրված առաջին կիրակին է Ջատկի կամ Հինանց կիրակիներից հետո:

Հիսուսներորդ նշանակում է Պենտեկոստ: Ծագումով հրեական տոն է՝ Եգիպտոսում նրանց տոնած վերջին Պասեքի (Ջատկի) հիշատակին, որ տոնում էին Ջատկի հիսներորդ օրը: Հրեաների Պենտեկոստեն նաև, տոնն է Հնձոց և երախայրյաց, այսինքն՝ գոհության տոն, ինչպես նաև, ըստ ավանդության, Սինա լեռան վրա աստվածային օրհնադրության տարեդարձն է:

Հոգեգալուստ նշանակում է Սուրբ Հոգու գալը կամ էջքը, որ տեղի ունեցավ Պենտեկոստի օրը Վերնատանը [տե՛ս Գործ. Բ], և քրիստոնեական Եկեղեցին, պահելով հանդերձ Պենտեկոստե անունը, նվիրագործեց այդ կիրակին Հոգեգալուստյան կիրակի անունով: Հոգեգալուստը յոթօրյա տոն եղավ Շնորհալու կարգադրությամբ՝ յոթնյակն էլ «անլուծանելի» պահք հռչակելով (այս տոնը հոգեգալուստական աղանդի հետ չի առնչվում):

Այս շաբաթապահքը կոչվում է նաև Եղիական պահք այն պարզ պատճառով, որ Հոգեգալուստին հաջորդող առաջին կիրակի օրը ճաշու ժամին կարդացվում է Եղիա մարգարեի պատմությունը [տե՛ս Դ Թագ. Ա-Ե]:

Ժե) Տոն Կաթողիկե Եկեղեցվո Սրբո էջմիածնի. սուրբ Գրիգոր Լուսավորչի ձեռքով Վաղարշապատի Մայր եկեղեցու հիմնադրումը պատմական կարևոր իրադարձություն է մեր Եկեղեցու պատմության մեջ: Լուսավորչի տեսիլքի համաձայն՝ Միածինն իջավ և ոսկյա մուրճով նշանակեց Հայաստանի Մայր եկեղե-

ցու հիմքերի տեղը, որոնց վրա բարձրացավ այդ եկեղեցին: Հետո էջմիածինը հատուկ անուն դարձավ՝ խորհրդանշելով լուսավորչահիմն Մայր եկեղեցին և միաժամանակ Մայր Աթոռը: Եկեղեցին կոչվեց նաև Կաթողիկե Եկեղեցի Սրբո էջմիածնի. Կաթողիկե, այսինքն՝ բոլոր հայերի ընդհանրական եկեղեցի:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչն էջմիածնի հիմքերը դրեց խոր Կիրապից ելնելուց հետո: Այս պատճառով Լուսավորչի՝ Կիրապից ելնելու տոնն էլ կատարվում է այս կիրակիին նախորդող շաբաթ օրը: Աստվածածնի Վերափոխման շաբաթ օրը տոնվում է Շողակաթը, որ էջմիածնի հիմնադրման տոնն է, կարելի է ասել՝ նաև Միածնի իջման տոնը՝ ըստ սուրբ Լուսավորչի տեսիլքի: Եվ որովհետև էջմիածնի եկեղեցին նվիրված է սուրբ Աստվածածնին, այդ պատճառով Շողակաթի տոնը դրված է Աստվածածնի շաբաթ օրը:

Ժը) Գյուտ նշխարաց սրբույն Գրիգորի Լուսավորչի. Հոգեգալստյան երրորդ կիրակին Բարեկենդան է, և շաբաթ օրը տոնվում է Լուսավորչի նշխարների գյուտը: Հայաստանյայց եկեղեցու ազգային գլխավոր տոներից է այս տոնը: Մեր եկեղեցուն տոնախմբվում են Լուսավորչի կյանքից երեք դրվագներ՝ Կիրապ մտնելը, Կիրապից ելնելը և նշխարների գյուտը: Այս վերջինն ամենակարևորն է, նվիրված է մեր Լուսավորչի պանծալի կյանքին և երջանիկ ելքին այս աշխարհից:

Պատմվում է, որ Լուսավորիչն իր ծերության օրերին, հայրապետական պաշտոնն ու գործն իր Արիստակես որդուն հանձնելուց հետո, քաշվեց Երզնկայի Սեպուհ լեռը, այնտեղ ապրեց իբրև միայնակյաց, ճգնեց և, ըստ համշենցիների ավանդության, վախճանվեց գիհի ծառի փչակի մեջ: Մի հովիվ պատահաբար գտավ նրա անշնչացած մարմինը կամ նշխարքը: Սա է Գյուտ նշխարաց ասվածը: Հետագայում Սեպուհ լեռան վրա մի փառավոր եկեղեցի շինվեց սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով:

Հովհաննես Երզնկացի վարդապետը (1250-1326) «Լեռի՛նք ամենայն, այսօր ցնծացե՛ք» շարականով փառավորեց Լուսավորչի այս տոնը:

Ժթ) Վարդավառ. Քրիստոսի Այլակերպության կամ Պայծառակերպության տոնն է: Վարդավառը հայոց հեթանոսական կրոնից մնացած Աստղիկի տոնի անունն է, որ պահպանվել է:

Վարդավառի առթիվ աղավնի թոցնելու և իրար վրա ջուր լցնելու սովորությունն էլ Աստղիկի տոնից մնացած սովորությունն է մեզանում:

ի) Վերափոխումն Սուրբ Աստվածածնի կամ պարզապես Աստվածածին. տոնվում է օգոստոսի 12-17-ը հանդիպող կիրակի օրը: Տիրամոր Վախճանի կամ Վերափոխման տոնն է, որ, ըստ Շնորհալու կարգադրության, յոթօրյա է:

Աստվածածինը մի քանի տոներ ունի. ապրիլի 7-ին՝ Ավետում, դեկտեմբերի 9-ին՝ Հղություն Ամնայի, սեպտեմբերի 8-ին՝ Ծնունդ, նոյեմբերի 21-ին՝ Ընծայումն ի Տաճարն, ինչպես նաև՝ հետամուտ Գյուտ տփո, Գյուտ գոտվո տոները: Ամենամեծը Վերափոխման տոնն է:

իա) Խաչվերաց նշանակում է խաչի հանդիսավոր վերացումը կամ բարձրացումը, որ մեծ հանդիսությամբ տոնվում է սեպտեմբերի 11-17-ը հանդիպող կիրակի օրը և յոթօրյա տոն է:

Խաչը մեր Եկեղեցում մի քանի տոներ ունի՝ Երևման խաչ, Վարագա խաչ, Գյուտ խաչի, Խաչվերաց. սրանցից զատ, Եկեղեցու տոների շարքում երեք օր նվիրված է խաչին, ինչպես կտեսնենք հետևյալ հատվածում:

իբ) Տոն Եկեղեցվո. Խաչը և Եկեղեցին Եկեղեցագիտորեն հոմանիշ են: Եկեղեցին խաչյալ Փրկչի մահվան պտուղն է: Քրիստոսի մահվամբ հաստատվեց Եկեղեցին, որովհետև «մահով ընդոտնեց մահը և իր Հարությամբ կյանք պարգևեց մեզ»:

իգ) Վարագա խաչ. Վարագը Վանի մոտ գտնվող մի լեռ է, որի բլուրներից մեկը կոչվում է Գալիլիա: Պատմվում է, որ սուրբ Հռիփսիմեն, երբ հալածվեց Հռոմից, իր պարանոցին Կենաց Փայտից մի խաչ էր կախել: Երբ իր ընկերուհիների հետ հասավ Վարագ լեռը, այդ թանկագին սրբությունը պահեց ժայռերի մեջ, որպեսզի այն չընկնի իր հալածիչների ձեռքը: Այս ավանդության համաձայն՝ Հովել անունով մի ճգնավոր շատ չարչարվեց՝ այս խաչը գտնելու համար: Վերջապես տեսիլքի մեջ հայտնվեց նրան, թե որտեղ է պահված Հռիփսիմեի խաչը: Այն գտնում և դնում են Վարագի Եկեղեցում: Այստեղից է Վարագա խաչ անունը: Ներսես Շինող կաթողիկոսը (640-661) փառավոր հանդեսով պանծացրեց Վարագա խաչի գյուտը և կարգադրեց տոնել այդ դեպքը:

իդ) Գյուտ խաչ. նշանակում է խաչի գտնվելը, որ, ըստ ավանդության, տեղի ունեցավ մեծն Կոստանդիանոսի (306-

337) մոր՝ Յեղիմե թագուհու ծննդով: Յեղիմեն Երուսաղեմ է գնում Քրիստոսի խաչը գտնելու բուռն տենչանքով, և խաչելության վայրում, ըստ ավանդության, պեղելուց հետո գտնվում է երեք խաչ Յիսուսինը և երկու ավագակներից: Այս երեքից Յիսուսի խաչը զատվում է մի հրաշքով. երեքն էլ հերթով դնում են մի ննջեցյալի վրա, և Քրիստոսի խաչի տակ ննջեցյալը հարություն է առնում: Այս դեպքն է, որ տոնվում է Խաչվերացից հետո յոթերորդ կիրակի օրը:

իե) Ավագ տոներ. ավագ նշանակում է մեծ: Ծնունդի շաբաթապահքը կանխող չորս տոները կոչվում են Ավագ տոներ, որոնց երեքը զույգ-զույգ են: Սեկ Ավագ շաբաթ նախորդում է Ջատկին, Ավագ տոներն էլ նախորդում են Ծնունդին:

Ավագ տոների կարգը. ա) սուրբ Դավիթ մարգարեի և Յակոբ առաքյալի, բ) սուրբ Ստեփանոս Նախավկայի, գ) սուրբ առաքյալներ Պետրոսի և Պողոսի, դ) սուրբ Որոտման Որդիների՝ Յակոբ առաքյալի և Յովհաննես ավետարանչի:

Սրանք քրիստոնեական եկեղեցու մեծ տոներից են և Յայաստանյայց եկեղեցում կատարվում են մեծ հանդիսությամբ:

իզ) Այս բոլոր տոներից հինգը՝ Ծնունդ, Ջատիկ, Վարդավառ, Աստվածածնի Վերափոխում և Խաչվերաց, ավագագույն տոներ են, որ կոչվում են հինգ տաղավարներ: Այս տոների հաջորդ օրերը նվիրված են մեռելոց հիշատակին:

Մեռելոց օրերին սուրբ Պատարագ է մատուցվում, որից հետո եկեղեցում տեղի է ունենում ընդհանուր հոգեհանգստյան պաշտոն, գերեզմանոցներում կատարվում է գերեզմանօրհներ:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԻ ՊԱՅՔ

Յամաձայն տոնացույցի պահոց օրեր են համարվում նաև տարվա բոլոր չորեքշաբթի և ուրբաթ օրերը, բացառությամբ Ս. Ծննդին հաջորդող շաբաթից, Ս. Ջատկից մինչև Յամբարձուն ընկած 40-օրյա շրջանից և Ս. Աստվածածնի Վերափոխման հաջորդող իննօրեքից:

Ըստ եկեղեցական օրացույցի, տարին ունի 52 չորեքշաբթի և 52 ուրբաթ օր: Ուստի դրանց զումարը կազմում է 104 օր: Եթե սրանից հանենք վերոհիշյալ ուտիքի շրջանների

օրերը, ապա կտանանք ընդամենը 89 օր, որից 20-ը մտնում են շաբաթապահքերի, իսկ 14-ը՝ Մեծ պահոց շրջանի մեջ:

Չորեքշաբթի և ուրբաթ օրերը, առաքյալների կարգադրության համաձայն, պահք են համարվում: «Չորեքշաբթի օրը պահել ի հիշատակ Քրիստոսի մատնության: Ուրբաթ օրը պահել ի հիշատակ Քրիստոսի չարչարանքի»:

Պահքի օրերին չի թույլատրվում մատաղ անել:

ՇԱԲԱԹԱՊԱՅՔԵՐ

Համաձայն տոնացույցի մեր եկեղեցին ունի հետևյալ շաբաթապահքերը.

- | | |
|--------------------------|---------------------------------|
| 1. Ծննդյան | 6. Ս. Աստվածածնի Վերափոխման |
| 2. Առաջավորաց | 7. Ս. Խաչվերացի |
| 3. Եղիական (ամառնամուտի) | 8. Վարագա Ս. Խաչի (աշնանամուտի) |
| 4. Լուսավորչի | 9. Հիսնակաց |
| 5. Վարդավառի | 10. Ս. Հակոբի (Ձմեռնամուտի) |

Գարնանամուտի շաբաթապահքը ընկնում է Մեծ պահոց շրջանի մեջ, ուստի և այն այստեղ բաց է թողնվում:

Վերոհիշյալ շաբաթապահքերից 10-ը հնգօրյա են՝ բացառությամբ Ս. Ծննդյան պահքի, որը տևում է 7 օր: Այսպիսով, ընդհանուր հաշվով շաբաթապահքերի օրերը տարվա ընթացքում կազմում են 53 օր:

Տարվա հինգ տաղավարներին նախորդող պահքերը ավարտվում են նավակատիքով:

Այսպիսով տարվա ընթացքում բուն պահոց օրերը 158 օր են:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐ (Եկեղեցական և պետական)

- | | | |
|---------------------|--------|-------------|
| 1. Սուրբ Ծնունդ | անշարժ | հունվարի 6 |
| 2. Անվանակոչություն | անշարժ | հունվարի 13 |

	Յիսուս Քրիստոսի		
3.	Սուրբ Սարգիս	շարժակա ն	
4.	Տեառնընդառաջ	անշարժ	փետրվարի 14
5.	Վարդանանց	շարժակա ն	Բուն Բարե- կենդանին նախորդող հինգշաբթի
6.	Բուն Բարեկենդան,	շարժակա ն	Ջատիկից 7
7.	Կանանց միջազգային օր	անշարժ	շաբաթ առաջ մարտի 8
8.	Ավետումն Ս. Աստվա- ծածնի	անշարժ	ապրիլի 7 (Մայրության և գեղեցկության տոն)
9.	Մուտն ի Վիրապ,	շարժակա ն	
10.	Ծաղկազարդ	շարժակա ն	Ջատիկից 1 շաբաթ առաջ
11.	Ջատիկ (Տոն Ս. Դարու- թյան Յիսուս Քրիստոսի)	շարժակա ն	
12.	Ցեղասպանության զոհերի հիշատակի օր	անշարժ	ապրիլի 24
13.	Հաղթանակի և խաղաղության օր	անշարժ	մայիսի 9
14.	Երևումն Ս. Խաչի	շարժակա ն	Ջատիկից 4 շաբաթ հետո
15.	Համբարձում	շարժակա ն	Ջատիկից 40 օր հետո (միշտ հինգշաբթի օր)
16.	Սարդարապատի զոհերի հիշատակի օր	անշարժ	մայիսի 22
17.	Առաջին հանրապե- տության օր	անշարժ	մայիսի 28

18. Հոգեգալուստ	շարժակա ն	Ջատիկից 7 շաբաթ հետո
19. Ս. Հռիփսիմեանց	շարժակա ն	Հոգեգալուստից 8 օր հետո (երկուշաբթի)
20. Ս. Գայանեանց	շարժակա ն	Հոգեգալուստից 9 օր հետո (երեքշաբթի)
21. Ս. Շողակաթ վանքի	շարժակա ն	Հոգեգալուստից 11 օր հետո (հինգշաբթի)
22. Ս. Գրիգոր Լուսավորչի Ելքը Խոր Վիրապից	շարժակա ն	Հոգեգալուստից 13 օր հետո (շաբաթ)
23. Տոն Ս. Էջմիածնի	շարժակա ն	Հոգեգալուստից 2 շաբաթ հետո
24. Սահմանադրության օր	անշարժ	հուլիսի 5
25. Վարդավառ	շարժակա ն	Հոգեգալուստից 7 շաբաթ հետո
26. Վերափոխումն Ս. Աստվածածնի	շարժակա ն	օգոստոսի 15-ի մոտակա կիրակի
27. Ծնունդ Ս. Կույսի	անշարժ	սեպտեմբերի 8
28. Խաչվերաց (Սուրբ Խաչ)	շարժակա ն	սեպտեմբերի 14- ի մոտակա կիրակի
29. Անկախության օր	անշարժ	սեպտեմբերի 21
30. Ս. Գևորգ	շարժակա ն	Խաչվերացից 13 օր հետո /շաբաթ/
31. Վարագա Ս. Խաչ	շարժակա ն	Խաչվերացից 2 շաբաթ հետո
32. Սրբոց Թարգմանչաց	շարժակա ն	Վարագա Ս. Խաչից 13 օր

33. Գյուտ Խաչի	շարժակա ն	հետո (շաբաթ) Վարագա Ս. Խաչից 4 շաբաթ հետո
34. Ընծայումն Ս. Աստվա- ծածնի	անշարժ	նոյեմբերի 21
35. Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս	շարժակա ն	դեկտեմբերի 1-ի մոտակա շաբաթ օր
36. Երկրաշարժի զոհերի հիշատակի օր	անշարժ	դեկտեմբերի 7
37. Հղություն Ս. Աստվածածնի յԱննայե	անշարժ	դեկտեմբերի 9

* * *

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Օ

ԽՐԱՏԱԿԱՆ, ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ
ՔԱՐՈՋՆԵՐ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ (Մեկնությունն ըստ Գրիգոր Տաթևացու)

Եվ արդ, դուք այսպե՛ս աղոթեցեք.
Հայր մեր, որ երկնքում ես.
Սուրբ թող լինի Քո ամուսնը.
Քո թագավորությունը թող գա.
Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է.
Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր.
Եվ մերիդ մեզ մեր հանցանքները,
ինչպես որ մենք ենք ներում նրանց,
որ հանցանք են գործում մեր դեմ.
Եվ մի տար մեզ փորձության,
այլ փրկիր մեզ չարից.
որովհետև Քոնն է թագավորությունը և զորությունը
և փառքը հավիտյանս. ամեն:
Մատթեոս 6: 9-13

Այս աղոթքը շատ պատվական ու գովելի է երեք
պատճառով.

Առաջին - որովհետև Քրիստոսի կողմից է սահմանված: Եվ
եթե աղոթքները, որ մարդիկ են սահմանել, պետք է սովորել ու
աղոթել, ապա որքա՞ն առավել պետք է սովորել այն աղոթքը,
որն Աստված Իր բերանով ուսուցանեց:

Երկրորդ - որովհետև կարճ է ու գեղեցիկ, և ոչ ոք չի
կարող չսովորել՝ պատճառ բերելով երկարությունը:

Երրորդ - որովհետև անհրաժեշտ է ու բարեբեր, քանի որ
այն ամենը ինչ պետք է մեզ թե՛ հոգևոր և թե՛ մարմնավոր, այս
աղոթքով խնդրված է լինում:

Այս աղոթքը բաղկացած է տասը խոսքից:

Առաջին խոսքը - Հայր մեր, որ երկնքում ես. Աստծուն Հայր կոչելը մեծագույն պարգևն է մարդու համար: Քրիստոնյաների համար Աստված Հայր է, որովհետև մենք կերպարանակից եղանք Աստծու Միածին Որդու պատկերին: Իսկ Հայր մեր է ասվում, և ոչ թե Հայր իմ, որպեսզի երևա բոլոր քրիստոնյաների միությունը: Եվ ընդհանրական աղոթքն ավելի լսելի է:

Երկրորդ խոսքը - Թող Սուրբ լինի անունը Քո. սա նշանակում է, թող Քո անվան սրբարար զորությունը մեզ վրա էլ լինի, որպեսզի մեզ սրբի բոլոր մեղքերից: Քրիստոնյա ենք կոչվում և հավատով սուրբ ենք, մեր գործերով էլ մեզ սուրբ արա:

Երրորդ խոսքը - Թող Քո արքայությունը գա. Աստծու արքայությունն ենք խնդրում, որպեսզի մեզ փրկի խավարի իշխանությունից և Ինքը թագավորի մեր սրտում, ոչ թե մեղքը:

Չորրորդ խոսքը - Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է. երկնքում հրեշտակները և երկնային բոլոր զորությունները Աստծու կամքն են կատարում, իսկ մարդը հաճախ իր ինքնիշխան կամքով հեռանում է Աստծուց և մեղքերի մեջ ընկնում: Այս խոսքով խնդրում ենք, որ մարդիկ էլ Աստծու կամքը կատարեն: Աստծու կամքը մեղավորների դարձն է և հոգիների փրկությունը՝ մեղքի ու չարիքի բռնությունից:

Հինգերորդ խոսքը - Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր. քանի դեռ մարմնի մեջ ենք՝ կարիք ունենք կերակրի, որը պահում է մարմնի կենդանությունը, որով հասկացվում է հարկավոր պետքերը՝ կերակուր, ըմպելիք, հագուստ: Մեր՝ այսինքն անհրաժեշտ և ոչ ավելին, մեր արդար վաստակը և ոչ օտարինը, ոչ անիրավմամբ ձեռք բերվածը: Այսօրվանն ենք խնդրում, իսկ վաղը իրենք կհոգա:

Վեցերորդ խոսքը - Ներիր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ հանցանք են գործում մեր դեմ. այս խոսքից իմացվում է, որ երբ մենք ներում ենք մարդուն, թողություն ենք ստանում Աստծուց: Այս խոսքը մի ուրիշ խոր իմաստ ունի. բոլոր բարի գործերը մենք Աստծուց ենք սովորում, իսկ այստեղ Նա Ինքն է մեզանից սովորում մարդասիրությունը: Եթե մենք չենք ներում, անիծում ենք մեզ,

թե՛ ինչպես ես ուրիշներին չներեցի, դու էլ ինձ մի ներիր: Եվ ոխը սրտում պահելով՝ հեռանում ենք Աստծուց:

Յոթերորդ խոսքը - Մի տար փորձության. խոնարհություն է սովորեցնում. հանդուգն կեպով փորձության չզնալ, ինչպես նաև Աստծու օգնությունն ենք խնդրում նեղությունների և դժվարությունների մեջ:

Ութերորդ խոսքը - Այլ փրկիր մեզ չարից. այսինքն ամեն մի չարից, նախ՝ սատանայից, երկրորդ՝ չար մարդկանցից, որոնք սատանայի արբանյակներն են, երրորդ՝ աշխարհի մեղավոր ցանկություններից, որովհետև դրանք թշնամություն են Աստծու նկատմամբ, չորրորդ՝ չար մեղքերից, դժոխքից, չար մահից և մեր հոգու հավիտենական տանջանքից:

Իններորդ խոսքը - Քոնն է թագավորությունը, զորությունը և փառքը հավիտյանս. այսինքն, երբ Նրանն է արքայությունը, ապա մենք մեղքից չենք վախենում, երբ Նրանն է զորությունը, ոչ ոք չի կարող հաղթել մեզ: Աստված ոչ միայն ազատում է մեզ բոլոր չարերից, այլև՝ հավիտենապես փառավորում:

Տասներորդ խոսքը - Ամեն. հաստատում է բոլոր խնդրվածները. ինչ որ խնդրեցինք, ճշմարիտ է, թող լինի:

Տերունական աղոթքը յոթ խնդրանք է պարունակում. երեքը՝ հոգևոր, չորսը՝ մարմնավոր: Չորս խնդրանքներն այստեղ և այժմ են կատարվում, իսկ երեքը հանդերձյալ կյանքում պիտի կատարվեն: Եվ որովհետև հոգին ավելի պատվական է, քան մարմինը, ապա նախ հոգևորն ենք խնդրում. Սուրբ անունը, արքայությունը և Աստծու կամքի կատարումը, իսկ հետո խնդրում ենք մարմնավորը. հանպազօրյա հացը, թողությունը և մեղքերի փորձություններից ու չար պատուհասներից ազատելը: Եվ այս յոթ կարգի խնդրանքներից ավելին պետք չէ խնդրել, որովհետև բովանդակում են բոլոր խնդրանքները, որ օգուտ են հոգուն և մարմնին:

ԽԱՉԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խաչը քրիստոնյայի համար պսակ է, որ բացատրում է Քրիստոսի կյանքի իմաստը, այն՝ որ Հիսուս ի սեր մարդկության եկավ աշխարհ, չարչարվեց, խաչվեց և իր խաչելությամբ նոր իմաստ ու խորհուրդ տվեց խաչին: Մինչև Քրիստոս խաչը պատժի գործիք էր և մահ էր խորհրդանշում: Քրիստոսի խաչելությամբ խաչը մահվան նկատմամբ հաղթանակի և կյանքի խորհուրդ դարձավ: Պողոս առաքյալը գրում է. «Քավ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղատ 6 : 14):

Ըստ Դավիթ Անհաղթի, քրիստոնեական եկեղեցին պաշտում է խաչը, քանի որ խաչը Քրիստոսի ձևն ունի և Քրիստոս ամեն պահի խաչի վրա է, էանում է նրա հետ և երբեք չի հեռանում խաչից: Ըստ Ազաթանգեղոսի՝ խաչը վահան է չար ուժերից պաշտպանվելու համար:

Աստուծու Որդին իր խաչելությամբ մարդկության համար հավիտենական կյանքի ճանապարհ բացեց, որը մարդուն դեպի Աստված է տանում: Հոգևոր իմաստով մերկանում է այն մարդը, ով հեռանում է խաչից և ինքն իրեն զրկում խաչի կենսատու զորությունից: Նախանձը, դառնությունը, մերքին կռիվները, հոգու տառապանքը և բոլոր տեսակի չարությունները անհավատության մատնված և խաչից հեռացած մարդու հատկանիշներ են:

Լսենք, թե ինչ է ասում խաչի խորհրդի մասին մեր եռամեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին. «Երբ պատսպարվում ենք խաչով, այսինքն՝ թիկունքով ամրապնդվում նրանով, ինչպես պարսպով, և հենվում այսինքն սրտով հաստատվում նրա վրա, երեք տեսակ բարիք ենք ստանում՝ իմաստություն, զորություն և անմահություն: Ուստի, երբ իմացությամբ և հավատով պատսպարվում ենք այս եռակի բարությամբ, իմաստնանում ենք ու հասկանում, որ նրա վրա խաչվածը Աստված է և անմեղ, սակայն մեռնում է մեր փրկության համար, որպեսզի վճարի մեր պարտքերը և ազատի մահից: Եվ հույսով ու սրտով հենվում ենք խաչի վրա, որպեսզի զորացնի մեզ՝ հաղթահարելու սատանայի զորությունը: Այսպես իմաստնանում ենք մտքով, զորանում՝ մարմնով և անմահանում՝ հոգով, քանզի պատսպարվում ենք խաչով:

Խաչը առաքյալների քարոզությունն է և երկրի հաստատությունը:

Խաչը անմեղների խրատն է և մեղավորների քավիչը:

Խաչը մոլորվածների ճանապարհն է և խավարածների ճառագայթը:

Խաչը նավարկողների նավահանգիստն է և ճանապարհորդների օթևանը:

Խաչը հոգևոր զենք է և չբացող սուր:

Խաչը դժոխքի ավերողն է և գերյալների ազատողը:

Խաչը գերեզմանների կնիքն է և կյանքի հարությունը:

Խաչը կենաց ծառն է և անմահության պտուղը:

Խաչը դրախտի դռները բացողն է և արքայությունը որպես ժառանգություն տվողը:

Խաչը անհավատների կուրությունն է և հավատացյալների զորությունը:

Խաչը Քրիստոսի փառքն է և քրիստոնյաների պարծանքը:

Հայ ժողովուրդը միշտ էլ հավատով ու պարծանքով է նայել Քրիստոսի խաչին, դիտելով այն որպես զորության աղբյուր: Մեր հայրերը խաչի մեջ տեսել են իրենց գոյության իմաստն ու կյանքի աղբյուրը: Մեր հայրերը դարերի մեջ երբեք չդավաճանեցին խաչին ու չուրացան խաչյալին: Խաչը ոչ միայն կյանքի, այլև ներշնչանքի աղբյուր դարձավ հավատացյալ հայի համար: Այսպես կերտվեցին զմայելի խաչքարեր, որոնք այսօր հայ ժողովրդի հոգևոր հարստությունն են և անմահության գրավականը: Ոչ մի ազգ այնպես չնվիրվեց խաչին, ինչպես հայ ազգը: Ոչ մի ժողովուրդ այնքան հավատարիմ չեղավ խաչին, որքան հայ ժողովուրդը: Հայ ժողովուրդը առաջինն ընդունեց խաչը և հավատարիմ մնաց իր առաքելությանը: Դարերի ընթացքում եղան խաչը ուրացողներ, եղան խաչի թշնամիներ, և այսօր էլ կան, սակայն իր ամբողջության մեջ մեր ժողովուրդն այն միակ ազգը եղավ, որ խաչը երբեք չհեռացրեց իր կյանքից, իսկ խաչի խորհուրդը՝ իր սրտից: Ու խաչով հաղթեց մահին, քանզի երբեք չի մեռնի այն ժողովուրդը, որը պարծենում է Քրիստոսի խաչով:

Մենք այսօր էլ կոչված ենք խաչի խորհրդով զորանալու և նորոգված կյանք ապրելու:

ՀԻՆԳ ՏԱՂԱՎԱՐ ԵՒ ԱՅԼ ՏՈՆԵՐԻ ՔԱՐՈՋՆԵՐ

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Ահա կույսը պիտի հղիանա և մի որդի պիտի ծնի,
Նրան պիտի կոչեն Էմմանուել,
որ նշանակում է Աստված մեզ հետ:
ՄԱՏԹԵՈՍ 1 : 23

Հունվարի 6-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդը: Ժամանակի հավերժության մեջ անցնում են տարիներ, դարեր, հազարամյակներ ... Մարդկային պատմության փոքր ու մեծ իրադարձությունները հաջորդում են իրար և այդ ամենի վրա տիրաբար շողում է Քրիստոսի Սուրբ Ծննդյան լույսը՝ որպես սիրո, արդարության և խաղաղության հավերժական ճառագայթում, հոգևոր իմաստ ու բարոյական նպատակ հաղորդելով մարդու կյանքին:

Հիսուսի ծնունդով աշխարհի պատմությունը երկու մասի բաժանվեց. Քրիստոսից առաջ և Քրիստոսից հետո: Այսօր էլ ահա վերստին կանգնած ենք Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան մեծ խորհրդի առջև:

Մեզանից երկու հազար տարի առաջ Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում մի մանուկ ծնվեց: Նա ծնվեց զոմում և դրվեց անշուք մսուրի մեջ: Մարդկության պատմության մեջ շատ ու շատ այլ մանուկներ էլ են ծնվել: Ծնվել են հոյակերտ պալատներում ու դղյակներում՝ շքեղության մեջ, շրջապատվել են փառքով ու պատվով: Բայց միայն Հիսուս մանկան ծնունդն է տոնում համայն քրիստոնյա աշխարհը: Գիտնականները փորձել են լուսաբանել Հիսուսի ծննդյան մանրամասները ժամանակակից գիտության տեսանկյունից, սակայն Սուրբ Ծնունդը դարձյալ մնացել է անմեկնելի և անքննելի, չքնաղ մի խորհուրդ: «Խորհուրդ մեծ և սքանչելի» ինչպես երգել են մեր շարականագիր հայրերը:

Հին աշխարհի մարդը տառապում էր հոգևոր սնանկության և մեղքերի կապանքների մեջ: Մարդը

գիտակցում էր իր անկարողությունը՝ ինքն իրեն ղեկավարելու, ինքն իրեն փրկելու: Մարդկային հոգին չէր բավարարվում նյութականով և նյութականից վեր՝ հոգևոր սնունդ էր պահանջում: Մարդկությունը երազում էր արդարություն և խաղաղություն բերող Փրկչի գալուստը: Հիսուս եկավ մարդու հոգևոր քաղցը հագեցնելու: Հիսուս եկավ արծակելու մարդուն բոլոր նախապաշարումներից, բոլոր մոլորություններից ու կապանքներից: Հիսուսով ազատ մարդը դարձավ Աստծու որդի և երկնքի արքայության ժառանգորդը:

Քրիստոսի ծննդյան ոգեկոչումը խաղաղության և մարդկային եղբայրության տոնախմբումն է, քանզի այս Սուրբ Ծնունդով մարդիկ կոչված են համերաշխ ապրելու իբրև հարազատ եղբայրներ, իբրև միևնույն երկնավոր Հոր որդիներ:

Ամեն Սուրբ Ծննդյան ավետիս հոգեկան վերածնունդ է յուրաքանչյուր քրիստոնյայի համար: Ամեն Սուրբ Ծննդյան ավետիս հզոր վահան է և հաղթության զենք չարիքի ու մեղքի դեմ, գերագույն գրավականը գալիք Հարության:

Քրիստոսի անունը էմմանուել է, որ թարգմանվում է «Աստված մեզ հետ»: Աստծու ներկայությունն ու ներգործությունը մեր մեջ մեր կյանքի հոգևոր զորության աղբյուրն է: Նա, ով կտրվում է այդ աղբյուրից, շուտով ցամաքում է: Աստծուց հեռացած մարդն ի վերջո այլասերվում է իրեն հարազատ մարդկային նկարագրից: Աստված մեզ համար մարդ եղավ, որպեսզի մենք էլ ճշմարիտ մարդ դառնանք: Մանավանդ մենք՝ հայերս, մեր ողջ պատմության ընթացքում հավատացել ենք Հիսուսի պատգամներով աշխարհը վերափոխելու, մարդու հոգին ազնվացնելու գաղափարներին:

«Իսկ ովքեր Նրան ընդունեցին, նրանց իշխանություն տվեց լինելու Աստծու որդիներ, նրանց, ովքեր Իր անվանը կհավատան» (Հովհ. 1:12):

Մեր հայրերն ընդունեցին Հիսուսին 1700 տարի առաջ և Աստծու որդիներ կոչվեցին: Հայ ժողովուրդը Աստծու ժողովուրդ դարձավ և իր հավատքով օրինակ եղավ բոլոր ազգերի համար: Մեր ժամանակներում մենք մի փոքր հեռացել ենք այդ օրինակելի հավատքից: Մեր մեջ կան հավատքով տկարներ, որոնք հեշտությամբ փոխում կամ հեռանում են դարավոր հավատքից, նրանց հավատուրացությունը պատճառ է

հանդիսանում Աստծու զայրույթի: Մենք չենք գիտակցում Աստծու ժողովուրդ լինելու մեծագույն պարզև կարևորությունը, որ մեզ է հասել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շնորհիվ: Հավատուրացությունը կամ աղանդավորությունը նորանոր դժբախտությունների դուռ է բացում: Երկպառակտվում են ընտանիքի անդամները, երկփեղկվում է հայ ժողովրդի հոգևոր միասնությունը և հայրենիքը վերածվում է բաբելոնյան քառսի: Սա ևս մի պատուհաս է: Ուստի մեր համար խիստ այժմեական է «մեկ հոտ և մեկ հովիվ» Քրիստոսի պատգամը: Չկրկնենք անընդհատ, թե 70 տարի մենք զուրկ մնացինք քրիստոնեական դաստիարակությունից: Ի՞նչ արժե 70 տարին 1700 տարիների այդքան լի քրիստոնեական կյանքի փորձառության դիմաց: 70 տարվա սովը չի կարող 1700 տարվա առատությունը մոռացնել տալ, քանզի Աստված մեզ հետ եղավ դարեր շարունակ, թե՛ տառապանքի, թե՛ հաղթանակի մեջ:

Աստված մեզ հետ եղավ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի մեջ լուսեղինացած: Աստված մեզ հետ եղավ հայ գրերի մեջ՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի տեսիլքով ձև ստացած մեր մագաղաթների և մատյանների մեջ: Աստված մեզ հետ եղավ Ավարայրի դաշտում՝ Ս. Վարդանի կողքին կանգնած Ս. Ղևոնդի հրաշունչ աղոթքներով: Աստված մեզ հետ եղավ մեր խաչքարերի մեջ, մահվան դառնության դիմաց անմահության շունչն ապրեցնելով մեր մեջ:

Աստված մեզ հետ է այսօր և այդ գիտակցությունն առավել կներգործի մեր մեջ, եթե մենք ջանք թափենք կարելին անել, որպեսզի մենք լինեք Աստծու հետ: Լինենք լիասիրտ կերպով, վավերական ապրումով և ոչ թե դեպքից-դեպք Աստծու անունը հիշատակելով: Լինենք անկեղծ, ջերմ, ամբողջական ինքնամիացումով Աստծու հետ և ոչ թե մեր քրիստոնեական պատկանելության ձևական զգացումով:

Ուստի աղոթքով բացենք մեր սրտերի դռները և քաղցրությամբ ընդունենք մեծ ավետիսը Քրիստոսի հրաշք Օճնդյան:

*ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏԵՑԱԻ, ՄԵԶ ԵՒ ՁԵԶ ՄԵԾ
ԱՎԵՏԻՍ:*

ՁԱՏԻԿ

Քրիստոնեության ամենամեծ տոնն է Ձատիկը: Դարեր են անցել Քրիստոսի Հարության մեծահրաշ իրողությունից և այդ իրողությունը դեռ չի դադարել հրաշք լինելուց:

Քրիստոնյայի հավատքը շատ խոր ու մաքուր պետք է լինի, որպեսզի կարողանա ըմբռնել ու հասկանալ հարության իմաստն այնպես՝ ինչպես Պողոս առաքյալը հասկացավ ու քարոզեց, ինչպես հասկացան առաջին քրիստոնյաները, Հիսուսի բոլոր ճշմարիտ աշակերտները:

Սուրբ Հարության տոնը՝ Ձատիկը, գերազանցապես մարդկության հոգևոր և բարոյական վերածնության տոնն է: Ձատիկը հավիտենական գարնան և հավերժական կյանքի տոն է: Մահվան ու չարիքի դեմ Քրիստոսի հաղթանակով ամեն տարի վերստին լուսավորվում է մարդկային կյանքի ճանապարհը: Ինչպես ամեն գարուն մի հրավեր է, որ նոր լույսով, նոր ջերմությամբ կրկին ծլեն ու ծաղկեն մայր բնության դաշտերն ու հովիտները, այնպես էլ Սուրբ Հարության ավետիսը մի ոգեղեն հրավեր է ուղղված մարդկային աշխարհին՝ հոգեպես վերանորոգվելու, պայծառանալու և ուրախանալու՝ կյանքի ու արդարության ուժերի հաղթությամբ ընդդեմ մահվան ու չարիքի: Դարեր շարունակ մահը, որպես անպարտելի բռնավոր, անխնա հալածել է մարդկությանը, ծանր մղձավանջի նման ճնշել աշխարհի ուժերի վրա, տիրել մարդկային մտքին ու զգացմունքներին: Մարդը միշտ թույլ և անզոր է զգացել իրեն մահվան առաջ:

Հիսուսի Հարությունը հաղթանակ է մահվան նկատմամբ, քանզի մինչ Քրիստոսի Հարությունը մարդը միշտ ահ ու դողով է մոտեցել մահվան, այն դիտելով չարիքների մեծագույն չարիքը, որ իրարից բաժանել է սիրելիներին, գերեզման է տարել թույլին ու զորավորին, աղքատին ու հարուստին, ստրուկին ու թագավորին:

Քրիստոսի Հարությունը հիմնովին հեղաշրջեց մարդկության պատմությունը, նոր իմաստ ու նոր ընթացք տվեց նրան: Այն նոր շնչով վերանորոգեց մարդկանց և ժողովուրդների հոգիները, լուսավորեց դրանք, լցրեց նոր ուժերով ու շնորհներով, մարդկության առջև բարոյական

բարձր ըմբռնումների և ստեղծագործ կյանքի ճանապարհ բացեց: Քրիստոսի Հարության ավետիքով ուղեկորույս մարդկությունը վերագտավ իր փրկության ճանապարհը: Գերեզմանը քրիստոնյա մարդու համար ունայնության փոս չէ այլևս, այլ նոր, հավերժական կյանքի նախադուռ:

Ինչպես էլ փորձենք բացատրել Հիսուսի Հարությունը՝ իրողությունն այն է, որ առանց հարության և առանց հարության հավատքի չէր լինի ինքը՝ քրիստոնեությունը: Հենց հարության գաղափարի մեջ է քրիստոնեության հաղթության գաղտնիքը: Քանզի Քրիստոսի Հարությունը հուսահատ ու ընկճված մարդուն ապրելու ուժ և զորություն հաղորդեց:

Առաքյալների և առաջին քրիստոնյաների քարոզության և վկայության գլխավոր նյութն էր Քրիստոսի Հարությունը: Առաքյալ, ավետարանիչ, և քրիստոնյա լինել նշանակում էր վկա լինել Փրկչի Հարությանը. «Պետք է, որ մեզ հետ վկա լինի Նրա Հարությանը» (Գործ 1 : 22):

Քրիստոսի Հարությունից քսան դար հետո ևս, ամեն Ձատկի առավոտ, նորից մեր դեմ է կանգնում հարուցյալ Փրկիչը, որպես ուրախության աղբյուր, ճշմարտության քարոզ, հավերժական կյանքի հրավեր:

Այսօր Ձատկի ավետիսը մեզ համար նվիրական հրավեր է հաստատ մնալու մեր նախնյաց հավատքի վեմի վրա:

Հայ ժողովուրդն աշխարհի առաջին ազգերից էր, որ հավատաց ու իր կյանքով վկայեց Քրիստոսի Հարությունը: Հայ ժողովուրդը Հիսուսի նման չարչարվել է խաչը ուսին, բայց երբեք չի ուրացել իր հավատը, երբեք չի կորցրել իր հարության, իր փրկության հույսը: Տառապանքի ու նեղության ամենադառն օրերին հայը կենդանի պահեց հարության հավատը և այդ **հավատով** ապրեց մինչև մեր օրերը. վկա այն ազգերն ու ժողովուրդները, որ մեզանից մեծաթիվ ու զորեղ են եղել, բայց անհետացել են:

Հիսուսի հարության հավատով մեր Մայր եկեղեցին դարձավ հարության եկեղեցի, մեր ժողովուրդը՝ հարության ժողովուրդ: Մեր նախնիները հավատացին, թե կենդանի է Քրիստոս և իրենք էլ կենդանի են լինելու: Նրանք այս անցավոր կյանքն ապրեցին հարության հույսով: Մեզ չեն կարողացել գերեզմանել ոչ ժամանակը, ոչ արհավիրքները և ոչ էլ մեր թշնամիները: Ժողովուրդները չեն մեռնի, եթե

անձնասպան չլինեն: Մեր ներկա թշվառությունները, ներկայիս մղձավանջային վիճակը հենց Հարության հավատքի բացակայության արդյունք են:

Եվ միայն Հարության հույսը, Հարության զորությունը կարող են վերածնել մեզ այսօրվա վերքերից և հուսահատությունից, ինչպես անցյալում է եղել:

Նայեցեք Հիսուսի դատարկ գերեզմանին և հավատացեք հարության հրաշքին:

Դուք, սիրելի հայորդիներ, որպեսզի չշփոթվեք ու չմոլորվեք կորստյան ճամփաներում, ձեր հայացքն ուղղեք դեպի անցյալը մեր ազգի և մեր եկեղեցու, սովորեք ճանաչել ու հասկանալ մեր մեծագույն հայրապետների, մեր սուրբ հանճարների հոգին: Այս կերպ դուք պիտի ճանաչեք ու հասկանաք ձեր իսկ հոգին, ձեր գոյության իմաստը և ձեր կոչումն այս աշխարհի վրա:

Քրիստոսի հրաշափառ հարությունը յուրաքանչյուր հայ քրիստոնյայի համար մի գեղեցիկ առիթ է վերանորոգվելու և ուխտելու:

Ուխտենք հավատարիմ մնալ մեր հայրերի դավանած հավատքին, և որ հարության տոնախմբությունը լոկ խոսքերով չլինի, այլ սրտի ու հոգու իրական ապրումներով և որ այն լույս սփռի մեր կյանքի և գործի վրա:

Քրիստոս Յարեաւ ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնը
Քրիստոսի:

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (Վարդավառ)

Սրբեա Տէր, գմեղուցեալ Քո ծառայիցս և շնորհեա տեսանել
զքեզ և

լսել զհայրական զձայնն, եթե դա է Որդի իմ սիրելի:
Շարականից

(Սրբիր, ով Տէր, մեղուցյալ Քո ծառաների զգայարանները և
շնորհիր տեսանել Քեզ ու լսել քո Հայրական ձայնը,
թե՛ դա է իմ սիրելի Որդին):

Շարականագրի այս խոսքերը հիշեցնում են մեզ տաղավար այս տոնը՝ Պայծառակերպությունը, որ Հայոց

Եկեղեցու հինգ գլխավոր տոներից երրորդն է և տոնվում է Չատիկից 14 շաբաթ հետո:

«Եվ վեց օր հետո Յիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Յակոբոսին և նրա եղբորը՝ Յովհաննեսին և նրանց հանեց, առանձին, մի բարձր լեռ և նրանց առաջ պայծառակերպվեց և նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը և նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լույսը: Եվ ահա երևացին Մովսեսն ու Եղիան, որ խոսում էին նրա հետ: Պետրոսը պատասխան տվեց և ասաց Յիսուսին. «Տեր, լավ է, որ մենք այստեղ ենք, եթե կամենաս երեք տաղավարներ շինենք, մեկը՝ քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկն էլ՝ Եղիայի»: Եվ մինչև նա դեռ խոսում էր, ահա մի լուսավոր ամպից ձայն եկավ ու ասաց, «Դա՛ է իմ սիրելի որդին, որին հավանեցի, դրան լսեցեք»: Երբ աշակերտները այս լսեցին, երեսնի վայր ընկան և սաստիկ վախեցան: Եվ Յիսուս, մոտենալով, դիպավ նրանց ու ասաց. «Ուտքի՛ ելեք և մի՛ վախեցեք» (Մատթեոս 17 : 1-7):

Քրիստոնեական հասկացողությամբ Վարդավառը Քրիստոսի աստվածության բացահայտման տոնախմբությունն է: Մեզանից յուրաքանչյուրն իր մեղքերն ունի և որպեսզի մենք կարողանանք տեսնել ու հասկանալ Քրիստոսի աստվածության լույսը, պետք ունենք շարականագրի նման ասելու. «Ով Աստված, մաքրիր մեր զգայարանները, որպեսզի մենք կարողանանք տեսնել ու լսել»:

Աստծուն տեսնելու և Աստծուն լսելու համար արտասովոր աչքեր կամ ականջներ չեն պետք, այլ պետք են սրբված ու մաքուր զգայարաններ, մեղքի կեղտից մաքրված զգայարաններ, որպեսզի կարողանանք տեսնել ու զգալ այնպես, ինչպես երեք առաքյալները Թաբոր լեռան վրա: Ով իր մեղքը չի խոստովանում, ով չի հրաժարվում մեղքից, իրավունք չունի մոտենալու Աստծուն, տեսնելու Աստծու դեմքը:

Յիսուս Թաբոր լեռան վրա իր աշակերտներին ցույց տվեց իր աստվածային փառքը՝ պայծառակերպվելով, լույսերի մեջ երևալով նրանց: Նույն ձևով յուրաքանչյուր քրիստոնյա իր կյանքով, իր հավատքով, իր գործով պետք է մաքրագործվի մեղքից՝ ցույց տալու իր աստվածային կերպարը:

Պայծառակերպության տոնը հրավեր է նյութապաշտ մարդկանց, որ մարդկային մտքի սահմանափակումներից ու կուրություններից բարձրանան դեպի աստվածգիտության լույսը: Թող հասկանան վերջապես նյութապաշտները, որ

սպանելով Աստծու երկյուղը՝ մեռցնում են նաև իմաստությունը: Իսկ երբ լռում է Աստծու երկյուղից սկիզբ առած իմաստությունը, մնում են միայն իրար հոշոտող գայլացած մարդիկ:

Քրիստոսի պայծառակերպությունը պետք է պայծառակերպություն լինի ամեն մի քրիստոնյայի համար, որպեսզի նա հեռու մնա մեղքերից ու ամեն տեսակ չար խորհուրդներից, որպեսզի նրա հոգին պայծառանա և փայլի: Որպեսզի քրիստոնյան իր երկրավոր կյանքն ապրի մաքուր զգայարաններով, արժանանա Աստվածտեսության ու լսի Աստծու ձայնը, թե՛ «դա է Իմ սիրելի որդին»:

Այսօր մեր եկեղեցին մեր աչքերն ուղղում է դեպի Աստծու օրենքի բարձունքը, որպեսզի մեր կյանքը շաղախվի աստվածային սկզբունքներով. ապաշխարենք, ազատվենք մեղքերի կապանքներից, չպաշտենք ինքներս մեզ, այլ դառնանք դեպի Աստված և մեր կյանքի ճանապարհը լուսավորենք Նրա պատվիրաններով, որոնք մաքուր ոսկու նման փայլուն կանեն մեր հոգին:

Այս տոնը հրավեր է մեր ժողովրդին՝ հավատարիմ մնալու իր հավատքին և իր եկեղեցուն: Նայենք լեռների բարձունքներին կանգնած մեր վանքերին, որոնք սրբավայր են և գանձատուն մեր հայրերի հավատքի: Նայենք մեր բլուրների և դաշտերի վրա ցանված խաչքարերին և հիշենք մեր հայրապետներին ու սրբերին, որոնք մեզ համար մի հրաշալի բարձունք են կառուցել, որ կոչվում է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ և այդ բարձունքի վրա մեր տեր Հիսուս Քրիստոսի լուսավոր պատկերն է:

Աղոթենք և աղոթքի մեջ պիտի գտնենք մեր մխիթարությունը:

Հավատանք և հավատքի մեջ պիտի գտնենք մեր կյանքի ճշմարտությունը:

Բարձրանանք և հոգեկան այդ բարձունքի մեջ պիտի գտնենք աստվածային լույսը:

Այսօր մեր ժողովրդի համար և՛ Պայծառակերպություն է, և՛ Վարդավառ: Մեր հայրերը իմաստությամբ չմոռացան նախաքրիստոնեականը, այն միահյուսեցին միաստվածության ճշմարտի հետ, որպեսզի մեր եկեղեցին ճշմարտապես դառնա հայկական և քրիստոնեական: Ով հայ է

և քրիստոնյա, պետք է հասկանա, որ մեր Մայր եկեղեցին է միայն, որ և՛ հայկական է, և՛ քրիստոնեական:

Ուստի, այսօր Ս. Էջմիածինը թող թաքոր լեռը դառնա հայ ազգի համար, որպեսզի ազգովի պայծառակերպվենք ու լցվենք աստվածային լույսով:

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ (Խաղողօրհներ)

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Աստվածածնի մահվան և երկինք փոխադրվելու հիշատակը տոնում է «Վերափոխումն կան ննջումն Ս. Կույսի» անվան տակ: Այս տոնը մեր եկեղեցու հինգ գլխավոր (տաղավար) տոներից չորրորդն է և կատարվում է օգոստոսի 15-ի մերձակա կիրակի օրը:

Քրիստոս խաչի վրա կրած Իր ծանր չարչարանքների մեջ անգամ չմոռացավ Իր մորը և առաքյալների խնամքին հանձնեց նրան: Քրիստոսի համբարձումից հետո Ս. Կույսը շրջապատվեց ջերմ հոգածությամբ և 15 տարի ապրեց Երուսաղեմում: Ապա Սուրբ Մարիամը հանգիստ ու խաղաղ ննջեց: Առաքյալները և բարեպաշտ քրիստոնյաները հանդիսավոր թափորով Աստվածամոր մարմինն ամփոփեցին Գեթսեմանի պարտեզի լանջին: Թաղումից հետո երեք օր ու գիշեր գերեզմանի մոտ հրեշտակային երգեր էին լսվում: Թաղմանը չի մասնակցում միայն Բարդուղիմեոս առաքյալը, որը բացակայում էր Երուսաղեմից: Իմանալով Աստվածամոր վախճանի մասին՝ նա շտապում է Երուսաղեմ և այցելում գերեզման, վերջին անգամ տեսնելու և իր որդիական սերն ու հարգանքը մատուցելու Տիրամորը: Սակայն, երբ աշակերտները գլորում են գերեզմանի քարը՝ Սուրբ Կույսի մարմինն այնտեղ չի լինում: Նրանք հասկանում են, որ Քրիստոս Իր մորը երկինք է փոխադրել: Ահա թե ինչու Սուրբ Կույսի երկրավոր կյանքի վախճանն անվանվում է «ննջում», որպեսզի հասկանալի դառնա նրա երկինք վերափոխվելը:

Սուրբ Կույս Աստվածածինը հայ քրիստոնյայի համար դարեր շարունակ եղել է գերագույն հարգանք վայելող բացառիկ անձնավորություն: Նրա կուսական մաքուր կյանքը,

առաքինի վարքը և աստվածահաճո ընթացքը եղան այն գրավականը, որով նա առանձնացավ աշխարհի բոլոր կույսերից, ընտրվեց Աստու կողմից և ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ դարձավ: Ուստի, տոնի առաջին պատգամը մաքրակենցաղությամբ, սրբությամբ և բարոյական առողջ սկզբունքներով մեր կյանքն ապրելու պատգամն է:

Աստվածածնի տոնին քրիստոնեական եկեղեցին ոչ միայն ոգեկոչում է նրա հիշատակը, այլև մասնավոր կերպով ընդգծում Մարիամի մայրական կերպարը: Աստվածածինը հավատավոր, առաքինի, գթառատ մոր մարմնացումն է, ընտանեկան սրբության պահապանը, բարոյականության խտացումը, «սրբարան մաքրության»: Մայր, որ ոչ թե լոկ զավակ է ծնում, այլ ապրում է իր զավակի համար: Աստվածամայրը տառապեց ամեն անգամ, երբ իր զավակը հալածվեց: Խաչելության ժամանակ անգամ իր որդու տառապանքը նա իր մեջ կրեց: Մոր կերպարն այսպես է ընկալվել հայ ժողովրդի կողմից և դրա համար էլ մեր ժողովուրդն իր գերագույն արժեքները մայր բառով է կոչել: Այսպես՝ իր եկեղեցին կոչել է Մայր եկեղեցի, իր լեզուն՝ Մայրենի լեզու, իր հայրենիքը՝ Մայր հայրենիք: Մայրությունը անփոխարինելի է և նա, ով հրաժարվում է մայրության զաղափարից՝ հրաժարվում է կին լինելու ճշմարիտ զաղափարից, բացի այն պարագայից, երբ իրեն ամբողջովին ընծայում է Աստուին:

Բացահայտ է, որ մեր օրերում օրեցօր արժեզրկվում են ընտանեկան սրբությունները, ոտնակոխ արվում ընտանեկան ավանդությունները: Եվ որ ամենացավալին է, խամրում է հայ կնոջ, հայ մոր կերպարը, թեև քաջ գիտակցում ենք, որ մայրական զգացմունքն ու կոչումն են, որ բնութագրում են կնոջը, և առողջ ընտանիքն է հասարակության հիմնաքարը, ազգի գոյատևման նախապայմանը:

Այսօր, երբ մեր չորս կողմն այսքան մոլորեցնող զաղափարներ են շրջում, վերարժևորենք մայրության գեղեցկագույն կոչումը հայ ազգի մեջ: Ընտանիքի սրբությունն է ազգի առողջության զաղտնի ուժը, երեխաների առողջ դաստիարակությունը քրիստոնեական շնչով: Մեր մաղթանքն է, որ հայ մայրերը Սուրբ Աստվածածնի պես մաքուր կյանք ապրեն և սուրբ պահեն իրենց ընտանիքները:

Աստվածածնի տոնին Հայ Եկեղեցուն պահպանված գեղեցիկ ավանդության համաձայն, տեղի է ունենում խաղողի օրհնություն: Խաղողը Հայաստանում համարվում է դաշտերի ու այգիների ազնվագույն պտուղը, ինչպես Հիսուս Աստվածածնի օրհնյալ պտուղն է. «Օրհնյալ ես դու կանանց մեջ, և օրհնյալ է քո որովայնի պտուղը» (Ղուկաս 1 : 42):

Հայ ժողովուրդը միշտ էլ մեծ ցնծությամբ և խոր ակնածանքով է նշել Աստվածածնի տոնը, ուխտագնացություններ կազմակերպել դեպի այն սրբավայրերը, որոնք կոչվում են Աստվածածնի անունով: Հայ ուխտավորն իր աղոթքների մեջ դիմել է Աստվածածնի բարեխոսություններին, հայցել նրա օգնությունը, որպեսզի սուրբ մնա հայ ընտանիքը, հայ կինը և հայոց օջախը:

ԽԱՉՎԵՐԱՑ

Կորստյան մատնվածների համար խաչի քարոզությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծու զորությունը: Ա. Կորնթ. 1:18

Սեպտեմբերի 14-ի մոտակա կիրակի օրը Հայաստանյայց Եկեղեցին տոնում է իր հինգերորդ՝ վերջին տաղավար (գլխավոր) տոնը, որը մեր իմաստուն հայրերը նվիրել են խաչին՝ կոչելով ԽԱՉՎԵՐԱՑ:

Ինչպես մյուս տաղավար տոները, այնպես էլ խաչվերացը հիմնված է պատմական եղելության վրա: Իր հզորության գագաթնակետին հասած պարսից խոսրով շահը մեծ զորքով հարձակվում է Բյուզանդիայի վրա և հաղթում բյուզանդացիներին: Պարսից շահը գրավում է նաև Երուսաղեմը, որտեղ բազմաթիվ գերիների ու ռազմավարի հետ գերեվարում է և Քրիստոսի խաչափայտը՝ մեծ անարգանք հասցնելով քրիստոնյաներին: Ջրկվելով այս սրբությունից՝ քրիստոնյաները հայտնվում են անմխիթար վիճակում: Տիրոջ խաչը հասցվում է Պարսկաստան, որտեղ տեղաբնակները մեծ երկյուղածությամբ են վերաբերվում խաչին՝ ասելով, որ քրիստոնյաների Աստվածն է իրենց մոտ եկել: Դրանից նրանց սրտերն այնպիսի ահով են լցվում, որ հեթանոս լինելով հանդերձ՝ չէին համարձակվում վնասել

Խաչափայտը: Շատերն այդ ահից դիմում էին տեղաբնակ քրիստոնյաներին և լսելով Ավետարանի խոսքը՝ քրիստոնեություն ընդունում:

Միայն 628 թ. Յերակլ կայսրը մեծաթիվ բանակով շարժվում է դեպի Պարսկաստան (Յերակլ կայսեր զորքին է միանում նաև հայոց բանակը՝ Մծեժ Գնունու գլխավորությամբ), պարտության մատնում Խոսրով շահին և զերությունից ազատում Քրիստոսի Խաչափայտը: Այս Խաչափայտը մեծ փառքով ու պատվով, հանդիսավոր թափորով փոխադրվում է հայոց Կարին քաղաքը, այնտեղից՝ Կոստանդնուպոլիս և հետո՝ Երուսաղեմ:

Ճանապարհին Խաչն ամեն տեղ վերացվում է՝ բարձրացվում է և ամենուր ցնծություն առաջացնում: Այստեղից էլ տոնի անվանումը՝ Խաչը վերացնել, բարձրացնել:

Իսկ ի՞նչ է Խաչը մեզ համար:

Քրիստոս Իր արյունը թափեց խաչի վրա՝ մեր մեղքերը քավելու և մեզ հավիտենական կյանք պարգևելու համար:

Հին աշխարհում Խաչը գործածում էին իբրև պատժի և անարգ մահվան գործիք և հին աշխարհը սարսափում էր խաչից՝ իբրև մահվան գործիքից: Քրիստոսի խաչելությամբ Խաչը դադարեց չարչարանքի և մահվան սարսափազդու գործիք լինելուց, այլ իմաստավորվեց և դարձավ փրկագործության, կյանքի և մահվան դեմ հաղթանակի խորհրդանիշ: Քրիստոս սուրբ և անարատ մարմնով միացավ խաչափայտին ու սրբեց այն՝ Խաչը տալով մեզ որպես սրբության միջոց ընդդեմ դևերի, մեղքերի, հիվանդությունների և այլ պղծությունների, քանզի ովքեր հավատով մերձենում են սուրբ խաչին, նրա միջոցով սրբվում են այս ամենից:

Այսօր մենք հպարտությամբ մեր կրծքին կրում ենք Խաչը, մեր եկեղեցիները զարդարում ենք Խաչով և մեր բոլոր աղոթքներն ու ազնիվ գործերն սկսում ենք խաչ հանելով:

Քրիստոնեական պատմության ողջ ընթացքում խաչի իմաստը նույնը եղավ աշխարհի բոլոր ճշմարիտ քրիստոնյաների համար: Մեր հայրերը մեր պատմության ամենադաժան ու անհուսալի թվացող պահերին ապավինեցին խաչի զարմանահրաշ գործությանը: Այդ Ձորությունն անբաժան մնաց մեր ժողովրդից հայրենիքի պաշտպանության բոլոր

մարտերում՝ Ավարայրից մինչև Սարդարապատ և Արցախ: Խաչն ու նրանով սրբագործված մեր հավատը պահեցին, պահպանեցին ու մոխիրներից վեր բարձրացրին մեր ժողովրդին:

Այսօր վերստին փայլում է Խաչը մեր հոգում և մեր մայր եկեղեցում: Տա Աստված, որ մենք տեսնենք այն ու զորամանք նրանով, որպեսզի Խաչը լուսավորի մեր ճանապարհը այժմ և հավիտյան:

ՏՈՆ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

Ամեն ժողովուրդ իր ազգային-եկեղեցական տոներն ունի: Հայ ժողովուրդն էլ այլ տոների շարքում ունի իր լեզվի ու մշակույթի տոնը: Ամեն տարի հոկտեմբեր ամսին Հայոց եկեղեցին տոնում է ԹԱՐԳՄԱՆՉԱՑ տոնը:

«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

(Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը):

Դպրոցական տարիներից բոլորը գիտեն հայերեն տառերով գրված առաջին նախադասությունը, բայց քչերին է հայտնի, որ այդ նախադասությունը Աստվածաշունչ մատյանից է, որ հայերեն գրերը Աստծու պարզև են հայ ժողովրդին ...

Հայաստան աշխարհի քրիստոնեացումից մինչև 5-րդ դար հայ եկեղեցին տակավին չէր հայացել, որովհետև չունեին սեփական գիր ու գրականություն: Քրիստոնեությունն իբրև պետական կրոն ընդունելուց մոտ մեկ դար էր անցել: Վանքերում և եկեղեցիներում կանոնավոր արարողություններ էին կատարվում, ընթերցվում էր Սուրբ Գիրքը, սակայն ժողովրդի մեծ մասի համար անհասկանալի էր այդ ամենը, քանզի հայերեն գրերի բացակայության պայմաններում եկեղեցական լեզուն ասորերենն էր: Ուստի և, Աստծու խոսքը շատերի սրտերին չէր հասնում:

Ահա այս պայմաններում էր, որ Սուրբ Մեսրոպ վարդապետը, Սահակ Պարթև կաթողիկոսի օրհնությամբ ձեռնամուխ եղավ հայոց տառերի ստեղծմանը: Երկար փնտրումներից ու այլ ազգերի տառերը հայերեն լեզվի

համապատասխանեցնելու անհաջող փորձերից հետո Մաշտոցը տրվեց աղոթքին ու խոկմանը, և Աստված լսեց նրա աղոթքները: Մաշտոցը, ոչ այն է երագով՝ քնի մեջ, ոչ այն է տեսլիքով՝ արթմնի, տեսավ, թե ինչպես մի ձեռք տառեր է գրում ու տառերը պահպանում են իրենց ձևը, ինչպես ձյան վրա: Աղոթքից վեր կենալով, Մաշտոց վարդապետը գրի առավ մեր նշագրերը: 1600 տարի է անցել այդ օրվանից, բայց հայ գրերը չեն փոփոխվել ու պահպանել են իրենց նախնական տեսքը, քանի որ հույժ կատարյալ են, ինչպես Աստծու ստեղծած ամեն ինչ:

Ապա սկսվեց աստվածաշունչ մատյանի ամբողջական թարգմանությունը, որ մշակումներով ու լրացումներով տևեց շուրջ 30 տարի: Աստվածաշունչն այլևս հայերեն էր, Աստված խոսում էր հայերեն: Ս. Սահակ Պարթևն ու Ս. Մեսրոպ Մաշտոցը, Եզնիկ Կողբացին ու Յովսեփ Պաղունացին, Կորյունը, Ղևոնդ Վանանդեցին և մյուսներն իրենց հոգու ամբողջ ջերմությունը ներդրեցին, իրենց հոգին նվիրեցին Աստվածաշնչի թարգմանության սրբազան գործին: Նրանց անկրկնելի թարգմանության շնորհիվ Աստվածաշնչի հայերեն օրինակը բոլոր ազգերի կողմից անվանվեց ԹԱՐԳՄԱ-ՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱԳՈՒՅԻ: Շուտով բացվեցին դպրոցներ, սկիզբ դրվեց հայ դպրությանը: Գրվեցին աղոթքներ, հոգեգնայլ շարականներ, զարկ տրվեց թարգմանական և ինքնուրույն գրականությանը, մարդկային բազմություններով լցվեցին եկեղեցիները, ճոխացան Փրկչի տոները: Եվ լուսավորվեց ողջ Հայոց աշխարհը: Հայ գրերի գյուտով և Աստվածաշնչի թարգմանությամբ հիմք դրվեց հայ հոգևոր-մշակութային նոր շարժման, որ մեր ազգի ՈՍԿԵՂԱՐԸ դարձավ:

Թարգմանիչ բառը ներկայիս առօրյա խոսակցական իմաստով նշանակում է լոկ մի լեզվից մի այլ լեզվի թարգմանող անձ: Սակայն մեր հայրերը ոչ միայն թարգմանեցին Աստվածաշունչը, այլ ապրեցին ու այն հայացրին: Սուրբ Գիրքը հայ ժողովրդի համար կյանքի ձև ստացավ: Նրանք Աստծուն իջեցրին հայ մարդու հոգու մեջ:

Քրիստոնեությունը միս ու արյուն դարձավ հայի համար, դարձավ գորություն և հային հայ պահեց բոլոր ժամանակներում:

Սուրբ թարգմանիչները իրենց կյանքով դարձան հայ ժողովրդի թարգմանը Աստծու մոտ: Այսօր էլ նրանք շարունակում են իբրև փարոս լուսավորել հայոց ապագան: Թարգմանչաց տոնը հայ հոգու պանծացման տոնն է: Մեր եկեղեցու հայրերն այսօր էլ կարծես խոսում են մեզ հետ: Ս. Սահակը սովորեցնում է մեզ մեծ լինել և խոնարհ, Ս. Մաշտոցը՝ չվախենալ և աղոթքով հաղթահարել դժվարությունները, Եզնիկը ուղեցույց է հավատքը պաշտպանելու, Եղիշեն հայրենասիրությամբ է լցնում մեզ, Խորենացին ուսուցանում է հայոց պատմությունը, Շիրակացին առաջնորդում է բնության և տիեզերքի գաղտնիքների մեջ, Գրիգոր Նարեկացին մեր հոգին բարձրացնում է դեպի Աստված, Շնորհալին հայ հավատքի բանաձևն է տալիս և սովորեցնում Աստծու փառքը երգել ...

«Թարգմանիչներ» անվանված հոգևոր-մշակութային հզոր շարժումն անկրկնելի երևույթ էր հայոց պատմության մեջ: Թարգմանիչները հիմք դրեցին ազգային ինքնուրույն գրականության, ճարտարապետության, պատմագրության, բժշկության, փիլիսոփայության, աստվածաբանության, երաժշտության, որով մենք քաղաքակիրթ աշխարհի լիիրավ անդամը դարձանք: Այդ նրանք էին, որ գրեթե ոչնչից ստեղծեցին ինքնատիպ մի մշակույթ, որ ուրիշ ոչ մեկ ազգի հետ չես շփոթի: Այդ նրանց ջանքերով էր, որ ազգը համախմբվեց միասնական մեկ հավատքի շուրջ և կարողացավ ետ վանել ճակատագրի դառը փորձությունները:

Հազար ու մի փոթորիկներ անցան հայ ժողովրդի վրայով, բայց ոչ մի արհավիրք չկարողացավ հայ ժողովրդի հոգուց խլել իր սեփական մայրենի լեզուն և իր արյունով գնված քրիստոնեական հավատքը, որ մեր պապերը կտակեցին մեզ: Նրանք կտակեցին չբաժանվել մեր Մայր եկեղեցուց, որ ծննդավայրն է հայ լեզվի և հայ մշակույթի:

Այսօր մեզ մնում է աղոթել Աստծուն և մաղթել, որ Թարգմանչաց ոգին և նրանց շնորհները մնան հայ ազգի յուրաքանչյուր անհատի հետ:

ԹԱԴԵՈՍ ԵՎ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

Նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին Հայ Առաքելական եկեղեցին նշում է Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների տոնը:

Քրիստոսի Համբարձումից հետո, համաձայն Տիրոջ պատգամի, Նրա աշակերտները տարածվեցին աշխարհով մեկ՝ ուսուցանելու բոլոր հեթանոս ազգերին քրիստոնեական վարդապետությունը: Առաքյալներն ընդամենը 12-ն էին և նրանցից երկուսը եկան Հայաստան ու նահատակվեցին Հայաստան աշխարհում: Հայոց հողը սնվեց առաքյալների արյունով ... Երբ Սանատրուկ թագավորի հրամանով սպանում են Թադեոս առաքյալին՝ բացվում է ժայռը, որում և ամփոփում են առաքյալի մարմինը: Այսօր այդ ժայռի վրա է գտնվում Ս. Թադեի վանքը ...

Մենք մեր եկեղեցին առաքելական ենք կոչում և դրանով իսկ հավաստում, որ քրիստոնեությունը Հայաստան մուտք է գործել առաջին իսկ դարից՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների միջոցով:

Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները քրիստոնեության առաջին ուսուցիչները եղան Հայաստան աշխարհում: Նրանց կյանքն ու քարոզչությունը լավագույն օրինակը հանդիսացավ քրիստոնեության զորության և կենսունակության: Հեթանոսական ցուփ ու շվայտ կենցաղավարության, կռապաշտության խավարի մեջ թաղված Հայաստանը տեղի տվեց ճշմարիտ լույսի առջև: Մենք 301 թ. ենք համարում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու տարեթիվ, սակայն մինչ այդ առաքյալների ցանած սերմերն էին արդեն ծլարձակել: Առաքյալների քարոզչությամբ արդեն պարարտ հող էր նախապատրաստվել հայ ժողովրդի դարձի համար: Քրիստոնեության առաջին հիմնաքարերն առաքյալներն էին դրել ...

Պատահական չէ, որ ամեն տարի հենց Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների տոնին է Սայր Աթոռ Ս. Էջմիածնում անցկացվում կրոնի ուսուցիչների ամենամյա հավաք: Եթե մենք ուզում ենք այսօրվա «խավարից», այսօրվա հոգևոր սնանկությունից դուրս գալ, նախ և առաջ պիտի սկսենք մեր մատաղ սերնդի հոգևոր կրթությունից:

Այսօր մեր երեխաներին պիտի կրոնական դաստիարակություն տանք, որպեսզի նրանք պաշտպանված լինեն աղանդավորության պղծություններից, որպեսզի շիտակ մեծանան, քանզի եթե առաջին քարը ծուռ է դրված, այդ շենքն էլ ծուռ կկառուցվի և կփլվի:

Ամեն ծնող, ամեն գիտակից քրիստոնյա պետք է լինի ուսուցիչ՝ քրիստոնեական ոգով կրթելու ու դաստիարակելու համար իր զավակներին: Ուսուցիչ, որ իր հոգու ջերմությունն է դնում կրթության գործին: Ուսուցիչ, որի մեջ երեխաները պետք է զգան Աստծու ներկայությունը: Որ ոչ թե Աստծու մասին է խոսում երեխաներին, այլ Աստված է իր միջից խոսում:

Կրոնական դաստիարակությունն ու կենցաղավարությունը չպետք է շփոթել գիտության կամ մասնագիտության հետ: Հովսեփը քանի՞ տարեկան էր, Աբրահամը քանի զլուխ ոչխար ուներ, Նոյը քանի՞ տարի ապրեց ... սրանք չեն կրոնը: Սրանք մենք սովորում ենք, որպեսզի նրանց միջից Աստծու արքայության, հավիտենական կյանքի զգացումն ունենանք: Քրիստոնեությունը գիտությունից առավել կյանք է ու ապրելակերպ: Անհավատը նույնպես կարող է գիտենալ աստվածաշնչական պատմությունները: Կարող է բաց անել Սուրբ գիրքը և սովորել: Ուղեղի հարց է: Սակայն քրիստոնեությունը ոչ միայն ուղեղի, այլև հավատքի, հոգու, սրտի հարց է:

Հավատքով լցվենք, և դա թող լինի Ավետարանի դասը, որովհետև Ավետարանը հաղթանակի կրոն է և ոչ թե պարտվողականության, հուսահատության, դժգոհության ... Հիսուսից դժգոհեցին, սակայն Նա որևէ մեկից չդժգոհեց: Նա իր կյանքը տվեց, իր խոսքը, իր արյունը:

Այս օրերին առավել ուշադրություն դարձնենք մեր երեխաներին, որոնք գրեթե կտրված են մեր դարավոր ավանդություններից ու անհաղորդ մեր Սուրբ Եկեղեցու խորհուրդներին:

Այսօրվա սերունդը սեփական ինքնության վերագիտակցության կարիքն ունի: Այսօր մենք ապրում ենք մի այնպիսի սպառողական հոգեբանությամբ, որ հավատքը, հավատքի գորությունը դարձել են լոկ պատմական հիշողություն: Մեր զավակների մեծ մասն այսօր կտրվել է

սուրբ խորհուրդներից, զրկել իրեն ավետարանական ճշմարտություններից:

Դադարենք ապրել այսօրվա սպառողական հոգեբանությամբ: Վերագտնենք հավատքի զորությունը: Հավատքի, սրբության, ազնվության ու սիրո վրա կառուցենք մեր հայրենիքը և պահպանենք մեր քրիստոնեական նկարագիրը:

Թաղետս և Բարդուղիմեոս առաքյալների տոնը վերանորոգության օր հռչակենք բոլորիս համար ու չթողնենք, որ միայն պատմության էջերը խոսեն, այլ մեր աղոթքներով և առաքինի կյանքով պանծացնենք մեր եկեղեցին:

ՏՈՆ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

Ողջ հայության, ամբողջ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր տաճար Սբ. Էջմիածնի տոնն է սա և նշվում է Զատիկից 9 շաբաթ հետո:

Ըստ մեր պատմիչներ Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի, Սուրբ Գրիգոր Լուսավորիչը խոր Վիրապի բանտից ազատվելուց հետո, որպես հայոց առաջին կաթողիկոս բնակվեց Վաղարշապատում: Նա հաճախ էր գիշերները դուրս գալիս քաղաքի պարիսպներից և առանձին աղոթում: Մի գիշեր, ի պատասխան նրա ջերմեռանդ աղոթքների, Աստված Սուրբ Գրիգորին հրաշալի տեսիլքի է արժանացնում: Տեսիլքի մեջ բացվում են երկնքի դռները և լույսի հեղեղների մեջ սերովբեներով շրջապատված Աստծու Միածին Որդին, մի ոսկե ուռ /մուրճ/ ձեռքին, իջնում է Վաղարշապատ և ոսկե ուռով բախում գետնին: Դրանից հետո երևում է մեծ ու բարձր բլրի մեծությամբ ճախարակի ձևով ոսկյա խարիսխ, խարիսխի վրա մի հրեղեն սյուն և սյան վրա՝ ամպեղեն գմբեթ, իսկ գմբեթի վրա փայլում էր լուսաճաճանչ խաչը: Մինչ Սուրբ Գրիգորը զարմացած դիտում էր, Աստծու հրեշտակը բացատրում է տեսիլքի իմաստը. «Ոսկե խարիսխը անշարժության և անդրովելի հաստատություն է, հրեղեն սյունը ոսկե խարիսխի վրա՝ Հայաստանյայց Կաթողիկե Եկեղեցին է, ամպեղեն գմբեթը արդարների բնակարանն է, իսկ մեծ լուսավոր խաչը՝ մեծ Քահանայապետությունն է: Այստեղ թող լինի Աստծու տաճար,

աղոթքի տուն բոլոր հավատացյալների համար և քահանայապետության աթոռ:

Մյուս օրը՝ վաղ առավոտյան, Ս. Գրիգորը տեսիլքի մասին պատմում է Տրդատ թագավորին և նրանք անմիջապես ձեռնամուխ են լինում Մայր տաճարի շինությանը: 303 թ. Էջմիածնի տաճարը կառուցվեց և դարձավ աշխարհի առաջին քրիստոնեական տաճարն ու Հայաստանյայց Եկեղեցիների Մայրը և Աթոռը քահանայապետության:

Սուրբ Էջմիածնի գաղտնի բանալին հենց բառի մեջ է. Էջ-Միածին՝ Միածնի իջման վայր: Երբ մեր ժողովուրդն Էջմիածին է ասում, Քրիստոս է հասկանում, Ավետարան է հասկանում: Երբ Էջմիածին բառը հնչում է հայ ժողովրդի շրթներին, մեր ժողովուրդը միայն քարերը չի պատկերացնում, այլ այն սուրբ հայրերին, ովքեր այդ քարերի մեջ աղոթք են խառնել, հոգեկան ապրումներ գետեղել, ովքեր իրենց կյանքն են դրել այդ քարերի մեջ:

Այսօր Հայոց Հայրապետության, Հայոց Եկեղեցու հիմնադրման տոնն է: Քիչ ազգեր կան աշխարհի վրա, որ իրենց Եկեղեցու հիմնադրման այսքան փառավոր ավանդություններ ունեն:

Սուրբ Էջմիածինը դարձավ հայության անաղարտ և հարազատ տունը: Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը նույնացան իրար հետ: Հայ Եկեղեցու կապը հայ ժողովրդի հետ անուրանալի և անխորտակելի իրականություն է: Այս իրականությունը պատմական է և անխոցելի:

Այս նվիրական կենտրոնը 1700 տարի շարունակ եղել է ողջ հայության միասնության, տևականության և պահպանության ամրակուռ բերդը, իր հույսի, հավատքի և զորության ապավենը: Այն հանդիսացել է վառարանը հայ ժողովրդի հոգևոր նշակույթի, ներշնչարանն իր ազգային ձգտումների և նվիրական գաղափարների, վկայարանն իր տառապանքի և վառ իղձերի, ու վերջապես կենդանի խորհրդանշանն իր ազգային անկախության և ազատության:

Հայ ազգի մտավոր ու հոգևոր կյանքի արմատն ու հիմքը Սուրբ Էջմիածինն է՝ իր աշխարհասփյուռ Եկեղեցիներով: Էջմիածնից հեռացած հայություն երևակայելը ցնորք է: Նրանք, ովքեր հեռացել են հայ Եկեղեցուց՝ դառնալով կաթոլիկ, բողոքական կամ աղանդավոր, կտրել են իրենց կապը մեր

Ժողովրդի հետ և ի վերջո դադարել են հայ լինելուց, ծուլվել ու անհետացել են այլ ազգերի մեջ: Դրա ապացույց են բազմաթիվ այն հայկական գաղթօջախները, որոնք անջատվեցին իրենց արմատից և շուտով բոլորովին չորացան, խռիվ դարձան ու ոտքի կոխան դարձան:

Այն հայը, որ Սուրբ Էջմիածնի և հայ եկեղեցու նկատմամբ իր հոգևոր պարտքը չի կատարում, լինի նա եկեղեցական, թե աշխարհական, այդպիսին մայրատյաց զավակ է, հայ ազգի անդամությունից դուրս:

Ամուր կանգնենք մեր հայրերի հավատքի հիմքի վրա, հարատևորեն ձգտենք արդարության ու խաղաղության և աղոթենք, որ Աստված լսի մեր խնդրանքը, փափկացնի կարծրացած, օտարացած սրտերը և միաբանության մեջ երջանիկ օրեր պարգևի մեր ժողովրդին:

ՄԵՐ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հիշիր անցած օրերը, մտաբերիր անցած
սերունդների տարիները,
հարցրու քո հայրերին և նրանք քեզ կպատմեն,
քո ծերերին և նրանք քեզ կասեն:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԵՆՔ 32 : 7

Ձարգացման ենթակա ամեն արարած իր հայրենքն ունի. բույսը, կենդանին իրենց բնիկ աշխարհն ունեն, ուր ազատ են աճում, քան մի ուրիշ երկրում: Հասարակածի բոլոր բույսերը բևեռային գոտում աճել չեն կարող և հակառակը: Նախախնամությամբ սահմանված մի օրենք է այս, որին ենթարկվում է և մարդը: Բայց մի մեծ տարբերություն կա մարդու և մյուս արարածների մեջ. մարդու կյանքը կենդանականի և հոգևորի մի գումար է: Քաղաքակիրթ կյանքով ապրող ազգերի համար սովորական իմաստով հայրենիքից զատ կա մի ուրիշ՝ հոգևոր հայրենիք: Հոգևոր կյանքն էլ ունի իր հայրենիքը ճիշտ այն նմանությամբ, ինչպես նյութական հայրենիքն է: Ամեն հողի վրա նույն գաղափարը աճել չի կարող: Նույնիսկ բարոյական և կրոնական ամենաընդհանուր գաղափարները տարբեր ժողովուրդների մեջ նույն դրսևորումները չեն

ունենում: Քրիստոնեությունն էլ տարբեր բացատրություններ և երանգավորում է ստացել այլևայլ ազգերի մեջ, թեև արմատով նույնն է ամեն տեղ: Դավանաբանական և ծիսական տարբերությունները եկեղեցիների մեջ ընդհանրական եկեղեցու բաժանվելը ազգային եկեղեցիների, Աստուտնօրինության և բնական, պատմական պարագաների հետևանք էին և ոչ թե այս կամ այն անձի կամայականության: Ամեն ազգի հոգևոր կյանքն իր բնորոշ կողմերն ու հատկություններն ունի, որ կարող է միայն իր բնիկ հողի վրա զարգանալ:

Արդ, ո՞րն է հայ ժողովրդի հոգևոր հայրենիքը: Այս հարցի պատասխանը կարող ենք տալ, երբ աչքի առաջ ունենանք մեր ժողովրդի անցյալը: Պատմությունը ազգերի կյանքի հայելին է, որի մեջ անդրադառնում է ճիշտ պատկերը:

Հայ ժողովրդի գիտակցական քաղաքակրթությունը սկսվում է քրիստոնեության հաստատմամբ և նրա դրոշմն է կրում իր զարգացման ամբողջ ընթացքում: Հայոց մատենագրության առաջին հիշատակարանը Սուրբ Գրքի թարգմանությունն է, որի վրա կրթվել են բազմաթիվ սերունդներ: Հինգերորդ դարից առաջ թե ունեցել է ենք հեթանոսական քաղաքակրթություն, ձուլվել է քրիստոնեականի հետ: Հայոց հոգևոր կյանքի պատմությունը գրեթե նույնանում է մեր եկեղեցու զարգացման պատմության հետ: Հայ ժողովրդի մատենագիրներն ու վարժապետները միևնույն ժամանակ եկեղեցու սպասավորներ են եղել: Գիտությունն ու արվեստը հայ ժողովրդի մեջ ծագել և զարգացում են ստացել եկեղեցու շրջանակի մեջ: Հայոց ճարտարապետության մասին գաղափար ենք ստանում նախնյաց թողած վանքերով ու եկեղեցիներով: Հայոց քանդակագործությունը՝ օրնամենտներ, խաչքարեր, նկարչության մնացորդներ, նույն վանքերում և նրանց պատերի վրա պետք է որոնել: Մանրանկարչության արվեստը ծաղկել է հայ վանականների ձեռքով և պահվել է բազմաթիվ ձեռագրերի մեջ: Հայ ժողովրդի ձեռագործության, ոսկերչության, փայտի փորագրության մասին գաղափար ենք ստանում եկեղեցիներում և վանքերում պահված սրբազան անոթներով և զգեստներով: Եկեղեցական երգեցողությունը սերնդեսերունդ ավանդվել և պահպանել է մեր ժողովրդական

եղանակները: Մեր նախնյաց կրթարանները վանքերն են եղել իրենց վանականներով. այստեղ ուսում և դպրություն են ստացել ոչ միայն եկեղեցու պաշտոնյաները, այլև արքայազուհիներ և հասարակ ժողովրդի որդիք: Վանքերն են պահել հնությունների և ձեռագրերի ժողովածուներ, որոնց ուսումնասիրությամբ հնարավոր է գաղափար կազմել մեր անցյալ կյանքի և պատմության մասին:

Ապա ուրեմն, հայ ժողովրդի հոգևոր հայրենիքը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին է: Միայն այս հայրենիքի վրա կարող ենք հոգևորապես աճել և զարգանալ: Մեր անցյալն ուրանալ չենք կարող, եթե տգիտության և միակողմանի հասկացողության թանձր մառախուղը չի նստել մեր հոգու վրա: Առաջադիմությունը շղթաների կապակցություն է. նոր օղակը պետք է կապվի հնի հետ և այդպես շարունակվի անընդհատ: Ով միշտ նոր է սկսում, հավիտյան սկզբնավորություն կմնա:

Եկեղեցին հոգևոր հայրենիք է անվանվում ոչ այն մտքով, որ նրանից դուրս կյանք և քաղաքակրթություն չկա: Քաղաքակրթությունն ընդհանրապես ավելի ընդարձակ գաղափար է, քան կրոնական և եկեղեցական քաղաքակրթությունը: Նյութականի հետ համեմատած քաղաքակրթությունը նույնպես բարիք է, բայց այն ինքըստինքյան նպատակ չի կարող. անցավորն ու երկրավորը պետք է ստորադասվի և պատվանդան դառնա բարոյական և հավիտենական գաղափարների համար: Քաղաքակրթության նպատակը պետք է լինի ճշմարտության, բարության և գեղեցկության մի նոր աշխարհի ստեղծել բնության մեջ: Այսպես հասկացված և մարդկային հոգու կենտրոնական երակի՝ կրոնի հետ կապված քաղաքակրթությունն Աստուծո օրհնությունն է:

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ (1907 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ

Հայաստանյայց Եկեղեցին 301 թվականից սկսյալ դարձավ համայն հայության անառիկ ամրոցը:

Հայություն և քրիստոնեություն, քրիստոնեություն և հայություն թափանցում են փոխադարձաբար իրար մեջ որպես մի ամբողջություն, միություն: Հայաստանյայց Եկեղեցու դերն ու արժեքը հասկանալու համար անհրաժեշտ է նրա ծագման ու զարգացման պատմությունը վերլուծել: Հայաստանում քրիստոնեության հաստատման հետ հոգևոր հզոր շարժում սկսվեց: Այդ շարժման հետևանքն էին հայ գրերի գյուտը, Աստվածաշնչի թարգմանությունը, հայերեն աստվածապաշտության ծագումն ու զարգացումը, Եկեղեցական հայրերի և մատենագիրների թարգմանությունը, հայկական երաժշտությունն ու արվեստը: Թարգմանվում են փիլիսոփայական, պատմական նշանակություն ունեցող գրքեր: Ստեղծվում են շարականներ, որոնք հանդիսանում են քրիստոնեական բանաստեղծության և աստվածապաշտության գրականության գոհարներ:

Հայ ճարտարապետական արվեստը, քրիստոնեական արվեստի ծագման և զարգացման հետ, կարևորագույն նշանակություն է ստացել և պատվավոր տեղ բռնել բյուզանդական, ռոմանական, գոթական ճարտարապետությունների կողքին ու մեծ նպաստ բերել համաշխարհային քրիստոնեական արվեստի զարգացմանը:

Բայց Հայ Եկեղեցու ամենամեծ արժանիքը, որ պետք է բարձրագույն գնահատության արժանանա, մեր ինքնապաշտպանությունը և դրա հետ կապված, ընդհանուր քրիստոնեության պաշտպանությունն է: Դեռևս նոր հաստատված և քրիստոնեությունն առաջինը պետական կրոն հռչակած հայերը պաշտպանել են քրիստոնեությունը՝ դառնալով և քրիստոնեության պաշտպանության համար պատերազմ մղած առաջին ազգը, մանավանդ պարսկական, արաբական և թուրքական կործանող հարվածների դեմ:

Ու՞ր են և ինչպիսի՞ վիճակի են հասել հին ասորական ու ղպտական եկեղեցիները, որոնք 4-5-րդ դարերում քրիստոնեական եկեղեցու փառքն էին կազմում: Բոլորովին անհետացել են կամ ամենախեղճ վիճակի են հասել: Իսկ Հայ Եկեղեցին պահպանել է իրեն, պահպանել է քրիստոնեությունը և քրիստոնեությամբ՝ հայ ժողովրդին է փրկել անհետացումից:

Հայ քրիստոնեությունը դիմացել է հրին ու սրին, դարերի ընթացքում անթիվ, անհամար զոհեր տալով և որ շատ կարևոր է, իր ինքնապաշտպանությամբ պաշտպանել է իրենից արևմուտք եղած քրիստոնեությունը: Հայ եկեղեցին եղել է այն պատմեշը, որ դիմացել է ամեն ինչ կլանող հոսանքների առջև: Հայ ժողովրդի ու հայ եկեղեցու պատմությունը ներշաղխված են իրար և անվերջ շղթաների, տանջալից մարտիրոսությունների, գերեվարությունների մի ահավոր էջ են կազմում մարդկային կյանքի պատմության, որ ուրիշ ոչ մի ազգի չի վիճակվել:

Ահա այսպիսի գնով մենք եկեղեցի ենք պահել՝ պաշտպանելով և ընդհանուր քրիստոնեությունը:

Թեև աղանդավորները բոլոր ժամանակներում արևմտյան երկրների հովանավորությամբ՝ հայ ժողովրդի հոգևոր միասնությունը ջլատելու և հայոց եկեղեցին թուլացնելու համար մեծամեծ գումարներ են ծախսել ու ջանք չեն խնայել, բայց այդուհանդերձ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին պահպանել է քրիստոնեությունն իր գիտակից ու հավատավոր զավակների արյունով և նահատակությամբ՝ առավել թանկ վճարելով հոգիների փրկության համար:

Ով հայոց եկեղեցու թերությունների ու բացթողումների մասին խոսում է առանց անցյալի դժվարին ու ծանր պայմանները նկատի ունենալու՝ ամենամեծ անարդարությունն է կատարում պատմության, ինչպես նաև Աստծու արդար դատաստանի առաջ: Այն եկեղեցին, որ զղջման մաքուր և խոր արտահայտություններ ունի, ինչպես մեր ապաշխարության հոգևոր երգերն ու շարականներն են, գթության այնպիսի ներկայացուցիչ՝ ինչպես Ներսես Մեծ կաթողիկոսն է, աղոթարար՝ ինչպես Գրիգոր Նարեկացին և քրիստոնեական լույսի, հույսի ու սիրո երգիչ՝ ինչպես Ներսես Շնորհալին, այնպիսի տաճարներ է կառուցել, ինչպես Ջվարթնոցն ու Անիի Մայր եկեղեցին, Հաղպատավանքն ու Ս. Հռիփսիմեի տաճարը, իրավունք ունի սպասելու լավագույն գնահատականի:

Մենք ուրախ ենք և հպարտ, որ ազգային եկեղեցի ունենք՝ հայ ժողովրդի ամենամեծ ստեղծագործությունը, որ դարերի պատմական և քաղաքական պայմանների մեջ ձև ու կերպարանք է ստացել, գործել ու նահատակվել՝ իր ժողովրդի

հոգևոր դեմքն ու Ավետարանից ստացած ժառանգությունը պահպանելու համար:

Թող միշտ վառ մնա այս գիտակցությունը մեր ողջ ժողովրդի մեջ:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԵՓՅԱՆ (1943 թ.)

ՎԱՐԴԱՆԱՆՔ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

«Վասն հաւատոյ և վասն հայրենեայց»

Օրինյալ է Տեր Աստվածն իմ,
որ ձեռքս վարժեցրեց պատերազմի և
մատներս՝ ճակատամարտի:

Սաղմոս 143 : 1

Ազգերի կյանքուն կան շրջաններ և երևույթներ, որոնք նշանակություն են ստանում դարերի համար և դառնում են նրանց պատմության առանցքը, գոյության էությունը: Հայ ազգի հոգեբանությունն ու անհատականությունն իր լինելիության պարզ ու գիտակցական ուղին վերջնականապես ձևավորել է ազգովին քրիստոնեության ընդունմամբ և հայ գրերի գյուտով: Հայ ժողովրդի ամենամեծ նվաճումն էր դա՝ ոտքի կանգնելու իբրև ազգ՝ իր հատուկ դեմքով, իր հոգեկան կյանքով, իր լեզվով, եկեղեցով ու մշակույթով, որ տևեց մինչև Ավարայրի ճակատամարտը և ավարտվեց նրա բարոյական հաղթանակով:

Ի՞նչ էր Վարդանանց պատերազմը, եթե ոչ պատասխան. հայը պիտի ապրի՞ իբրև ազգային միություն՝ իր առանձնահատուկ դեմքով, թե՞ պիտի ձուլվի, անհետանա իրենից մեծ ազգերի մեջ, ինչպես վտակը՝ մեծ գետերի մեջ:

Հայաստանին տիրելու համար պարսից նպատակն էր քաղաքականապես և կրոնապես ջլատել հայ ժողովրդին՝ արմատախիլ անել քրիստոնեությունը և հաստատել զրադաշտական կրոնը: Բայց փոքրաթիվ հայ ժողովուրդը Գրիգոր Լուսավորչի և Ներսես Մեծի, Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների հսկայական ջանքերի շնորհիվ ազգային հոգևոր վերածնության նոր ուղղություն և հոգևոր կյանքի նոր բովանդակություն էր ստացել:

Կազմակերպված հաստատություն էր դարձել Հայաստանյայց Եկեղեցին, հայն ուներ իր գիրն ու դպրությունը: Հայն իր մայրենի լեզվով կարող էր ըմպել քրիստոնեության զորավոր աղբյուրից: Այս վիճակին հասնելու համար մեկ ու կես դար՝ սկսած 301 թ.-ից, նախապատրաստական աշխատանք էր թափվել: Կերտվել էր ազգային գիտակցության շենքը. քաղաքականապես թույլ և նույնիսկ նախարարական տներով երկպառակված ժողովրդից ստեղծվել էր ազգային և հոգևոր զենքերով օժտված մի ժողովուրդ, որ պարսից հզոր արքաների սուրը պիտի բթանար և անկարող լիներ փշրել նրա բարոյական երկաթյա կամքը:

Վարդանանց պատերազմը հոգևոր ազատության ամենամեծ արժեքների՝ քրիստոնեության և Հայաստանյայց Եկեղեցու, հայ լեզվի, դպրության ու ազգային հոգևոր կյանքի անկախության պաշտպանությունն էր: Բարու պատերազմ էր դա՝ սկսված հոգևոր հայրերի կողմից և պաշտպանված զենքի զորությամբ: Բավական է հիշել, որ Վարդանը Ս. Սահակ Պարթևի թռն էր դստեր կողմից: Վարդանանց երևույթը հասականալու համար պետք է կարդալ Ղազար Փարպեցուն և Եղիշեին՝ տեսնելու համար, թե ինչ հոգի, բարոյական ինչպիսի հզոր կամք և ինքնապաշտպանական գիտակցական ուժ էր ծառայել պարսիկների դեմ:

Հայ հոգևորականությունը, հայ զինվորական և իշխանական դասը, հայ կինը և գյուղացին շնչում էին նույն հոգևոր ազատության գաղափարով. «Ո՞վ կարող էր հեռացնել մեզ Քրիստոսի սիրուց»:

Այսօր էլ նույն պատերազմն ունենք՝ ոչ զենքի, ոչ հալածանքի, այլ մի ուրիշ տեսակի ահավոր թշնամու դեմ, որ հավատափոխություն, հոգևոր երկպառակություն է կոչվում: Այսօր էլ մեր ազգի բոլոր հին ու նոր թշնամիները փորձում են ջլատել մեր հոգևոր միասնությունը, քանի որ քաջ գիտեն այն պարզ ճշմարտությունը, թե իր հավատքից, իր Մայր Եկեղեցուց, ազգային արժեքներից ու իր արմատներից հեռացած հայը որքան հեշտությամբ օտարի որս է դառնում: Այսօր զենքով չեն գալիս մեր վրա ու բռնությամբ չեն հավատափոխ անում: Այսօր ավելի նուրբ են գործում. Հիսուսի ու Ավետարանի անունն են գործածում: Սակայն մենք պիտի հստակորեն գիտակցենք, որ բոլոր տեսակի ավետարան-

չականներն ու հիսունականները, շաբաթապահներն ու սուտ վկաները մեր ազգի թշնամիների կամքն են կատարում: Նույն առաքելությամբ՝ վերացնել հայ ժողովրդի միջից ազգային գիտակցությունն ու ջլատել ազգը՝ փչացնելու աստիճան: Եվ մենք իրավունք չունենք մոռանալու, որ մեզ հավաքող ու միացնող միակ հոգևոր հաստատությունն ունենք, որի պաշտպանության համար դարեր շարունակ պայքարի էին ելել Վարդանանք, և դա Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին է իր քրիստոնեական և ազգային բովանդակությամբ:

Ամոթ է մեզ մոռանալ Վարդանանց դասերը ...

Վարդանանց պատերազմը այսօր էլ շարունակվում է ...

ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՒՏԱՎԱՅՐ

Ուխտագնացությունը երկրից դեպի Աստված հոգևոր ճանփորդություն է՝ միջնորդված սրբավայրերով: Այն կապված է սրբացած տեղի գաղափարի և դեպի այդ սրբավայրը ձգտելու մարդկային բնական զգացման հետ: Ուղղափառ պաշտամունքի մեջ սուրբ վայրեր են Սուրբերի գերեզմանները, հրաշագործ տաճարները, պատմական և կրոնական հիշարժան դեպքերի հետ կապ ունեցող տեղերը:

Ուխտագնացությունների միջոցով քրիստոնյան խորհրդական ու աղոթական հայեցողությամբ հաղորդվում է անցյալի սրբազան ժառանգության հետ և դրանով իսկ կապ հաստատում ապագայի հետ, քանզի առանց անցյալի հետ կենդանի կապի անիմաստ է ապագայի հետ շփում ստեղծելու փորձը:

Այսինքն ուխտավորը հավատքով և իմաստությամբ առլեցուն այն անձն է, որը քաջ գիտակցում է իր անկատարելությունն ու մեղանշականությունը և պահանջ է զգում Աստծու և սրբությունների հետ հաղորդակցվելով ոչ միայն հագեցնել իր հոգեկան ծարավը, իմաստավորել իր կյանքը, այլև զորություն ստանալ Սուրբ վայրից՝ դիմակայելու գալիք փորձություններին:

Ուխտավոր հավատացյալը մտքի և հոգու ներդաշնակությամբ, ինքն իր հետ հաշտ, Աստծուն տեսնելու ակնկալությամբ ու սպասումով պետք է ճանապարհ ելնի դեպի սրբավայր, քանզի նա պետք է բացի իր սիրտն Աստծու առջև և սկսի մտերմիկ զրույց՝ «ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծոյ»:

Ուստի, ուխտագնացությունը հայ մարդու անհատական կամ հավաքական կյանքի հոգևոր դաստիարակման լավագույն միջոցառումներից է, որը դեպի հոգևոր վերածնունդ տանող ճանապարհն է:

Չպետք է մոռացության մատնենք մեր ազգին հոգևոր հաջ պարզևող համազգային սուրբերին ու սրբավայրերը, քանզի մոռանալով նրանց՝ մենք մեզ ենք մատնում մոռացության: Զրկվել սուրբերի հետ հաղորդակցությունից և նրանց հրաշագործ ներկայությունից նշանակում է զրկել ինքներս մեզ և լքել մեր սրբություններն ու պատմությունը, որն աններելի է:

Լռովա մարզում իր զորությամբ և բուժականությամբ առավել հայտնի է Ս. Հովհան Օձնեցու դամբարան մատուռը Արդվի գյուղում:

Հայոց մեծ հայրապետ Հովհան Օձնեցին ծնվել է 650-ական թվականներին Օծուն գյուղում: Նա մեր պատմության մեծագույն հայրապետներից է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս է եղել 717-728 թթ.: Արաբական տիրապետության դժնդակ պայմաններում հայոց հայրապետը շնորհիվ իր հեռատեսության և հավասարակշռված քաղաքականության կարողացավ Հայաստանը փրկել թշնամական հարվածներից: Իր շուրջը համախմբելով իշխաններին ու եկեղեցականներին, Հովհան Օձնեցին անգիջում պայքար մղեց աղանդավորական շարժումների դեմ: Նրա ջանքերով կանոնակարգվեցին Հայ եկեղեցու դավանաբանական սկզբունքների համակարգը, տոները և ծեսերը: Կազմվեց և շրջանառության մեջ դրվեց «Կանոնագիրք հայոց»-ը, որ հնարավորություն տվեց հետագայում ավելի արդյունավետ բացահայտել Հայ եկեղեցու դավանական գծից շեղվողներին և ավելի գործուն պայքար ծավալել նրանց դեմ՝ չենթարկվելով տարաբնույթ աղանդների և հերձվածների ազդեցությանը:

Հայ եկեղեցու ազգայնացմանն ուղղված Օձնեցու ջանքերը մեծապես նպաստեցին հայ ժողովրդի աշխարհընկալման, ազգային ինքնագիտակցության ձևավորման և զարգացման գործին: Ձեռք բերելով ազգային բովանդակություն և մեկնաբանություն, քրիստոնեությունը ներծծվեց հայ մարդու հոգեբանության և ինքնագիտակցության մեջ, որն անցնելով դարավոր ճանապարհ, դարձավ ազգային հավաքական հոգեբանություն և ինքնագիտակցություն: «Հայ քրիստոնյա» արտահայտությունը քրիստոնեության ազգայնացման լավագույն դրսևորումներից մեկն է:

728 թ. Հովհան Օձնեցին առանձնանում է, ճգնում իր հայրենի գյուղից ոչ հեռու Արդվի գյուղի մոտ: Օձնեցու մահից հետո նույն տեղում էլ ամփոփվում է նրա մարմինը: Նրա շիրիմը դարեր շարունակ եղել է և այսօր էլ մնում է ուխտագնացության և հոգեկան հաղորդության սրբազան վայր:

ԽՐԱՏԱԿԱՆ ՊԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Ահա թե ինչ է խրատում այդ մասին 5-րդ դարում Յովհան Մանդակունի կաթողիկոսը:

Քանզի հույժ կարևոր է պահքի պնդությունը մեր բնության համար և շատ թերություններ շտկվում են պահքի խոնարհությամբ: Արդեն իսկ մարդուն ստեղծելիս Աստված պահքի պատվիրանով պարսպեց մեր բնությունը և առաջին մարդուն որպես առաջին պատվիրան դրախտում տվեց պահքի պատվիրանը՝ չճաշակել չարի և բարու գիտության ծառից: Քանզի եթե Ադամը պահեր պահքի պատվիրանը, կժառանգեր անախտ, անմահ և անմեղ կյանքը և երկնքում՝ երկնային բարիքները, քանզի շատերը, ովքեր պահեցին պահքի պատվիրանը, փրկվեցին բազում վշտերից: Իսկ ովքեր հեռացան պահքից, հեռացան Աստծու շնորհներից և բազում չարիքներով չարչարվեցին: Եվ բոլորը, ովքեր արհամարհեցին պահքը, արհամարհվեցին Աստծուց և Նրա ողորմությունից հեռացան:

Եվ եթե նույնիսկ կերակուրներով պարկեշտանա, իսկ մյուս անդամներով չպահի, զուր և ունայն է ջանում: Այս է, որ ասում են, որ եթե լեզուն չպարկեշտացնի, աչքի, ունկի, խորհուրդների և մտքերի համար չզգուշանա, ընկերոջ նկատմամբ ոխ պահի, եղբոր հանդեպ ատելություն կամ մեկի նկատմամբ կեղծավորությամբ սեր ցույց տա կամ խոնարհությամբ ընկերոջը չծառայի, պատիվ և իշխանություն ցանկանա և կարծի, թե իր անձը պահքի մեջ է, այնպիսին հույժ մոլորված կլինի սատանայի կողմից: Քանզի այն ոչ թե խոնարհության պահք է, այլ՝ խաբեության և կեղծավորության և ոչ մի օգուտ չստացավ այնպիսի պահքից, այլ հույժ պատժի և պատուհասի արժանացավ:

Այլև պահք է անվանվում ոչ թե կերակուրներից ժուժկալելը, այլև խուսափելն ամեն տեսակ մեղքերից, քանզի պահք է նաև բերանի լռությունը և ոչ առանց հարկի և մեկի հարցնելու խոսելը: Պահք է նաև խոնարհությամբ տեղում նստելը և փուչ մեկի պես ցոփությամբ չըրջելը՝ թափառելով և դրամաշորթությամբ: Պահք է նաև աչքերն արատությունից,

լսելիքը՝ անդեպ լսելուց և սիրտը՝ պիղծ խորհուրդներից զերծ պահելը: Պահք է նաև չընկերանալը պատվի և իշխանության համար, չբարկանալը, չաղաղակելը, չնախանձելը, վրեժխնդիր չլինելը և չջանալ սեփական անձն ընկերոջ մոտ արդարացնելը: Պահք է ազահություն չանելը, չմարդահաճոյանալը և հանդերձով սնապարծ չլինելը: Պահք է նաև խոնարհությունը, հնազանդությունը և սուրբ սրտով բոլորին սիրելը: Պահք է նաև, երբ բնական քնի կարիքը միայն սպառի և ցանկության քուն չունենա:

Նաև, մանավանդ, պահք է՝ պահքի օրերին ինչ արգելում ես որովայնիցդ, այն աղքատներին ընծեռել, քանզի դու պիտի քաղցես և քաղցածը հագեճա և քո մեղքը քավվի:

Այս է Սուրբ և աստվածահաճո պահքը:

ԱՂԱՆԴ, ՀԵՐԶՎԱԾ ԵՎ ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՈՒՆ

Աղանդ, հերձված և հերետիկոսություն. այս երեք շարժումներն էլ եղել են թե անցյալում և թե մեր օրերում: Նրանք առաջացել են հատկապես այն երկրներում, որտեղ քաղաքական, տնտեսական և կրոնական անկայուն վիճակ է տիրել: Սրանցից յուրաքանչյուրն իր առաջացման, ծագման և զարգացման պատճառն ու նախապատմությունն ունի: Հարկ է նշել, որ այս շարժումները կրոնական քարոզչություն երանգով հետապնդում են նաև որոշակի քաղաքական նպատակներ: Ուստի հարկ է յուրաքանչյուրի մասին առանձին խոսել:

ԱՂԱՆԴ

Քրիստոսի Մեկ և Միակ Եկեղեցու պաշտոնական դավանանքին հակասող ուսմունք դավանող և քարոզող, հաճախ նաև ուղղակի ընդդեմ Եկեղեցու հանդես եկող մարդկանց այն խումբը, որի խզումը Եկեղեցու հետ և բաժանումը նրանից արդեն իսկ կատարված իրողություն է, կոչվում է աղանդ կամ աղանդավորական շարժում:

Աղանդները նույնքան հին են, որքան Եկեղեցին՝ այսինքն նրանց գոյությունը պայմանավորված է եղել Եկեղեցու գոյությամբ, մշտապես սնվելով և խեղելով Նրա ուղղափառ դրույթները: Մերօրյա աղանդները, սակայն, հիմնականում ծագել են արևմտյան երկրներում և Արևելք են թափանցել այնտեղից ժԹ դարի երկրորդ կեսին և Ի դարի սկզբին :

Վերջին շրջանի աղանդներն աչքի են ընկնում իրենց ծայրահեղ հարձակողականությամբ և այլատյաց անհանդուրժողականությամբ: Այդ իսկ պատճառով դրանք հաճախ անվանվում են նաև տոտալիտար աղանդներ:

Աղանդները գրեթե անխտիր հիմնվել են Եկեղեցուց բաժանված որևէ «գործչի» կամ անհատի կողմից, որն ինքն իրեն հայտարարել է միակ ճշմարիտ ուսուցիչ ու հավատացյալ: Սա աղանդավորական խմբի ծագման հիմնական մեխանիզմն է:

Այս առումով հստակ է, որ այսօր աղանդներ կարելի է միանշանակ կերպով համարել հոգեգալստականներին, աղվենտիստներին, մորմոններին (որոնք իրենց կոչում են նաև Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի Եկեղեցի), մունականներին, Եհովայի վկաներին, սայենտոլոգներին, անտրոպոսֆներին և այլն:

ՅԵՐՉՎԱԾ

Ի տարբերություն աղանդի, հերձված է կոչվում Եկեղեցու մեջ տեղի ունեցած խզումն ու բաժանումը, երբ Եկեղեցու որևէ մեկ հատված բաժանվում է մնացյալ հատվածից՝ մեծ մասամբ վարչական և երբեմն միայն աստվածաբանական տարածայնությունների պատճառով: Այդ իմաստով յուրաքանչյուր հերձվածի հետևանքը Եկեղեցու մասնատումն է:

Քրիստոսի Եկեղեցին իր պատմության ընթացքում ենթարկվել է երեք խոշոր մասնատումների: Առաջին մեծ բաժանումը տեղի է ունեցել 451 թվականին՝ Քաղկեդոնի ժողովից հետո, երբ առաջացան Արևմտյան և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները: Երկրորդը 1054 թվականին էր, երբ ծնվեցին Կաթոլիկ և Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքները, իսկ վերջինը՝ Բողոքականության ծնունդն էր՝ Կաթոլիկ

Եկեղեցու ծոցում, ժՁ դարում: Այդպես առաջացան քրիստոնեության չորս մեծ ընտանիքները՝ Ուղղափառ (Արևելյան և Արևմտյան), Կաթոլիկ և Բողոքական:

Տիեզերական Եկեղեցում տեղի ունեցած հերձվածների պատճառով վերջին երկու դարերում տուժեց նաև Հայ Եկեղեցին, որը մինչ այդ մեծ զրկանքների գնով կարողացել էր պահպանել իր նախնական պարզությունն ու ամբողջականությունը: Սակայն ժԸ դարում կաթոլիկ միսիոներների քարոզչության հետևանքով որոշ հավատացյալներ հեռացան Հայ Եկեղեցուց և հաղորդության մեջ մտան Կաթոլիկ Եկեղեցու հետ՝ ստեղծելով Կաթոլիկե Հայերի հարանվանությունը, իսկ ժԹ դարում, այս անգամ արդեն բողոքական քարոզիչների ջանքերով, որոշ հայորդիներ ընկան Բողոքական շարժման ազդեցության տակ, հինք դնելով մի նոր հարանվանության: Հատկանշական է, որ վերջինս 150 տարվա պատմություն ունի և իր ձևի ու բովանդակության մեջ լինելով մի մասնաճյուղը ընդհանուր բողոքական շարժման կոչվել է բողոքական, փրոտեստանտ, ավետարանական կամ ավետարանչական և, որն այսօր ինքն իրեն անվանում է Հայ Ավետարանական Եկեղեցի:

ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ

Հերետիկոսությունը Եկեղեցու ծոցում ծնված և գոյություն ունեցող, սակայն Եկեղեցու դավանությանն անհամապատասխան այն ուսմունքն է, որը չի վերածվում աղանդի կամ հերձվածի, այլ շարունակում է իր գոյությունը Եկեղեցու ներսում: Այդպիսի պարագային Եկեղեցին ստիպված է քարոզչական պայքար մղել այդ ուսուցման դեմ՝ տիեզերական կամ տեղական ժողովներում ընդունված համապատասխան կանոններով:

Երբեմն հերետիկոսությունը հնարավոր է լինում բուժել, իսկ երբեմն էլ հերետիկոսությունն ի վերջո առաջնորդում է բաժանման և վերածվում աղանդի:
